

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ, ПОЛИТОЛОГИЯ

BULLETIN OF YEREVAN UNIVERSITY
INTERNATIONAL RELATIONS, POLITICAL SCIENCE

ՀՍՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ
SOCIAL SCIENCES

№ 3 (18)

ԵՐԵՎԱՆ - 2015

«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»

«БАНБЕР ЕРЕВАНИ АМАЛСАРАНИ.
МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ, ПОЛИТОЛОГИЯ»

«BANBER YEREVANI HAMALSARANI.
INTERNATIONAL RELATIONS, POLITICAL SCIENCE»

Գլխավոր խմբագիր՝ Միրզոյան Հ. Ղ.

Խմբագրական խորհուրդ.

Ագլյան Վ. Ռ., Ալեքսանյան Ա. Ս. (*պատասխ. խմբագիր*), Ավետիսյան Լ. Վ. (*գլխ. խմբագրի տեղակալ*), Բայբուրդյան Վ. Ա., Գոնչար Ն. Ա. (*գլխ. խմբագրի տեղակալ*), Ենգոյան Ա. Փ., Հովակիմյան Ա. Է. (*պատասխ. քարտուղար*), Պետրոսյան Գ. Հ., Սաֆարյան Ա. Վ., Սիմոնյան Ա. Հ., Վարդազարյան Մ. Ե., Վարդանյան Լ. Գ., Քեոյան Գ. Ս.

Главный редактор: **Мирзоян Г. К.**

Редакционная коллегия:

Аветисян Л. В. (*зам. главного редактора*), **Агмян В. Р.**, **Алексамян А. С.** (*ответ. редактор*), **Байбурдян В. А.**, **Варданян Л. Г.**, **Вардазарян М. Е.**, **Гончар Н. А.** (*зам. главного редактора*), **Енгоян А. П.**, **Керян Г. М.**, **Овакимян А. Э.** (*ответ. секретарь*), **Петросян Г. А.**, **Сафарян А. В.**, **Симонян А. Г.**

Editor-in-chief: **Mirzoyan H. Gh.**

Editorial Board:

Aglyan V. R., **Aleksanyan A. S.** (*Managing Editor*), **Avetisyan L. V.** (*Deputy editor-in-chief*), **Bayburdyan V. A.**, **Gonchar N. A.** (*Deputy editor-in-chief*), **Hovakimyan A. E.** (*Executive Secretary*), **Keryan G. M.**, **Petrosyan G. H.**, **Safaryan A. V.**, **Simonyan A. H.**, **Vardanyan L. G.**, **Vardazaryan M. E.**, **Yengoyan A. P.**

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՌԴ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

ՄԱՐՈՒԹ ՎԱՐԴԱԶԱՐՑԱՆ

Արտաքին քաղաքականության ռեսուրսը պետության ներուժը կազմող տարբեր գործոնների ամբողջությունն է: Աշխարհագրական, ժողովրդագրական, տնտեսական, ռազմական ռեսուրսների կողքին այսօր կարևոր դեր են կատարում քաղաքական, գաղափարական, մշակութային, տեղեկատվական, գիտատեխնիկական և կրթական ռեսուրսները, որոնք միջազգային թատերաբեմում արդյունավետ քաղաքականություն վարելու կարևոր գործոն են:

Գլոբալացման և տեղեկատվական հեղափոխության դարաշրջանում ուրույն կարևորություն ստացավ արտաքին քաղաքականության ոչ նյութական ռեսուրսների օգտագործումը: Դրան նպաստում է նաև Արևմուտքի առաջատար երկրների կողմից «փափուկ ուժի» կիրառումը, որի բաղկացուցիչ մասերն են մշակույթը, գաղափարախոսությունը և դիվանագիտությունը: Արտաքին քաղաքականության ռեսուրսները կարևոր գործոն կարող են դառնալ միայն քաղաքական անհրաժեշտ կամքի և քաղաքական էլիտայի կազմակերպչական ռեսուրսի առկայության դեպքում:

Ռուսական քաղաքական էլիտան բավական անարդյունավետ է օգտագործում երկրի ռեսուրսները: Եթե որոշ մասնագետների հաշվարկներով արդյունավետ է կիրառվում նյութական ռեսուրսների 50 %-ը, ապա ոչ նյութական ռեսուրսների օգտագործման օգտակար գործողության գործակիցն անհամեմատ ավելի փոքր է: Պատահական չէ, որ «Մինչև 2020 թ. ՌԴ ազգային անվտանգության ռազմավարությունում» ոչ նյութական ռեսուրսների ներուժը նույնիսկ չի հաշվարկվում¹:

ՌԴ-ն ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հինգ մշտական անդամներից մեկն է, որն ունի «վետոյի» իրավունք: Այն նաև ԵԱՀԿ անդամ է, որի գործառույթների մի մասը փորձում են «սեփականաշնորհել» ՆԱՏՕ-ն և ԵՄ-ն, որտեղ Ռուսաստանը ընդգրկված չէ: Այդ միտումը թուլացնում է

¹ Ст' у «Полное использование национальных ресурсов как важнейшее условие реализации национальной стратегии опережающего развития: "забытые" ресурсы и возможности» [http:// viper-son.ru/articles/5-polnoe-ispolzovanie-natsionalnyh-resursov-1-kak-vazhneyshee-uslovie-realizatsii-na-tSIONALNOY-strategii-operezhayuschego-razvitiya-zabytye-resursy-i-vozmozhnosti](http://viper-son.ru/articles/5-polnoe-ispolzovanie-natsionalnyh-resursov-1-kak-vazhneyshee-uslovie-realizatsii-na-tSIONALNOY-strategii-operezhayuschego-razvitiya-zabytye-resursy-i-vozmozhnosti)

Մոսկվայի քաղաքական ռեսուրսները: ՌԴ-ն ընդգրկված է նաև Եվրոպայի խորհրդում և Ասիական-խաղաղօվկիանոսյան տնտեսական համագործակցությունում, իսկ 2002 թվականից այն նաև ոչ պաշտոնական բնույթ ունեցող, սակայն ազդեցիկ «Մեծ ութնյակի» անդամ է, (այժմ նրա մասնակցությունը սառեցված է ուկրաինական իրադարձությունների պատճառով): Ռուսաստանը ընդգրկված է նաև ՀԱՊԿ, Շանհայի, Իսլամական համերաշխության կազմակերպություններում: ՌԴ-ն իր քաղաքական ազդեցությունը պահպանում է՝ մասնակցելով տարածաշրջանային հակամարտությունների, սպառազինությունների վերահսկողության, անդրազգային ահաբեկչության, միջազգային էներգետիկայի, շրջակա միջավայրի պահպանման վերաբերյալ հիմնախնդիրների լուծման գործընթացներին: Այս տեսանկյունից որպես ՌԴ արտաքին քաղաքական ռեսուրս կարևորվում է Ռուսաստանի մասնակցությունը միջազգային միջկառավարական կազմակերպություններին, ռուսաստանյան ոչ կառավարական կազմակերպությունների ազդեցության ընդլայնումը, ինչպես նաև նրա դաշնակիցների ներուժի օգտագործումը և հակառակորդների ոչ ցանկալի քայլերի կանխարգելումը:

Ի տարբերություն ԽՍՀՄ-ի՝ Ռուսաստանը ներկայումս չի կարող լայնորեն օգտագործել իր դաշնակիցների ռեսուրսները: ՌԴ-ն առաջատար երկիր է համարվում ԱՊՀ-ում, ՀԱՊԿ-ում և Եվրասիական տնտեսական միությունում, բայց տարածաշրջանում գործող այս կազմակերպություններում Մոսկվային առայժմ չի հաջողվել լիովին հաղթահարել առկա հակասությունները և լիարժեք բովանդակություն հաղորդել ինտեգրացիոն գործընթացներին: ԱՊՀ տարածքում թուլացավ ինտեգրացիայի հեռանկարը, Բելառուսի հետ չստեղծվեց իրական միութենական դաշինք, հարաբերությունները լարվեցին հատկապես Վրաստանի և Ուկրաինայի հետ: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ԱՊՀ-ի ձևավորումը Մոսկվան որակեց որպես «քաղաքակիրթ բաժանվելու արարողակարգ»:

ՌԴ-ի դեմ կիրառվող պատժամիջոցները ոչ միայն նվազեցնում են նրա տնտեսական հնարավորությունները, այլև երկրի քաղաքական լանդշաֆտում թուլացնում են ազատական ու արևմտամետ ուժերի դիրքերը և մեծացնում նեոպահպանողականների ազդեցությունը, որոնք իրենց ռազմավարությունը մշակում են ըստ «Ռուսաստանը՝ պաշարված կղզի» հայեցակարգի:

Պետության արտաքին քաղաքականության կարևոր ռեսուրսներից են գաղափարախոսությունը և մշակույթը: 20-րդ դարում գաղափարախոսության և միջազգային հարաբերությունների փոխադարձ կապը ընկալվում էր որպես պայքար բուրժուական ժողովրդավարության և դասակարգային դիկտատուրայի, լիբերալիզմի և կոմունիզմի միջև: Սառը պատերազմի շրջանում երկու հակամարտ բլոկների միջև պայքարի հիմնական բնագավառներից մեկը գաղափարախոսականն

էր: Այս ոլորտում ԽՍՀՄ-ի փորձը վկայում է, թե արտաքին քաղաքականության ինչպիսի հզոր ռեսուրս է գաղափարախոսությունը:

Եթե նախկինում ԽՍՀՄ-ը զինված էր կոմունիստական (սոցիալական արդարության) գաղափարախոսությամբ և ուներ իր համախոհները, ապա ժամանակակից Ռուսաստանը դեռևս չունի հստակորեն ձևավորված գաղափարախոսություն: Ռուս պատմաբան, ակադեմիկոս Է. Ա. Պոզդնյակովը գտնում է, որ հասարակության ու պետության բնույթով պայմանավորված՝ քաղաքականության և գաղափարախոսության փոխհարաբերությունը դրսևորվում է երեք ձևով. 1) գաղափարախոսությունը՝ որպես քաղաքականության միջոց, 2) քաղաքականությունը՝ որպես գաղափարախոսության միջոց, 3) գաղափարախոսությունը՝ որպես պրակտիկ քաղաքականության հիմնավորման և արդարացման գաղափարական-տեսական հիմք²:

Ռուսաստանը կարելի է դասել աշխարհի այն երկրների շարքին, որոնց համար պատմության շարժիչը կրոնական և գաղափարական դրույթներն ու կողմնորոշիչներն են: Նախորդ դարում ԽՍՀՄ-ին հաջողվեց սոցիալիզմի գաղափարաբանության շնորհիվ վերականգնել Առաջին աշխարհամարտի և քաղաքացիական պատերազմի հետևանքով քայքայված իր տնտեսությունը, հաղթել աշխարհի ամենահզոր երկրներից մեկին՝ Գերմանիային, և ավելի քան 40 տարի լինել աշխարհի երկրորդ գերտերությունը:

Միջազգային հարաբերությունների վերջին զարգացումները ՌԴ-ի համար առավել ևս հրատապ են դարձնում նոր հայեցակարգային-գաղափարական հենքի ստեղծումը, առանց որի չեն կարող արդյունավետ լինել ո՛չ ներքին և ո՛չ էլ արտաքին քաղաքականությունը, ո՛չ էլ երկրի արդիականացումը: Այդ գաղափարախոսությունը պետք է ներառի հայրենասիրություն, սոցիալական արդարություն և հոգևոր բարձր արժեքներ:

Այսօր Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը գաղափարայնացման աստիճանով զիջում է Արևմուտքին: Ամերիկյան իր արտաքին քաղաքականությունն իրականացնում է ելնելով ժողովրդավարության տարածման նեոպահպանողական հայեցակարգից՝ նկատի ունենալով նաև այդ հարցում իրենց յուրահատուկ առաքելությունը, իսկ ԵՄ-ը հիմք է ընդունում «Եվրոպական արժեքների» գոտու ընդլայնման առաջնահերթության սկզբունքը:

Ռուսական իշխանությունները չունեն գաղափարական նման ուղղվածություն: Անկախության ավելի քան քսանչորս տարիների ընթացքում ՌԴ-ում իրականացված բոլոր բարենորոգումները ցանկալի արդյունք չտվեցին: Սկզբում անհաջողություն կրեց լիբերալ գաղափարախոսությունը, այնուհետև՝ «ավտորիտար արդիականացման» մոդելը:

² Ск' u Поздняков Э. А. Философия политики. М., 2014, էջ 234:

Շրջանառության մեջ դրված «Հգոր Ռուսաստանի» գաղափարը կարող էր համախմբել ռուսաստանյան հասարակությանը, սակայն գործնականում արտաքին քաղաքականության համար օգտակար և հրապուրիչ չէր կարող լինել՝ ի տարբերություն ինտերնացիոնալ բնույթի լիբերալ և կոմունիստական գաղափարախոսության կամ տարբեր կրոնների:

Հարկ է նշել, որ նույնիսկ Արևմուտքի հետ ամենասերտ համագործակցության շրջանում այն չունեի գաղափարական հիմքեր: Նոր իրավիճակում ՌԴ իշխանությունները ասես մոլորվել են «տարածության և ժամանակի» մեջ: Հետազոտողների մի մասը գտնում է, որ Վ. Պուտինը իր երրորդ նախագահության շրջանում «որդեգրել է նեոպահպանողականությունը»³, մյուս մասը նշում է երկրի «առանձնահատուկ զարգացման» մասին (ընդ որում՝ այստեղ ևս չկա միասնություն)⁴, մյուս հատվածը կողմնակից է զարգացման եվրասիական ուղուն⁵:

Արդի շրջանին համահունչ գաղափարախոսություն մշակելուն խանգարում են մի քանի «խուրթեր»: Արևմուտքի կոշտ քաղաքականության և արգելամիջոցների առկայության պայմաններում Ռուսաստանի սահմանների երկարությամբ լարվածության ուժեղացումը համակողմանի պահանջում է իրավիճակի ճիշտ վերլուծություն և նոր կողմնորոշումներ: Ռուսական քաղաքական էլիտայի շրջանում առկա շփոթվածությունը կարող է հանգեցնել սխալ ծրագրավորման և իր համար անհասկանալի ու թշնամական շրջապատից առանձնանալու ձգտման, ինչպես նաև ծառացած հարցերի պատասխանները անցյալում փնտրելու փորձերի՝ սառը պատերազմի տրամաբանությամբ: Տվյալ դեպքում այն կլինի ոչ թե գիտակցված, այլ զգացական ընտրություն: Արտաքին քաղաքականության իրականացման միջոցների և ուղիների ընտրությունը սուբյեկտիվ բնույթ ունի, քանի որ կախված է քաղաքական էլիտայի որդեգրած գաղափարական-քաղաքական դիրքորոշումից և արժեքային համակարգից:

Պետության արտաքին քաղաքականության կարևոր ռեսուրս է նաև մշակույթը: Մարդկության պատմությունը վկայում է, որ պետության ազդեցության տարածման գործընթացում մշակույթի դերը էական է: Կարող ենք ասել, որ մշակույթը հեռանկարային առումով նույնիսկ գերազանցում է տնտեսական գործոնի ներուժը: Արևմուտքը և հատկապես ԱՄՆ-ը ներկայումս իրենց ազդեցությունը ամրապնդելու համար լիարժեք իրականացնում են մշակութային էքսպանսիա: Ժամանակակից աշխարհում պետության հեղինակությունը և ազդեցությունը ուղիղ համեմատական են նրա մշակութային ներուժին: Մշակույթ ասելով նախ և ա-

³ Романова Т. А. О неоклассическом реализме и современной России // www.globalaffairs.ru/number/0-neoklassicheskom-realizme-i-sovremennoi-Rossii-15590

⁴ Տե՛ս «Идеология "особого пути" в России и Германии: истоки, содержание, последствия»: [сб.ст.] / Kennan institute: под ред. Э. А. Паина. М., 2010, էջ 159:

⁵ Տե՛ս Подберезкин А. И. Евразия и Россия. М., 2014, էջ 86:

ռաջ պետք է հասկանալ տվյալ երկրի անհատի ստեղծագործական ներուժը և կենսափորձը, մշակութային և նյութական արտադրանքը: Ռուսաստանն այսօր հավակնում է մեծացնել իր դերակատարումը աշխարհում, իսկ այն իրականացնել հնարավոր չէ առանց մշակութային ազդեցության, միջազգային վարքի բարոյական նորմերի պահպանման, ինչպես նաև արժեքային գրավիչ համակարգի: Անհրաժեշտ է ընդգծել, որ այդ նորմերը, մշակութային արժեքները քարոզելու և տարածելու համար անհրաժեշտ է նաև քաղաքական կամք և ռեսուրսներ:

ՌԴ-ի համար արտաքին մշակութային քաղաքականության իրականացման կարևոր միջոց է ռուսաց լեզվի դիրքերի պահպանումը: Միջազգային որոշ կազմակերպությունների տվյալների համաձայն՝ աշխարհում ներկայումս ռուսերեն հաղորդակցվում է 233 մլն մարդ, որոնցից 164 մլն-ի համար այն մայրենի լեզու է, իսկ 69 մլն-ի համար՝ հաղորդակցման լեզու: ՌԴ-ում ռուսերենը մայրենի լեզու է 119 մլն-ի համար, իսկ հաղորդակցման երկրորդ լեզու՝ 27,1 մլն-ի: Այսպիսով, ռուսաց լեզուն օգտագործողների 37%-ը ապրում է ՌԴ-ից դուրս⁶: Ռուսական մշակույթի դոմինանտությունը կարելի է պահպանել այս շրջանակներում: Ռուս որոշ փորձագետներ գտնում են, որ Ռուսական կայսրության և խորհրդային շրջանում մի քանի սերունդների կուտակած մշակութային և լեզվական ռեսուրսներն արդեն սպառվել են:

2000 թ. հրապարակվեցին «Ռուսաստանի արտաքին մշակութային քաղաքականությունը-2000 թվական»⁷, 2004 թ.՝ «Արտասահմանյան երկրների հետ Ռուսաստանի մշակութային կապերի զարգացման ուղղությամբ Ռուսաստանի ԱԳՆ-ի աշխատանքների հիմնական ուղղությունները»⁸ հայեցակարգերը: Այս որոշումներից հետո իրավիճակը առանձնապես չփոխվեց, քանի որ եթե ավելի իրատես լինենք, ապա ցանկացած խոշոր երկրի պետական լեզվի տարածվածության ազդեցությունը ուղիղ համեմատական է նրա սոցիալ-տնտեսական, քաղաքական, գիտական և մշակութային ներուժին: Պատահական չէ, որ Դավոսում գումարված համաշխարհային համաժողովում անգլերենին գուզահեռ արդեն աշխատանքային լեզու է չինարենը: Կարծում ենք, որ ՌԴ միջազգային դիրքերի ամրապնդումը, տնտեսական և տարածաշրջանային ինտեգրացիոն ծրագրերի իրականացման հաջողությունները կրկին կվերականգնեն ռուսաց լեզվի դիրքերը:

Արտաքին քաղաքականությունում տեղեկատվական ռեսուրսների դերը մեծացավ հատկապես գլոբալացման դարաշրջանում: Տեղեկա-

⁶ Ст' у «Геополитический потенциал Русского мира (почему язык снова становится надеждой и опорой)» // <http://rulit.org/read/315>

⁷ Тезисы «Внешняя культурная политика-2000» // "Дипломатический вестник", 2000, № 4, с. 76-84.

⁸ «Основные направления работы МИД России по развитию культурных связей России с зарубежными странами» // <http://www.mid.ru>

տվական տեխնոլոգիաներ կիրառող պետությունները մյուսների համեմատությամբ շահեկան վիճակում են, որովհետև հնարավորություն ունեն առկա տեղեկությունը վերամշակելու և համաշխարհային հանրությանը այն իրենց տեսանկյունից ներկայացնելու:

Ձ. Նայը նշում է, որ տեղեկատվական հեղափոխության որոշ գործոններ օգնում են փոքր պետություններին, իսկ մյուսները՝ խոշոր և ազդեցիկ պետություններին: Եթե արդեն ստեղծված տեղեկատվության տարածումը մեծ ծախսեր չի պահանջում, ապա նոր տեղեկատվություն հավաքելը և արտադրելը ենթադրում են խոշոր ներդրումներ⁹:

ՌԴ ղեկավարությունը երկար ժամանակ չէր կարևորում տեղեկատվական ռեսուրսները, ուստի ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, երբ Ռուսաստանը գտնվում էր «լիբերալ էյֆորիայի» մեջ, նրա մասին պատկերացումները հիմնականում ձևավորվում էին արևմտյան էլեկտրոնային և տպագիր լրատվական միջոցների ազդեցությամբ: Այսպես ստեղծվեց 1990-ական թվականների «կիսաբռնապետական, կրիմինալ, ցածր մշակույթ ունեցող և անկանխատեսելի» Ռուսաստանի մասին պատկերացումը: Այս բացթողումը Կրեմլը զգաց հատկապես չեչենական առաջին պատերազմի ընթացքում, երբ ահաբեկչության դեմ ձեռնարկված գործողությունները ներկայացվում էին միակողմանի, որն էլ հանգեցրեց ՌԴ-ի վարկի շեշտակի անկմանը: Մոսկվայի համար ակնհայտ դարձավ, որ երկրի նկարագիրը ոչ միայն ինքնաբերաբար չի ձևավորվում, այլև «պարտադրվում է»: Երբեմն միջպետական հարաբերությունները կառուցվում են ոչ թե իրական քաղաքական իրավիճակի, այլ գործընկեր պետություններում ձևավորված պատկերացումների հիման վրա: Մոսկվան, այնուամենայնիվ, բավական ուշացումով ձեռնարկեց համապատասխան քայլեր. 2009 թ. մայիսին ՌԴ նախագահի աշխատակազմում ստեղծվեց ոչ պաշտոնական հանձնաժողով, որի աշխատանքները ղեկավարում էին ՌԴ նախագահի աշխատակազմի ղեկավարն ու նրա տեղակալը: Հանձնաժողովի կազմում ի պաշտոնե ընդգրկված էին նաև արտգործնախարարը և միջազգային հարցերի գծով նախագահի օգնականը: Հանձնաժողովի առջև խնդիր դրվեց քայլեր մշակել երկրի միջազգային իմիջի բարելավման ուղղությամբ, ինչպես նաև տվյալ բնագավառում հակազդել ու կանխել բացասական գործընթացները¹⁰:

Տեղեկատվական դիվանագիտությունը հատկապես ակտիվացավ վրաց-ռուսական պատերազմի և ուկրաինական իրադարձությունների ժամանակ, որի ծայրահեղ դրսևորումը սկիզբ առած տեղեկատվական պատերազմներն են: Ի տարբերություն 1990-ական թվականների՝ այս

⁹ Տե՛ս **Най, Джозеф С.** (младший). Будущее власти. М., 2010, էջ 200-201:

¹⁰ Տե՛ս **Сайфуллаев Д. Б.** Информационное обеспечение внешней политики государства: Сравнительный анализ опыта России и США // <http://vestnik.pags.ru/vestnik/archiv40/Sayfullaev.pdf>

անգամ Ռուսաստանը ձեռնարկեց համապատասխան քայլեր: Արտասահմանյան երկրներում ՌԴ-ի վերաբերյալ դրական պատկերացում ապահովելու, հասարակական համապատասխան կարծիք ձևավորելու համար ստեղծվեցին արբանյակային մի շարք հեռուստատարնկերություններ, իսկ 2005 թ.՝ «Russia Today» հեռուստաալիքը, ինչպես նաև «Russia Profile» ամսագիրը¹¹:

Եթե ԱՄՆ-ը, օգտագործելով իր տեղեկատվական ռեսուրսները, ուժեղացնում է իր դիվանագիտության արդյունավետությունը և փորձում հրապուրիչ դարձնել ամերիկյան ժողովրդավարությունն ու շուկայական ազատ տնտեսական հարաբերությունները, ապա ՌԴ-ն, ԱՄՆ-ին զիջելով իր տեղեկատվական ռեսուրսներով, փորձում է աշխարհին ներկայանալ որպես նեոպահպանողականության, ավանդական արժեքները կրող հասարակություն, միջազգային ասպարեզում իրավահավասար հարաբերությունների ձգտող ու միջազգային նորմերը հարգող պետություն: Այսօր Մոսկվայի կարևոր խնդիրն է օգտագործել իր տեղեկատվական ռեսուրսները ԱՄՆ-ի և հատկապես ԵՄ ազդեցիկ երկրների հետ երկխոսելու, ԲՆԻԿՍ-ի, Շանհայի համագործակցության կազմակերպության և Եվրասիական միության աջակցությունը ստանալու համար: Մյուս կարևոր խնդիրը ռուս-ուկրաինական հարաբերությունների բարելավումն է և թշնամական դիրք գրաված ուժերի չեզոքացումը: Նոր տեխնոլոգիաները հնարավորություն են ընձեռում ուղիղ կապ հաստատելու տարբեր երկրներում գտնվող այն ուժերի հետ, որոնք համաձայն չեն իրենց կառավարությունների որդեգրած հակառուսական քաղաքականությանը:

Մոսկվայի ամենակարևոր բացթողումներից է հատկապես ԱՊՀ հանրապետությունների հետ տեղեկատվական համագործակցության անտեսումը: Ռուսական տեղեկատվական դաշտի թուլությունը նկատվեց մասնավորապես 2015 թ. ամռանը ՀՀ-ում էլեկտրաէներգիայի գնի բարձրացման առիթով ցույցերի մեկնաբանություններից: Ցույցերի թեժ պահին՝ 2015 թ. հունիսի 23-ին, «Новости Армения» տեղեկատվական գործակալությունը «Գորչակով ֆոնդի» միջոցով Երևան էր հրավիրել փորձագետ Անդրեյ Արեշևին, որը հայ հասարակությանը ներկայացրեց ՌԴ քաղաքականությունը ՀՀ-ում: Նա ևս ընդունեց, որ հետխորհրդային տարածքում և մասնավորապես ՀՀ-ում ՌԴ-ն թերացել է տեղեկատվական քաղաքականության բնագավառում, որովհետև դեռևս չի ձեռքագտնվել հին մտտեցումներից ու հաշվի չի առել ձևավորված նոր իրողությունները և հատկապես այն բավական կոշտ տեղեկատվական հակամարտությունը, որին հանդիպում է Ռուսաստանը հետխորհրդային տարածքում նույնիսկ ամենամեղմ ինտեգրացիոն քաղաքակա-

¹¹ Ст' u **Мухаметов Р. С.** Инструменты внешней политики России // www.politex.info/content/view/643/30

նություն իրականացնելիս: Նրա կարծիքով, հայկական ՁԼՄ-ում ՌԴ-ի պասիվ քաղաքականության հետևանքով Արևմուտքն իր տեղեկատվական ռեսուրսներով գերազանցել է Մոսկվային¹²: Նշենք, որ ՀՀ-ում հեռարձակվող «Голос России» ռադիոկայանը ներկայումս վերագրանցվել է որպես «Спутник-Армения», իսկ հաղորդումների մի մասը հեռարձակվում է հայերեն:

Միջազգային հարաբերություններում տեղեկատվական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու և արտասահմանյան լսարանի վրա ներագրելու նպատակով անընդհատ կատարելագործվում են դրանց իրականացման մեթոդներն ու մեխանիզմները: Օգտվելով այդ հանգամանքից՝ ԱՄՆ-ում և Արևմուտքի որոշ երկրներում հաջողությամբ կիրառում են «վիրտուալ դեսպանություն» նորամուծությունը, որն արևմտյան արժեքների լուսաբանման և պրոպագանդայի որոշակի սինթեզ է և նպատակ է հետապնդում, արտասահմանում դրական իմիջ ստեղծելով, շահել միջազգային հանրության համակրանքը: Օրինակ, ԱՄՆ նախագահը լայնորեն օգտագործում է սոցիալական ցանցերը: Այսպես, նա ԱՄՆ քաղաքացիներին և միջազգային հանրությանը իրեն շահեկան տեսանկյունից ներկայացնում է նաև Վաշինգտոնի արտաքին քաղաքականությունը: Facebook-ում Բ. Օբամայի բաժանորդների թիվը հասնում է 24 մլն-ի, իսկ Twitter-ում՝ 11 մլն-ի¹³:

ՌԴ նախագահ Վ. Պուտինը ևս ունի իր տեսաբլոգը, որտեղ լայնորեն հաղորդակցվում է այցելողների հետ: Նախագահի արտաքին քաղաքականության լուսաբանմամբ են զբաղվում նրա մամուլի ծառայության և տեղեկատվության վարչությունն ու հավատարմագրման և ճեպագրույցների բաժինը:

Այսպիսով, գնալով մեծանալու է արտաքին քաղաքականության քարոզչության մեջ նոր մեդիաների (սոցիալական ցանցեր և բլոգներ) տեսակարար կշիռը: Նոր դերակատարում են ստանձնում նաև վերլուծական և հասարակական-քաղաքական մեդիաները:

Արդի շրջանում Ռուսաստանի առջև ծառայած ամենակարևոր խնդիրներից մեկը երկրի արդիականացումն է: Այն ենթադրում է արդյունաբերական հասարակությունից անցում տեղեկատվական հասարակության, որտեղ առանցքային են դառնում գիտելիքի ձեռքբերումը, փոխանցումն ու օգտագործումը: Այս տեսանկյունից կարևորվում են ՌԴ գիտակրթական ռեսուրսները: Այսօր պետության աշխարհաքաղաքական ուժը որոշվում է ոչ միայն ռազմական, այլև նորարարական և բարձր տեխնոլոգիաների ռեսուրսներով: Այս հանգամանքով է բացատրվում, որ բոլոր զարգացած պետությունները գիտակրթական

¹² Տե՛ս **Арешев А.** Фонд Горчакова: российские эксперты разъясняют внешнюю политику РФ в Армении // gorchakovfund.ru/news/15522/

¹³ Տե՛ս **Сайфуллаев Д. Б.**, նշվ. աշխ.:

բաղադրիչը համարում են ռազմավարական կարևոր ռեսուրս:

1990-ական թվականների սկզբներից սկսվեց ՌԴ գիտական ներուժի փոշիացումը: Գիտությանը պետբյուջեից հատկացվող գումարը 5 տոկոսից դարձավ 0,3 տոկոս (նույն ժամանակահատվածում ԱՄՆ-ում գիտությանը հատկացվում էր ՀՆԱ-ի 6-7 տոկոսը, որը հավասար էր պաշտպանական գերատեսչության ծախսերին)¹⁴: Ռուսաստանի գիտնականների կարծիքով, ՌԴ-ում գիտության ճգնաժամի տևական բնույթը բացատրվում է ոչ բավարար ֆինանսավորմամբ, գիտության զարգացման հիմնական գործոնների բացակայությամբ, այսինքն՝ տնտեսությունում գիտատար արտադրանքի պահանջարկի և պետական աջակցության նվազումով¹⁵:

Համաշխարհային բանկի տվյալների համաձայն՝ 2013 թ.-ին ՌԴ-ից շնորհալի կադրերի արտահոսքը կազմել է կրթված բնակչության 35 տոկոսը: Նման ցուցանիշը բնորոշ է հիմնականում զարգացող երկրներին: 2013 թ. տվյալներով՝ ՌԴ-ից արտասահման մեկնած ուսանողների թիվը 35-50 հազար է, որոնցից միջինից բարձր ընդունակություն ունեն 10 տոկոսը, իսկ մոտ 40 տոկոսը իր հետագա գործունեությունը տեսնում է երկրից դուրս: Մոսկվայի պետական համալսարանի ռեկտոր Վ. Սադովնիչին նշում է, որ ամեն տարի երկրից հեռանում է շրջանավարտների մոտ 15 տոկոսը¹⁶: Ի տարբերություն Չինաստանի, Հնդկաստանի կամ Հարավային Կորեայի, որոնք ԱՄՆ-ի գիտական կադրերի հիմնական «դոնորներն» են, ՌԴ-ում «ուղեղների հոսքը» չվերածվեց «ուղեղների շրջապտույտի»: Ամենալավատեսական հաշվարկներով՝ արտասահման մեկնած գիտնականներից վերադառնում է միայն 10-15 տոկոսը, որի մեծ մասը ոչ թե աշխատանքի է անցնում Ռուսաստանի գիտական հաստատություններում, այլ զբաղվում է տեխնոլոգիական մենեջմենթով¹⁷: Այս փաստերը վկայում են, որ ռուսաստանյան գիտությունում դեռևս բաց է մնում սերնդափոխության խնդիրը:

Եթե 2000 թ. քաղաքացիական գիտական հետազոտությունների նպատակով պետբյուջեից հատկացվել է 17 մլրդ ռուբլի, ապա 2014 թ.-ին՝ 366 մլրդ ռուբլի: Չնայած այս հանգամանքին՝ վերջին տասնհինգ տարիների ընթացքում Web of Science բազայի գիտական հանդեսներում տպագրվող ռուս հետազոտողների հոդվածների թիվը չի ավելացել: Նշենք, որ եթե 2000-ական թվականների սկզբներին այդ ցուցանիշով Ռուսաստանի գիտնականները չինացիներին

¹⁴ Տե՛ս Сайфуллаев Д. Б., նշվ. աշխ.:

¹⁵ Տե՛ս «Инновационные направления современных международных отнашений». М., 2010, էջ 15:

¹⁶ Տե՛ս Кряжев А. Перегрузка российского высшего образования: экспорт знаний или магнит для профессионалов // eurasiancenter.ru/eduperspectives/20140904/ 1003664363.html

¹⁷ Տե՛ս «Инновационные направления современных международных отношений», էջ 17:

գիջում էին կիսով չափ, ապա այժմ՝ 7 անգամ¹⁸:

Այս ամենը վկայում է, որ ՌԴ-ում գիտությունը երրորդ աշխարհի երկրների մակարդակին է, որը հիմնականում ոչ թե գիտական ներուժի պակասի, այլ այդ բնագավառի ոչ ճիշտ մենեջմենթի արդյունք է:

ՌԴ նանոտեխնոլոգիական ընկերության փոխնախագահ Գեորգի Մալինեցկու կարծիքով, եթե ՌԴ-ն չկարողանա ներգրավվել նոր տեխնոլոգիական արտադրության բնագավառում, ապա նույնիսկ կարող է կորցնել իր ինքնիշխանությունը: Նա նշում է, որ ՌԴ-ում են գտնվում աշխարհի բնական ռեսուրսների 30 տոկոսը, սակայն երկիրը թողարկում է համաշխարհային արտադրանքի միայն 3 տոկոսը: Ռուսական նավթի ողջ պաշարը գնահատվում է մոտ 60 մլրդ դոլար, իսկ գենքի վաճառքից ստացվում է 6 մլրդ դոլարի շահույթ, այնինչ ներկայումս Հնդկաստանը միայն տարբեր ծրագրերի իրացման արտադրությունից ապահովում է 40 մլրդ, իսկ մոտ ժամանակներում այն կհասցնի 60 մլրդ դոլարի տարեկան շրջանառության¹⁹: Ռուսաստանը ավելի քան 20 տարի է, որ գտնվում է «անցումային փուլում»: Մեկ այլ երկիր տնտեսական այդպիսի ցուցանիշներով և կառավարման նման համակարգով արդեն վաղուց փլուզված կլիներ: Աշխարհի ուժեղ պետությունները չեն հանդուրժի, որ միջազգային թատերաբեմում հումքային կցորդի վերածված, նոսր բնակեցված և հսկայական ռեսուրսների տեր երկիրը հավակնի կարևոր դերակատարության:

Նորարարական գործունեության ամենակարևոր օղակը գիտական հետազոտությունների և մշակումների միջոցով նոր գիտելիք և տեխնոլոգիաներ ստեղծելն է: Գիտությունը տեխնոլոգիական առաջընթացի և նորարարությունների գործունեության հիմնական շարժիչ ուժն է: Գիտելիքի ստեղծումն ու տարածումը բարենպաստ պայմաններ են դառնում արդիականացման և նորարարությունների, ինչպես նաև տնտեսության համարյա բոլոր բնագավառներում գիտատար տեխնոլոգիաների կիրառման համար: Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (Organization for Economic Cooperation and Development) փորձագետների կարծիքով, ՌԴ-ում նորարարական քաղաքականությունը բարելավելու համար պետք է իրականացնել մի շարք արմատական փոփոխություններ: ՌԴ տնտեսական զարգացման նախարարությունը 2011 թ. մշակեց «Նորարարական Ռուսաստան-2020» ռազմավարական ծրագիրը, որը նախկինում ընդունված նմանատիպ փաստաթղթերի նման խնդրահարույց է: Հասկանալի չէ, թե ինչպիսի միջոցներով պետք է հաղթահարվի բիզնեսի նորարարական քաղաքականության առկա ցածր մակարդակը, երբ տեխնոլոգիական նորարարություններ իրականացնող ձեռնարկությունների տեսակարար

¹⁸ Տե՛ս **Иноземцев В. Л.** Что случилось с Россией. М., 2014, էջ 172:

¹⁹ Տե՛ս **Хаустова Н. А., Глазунов О. И.** Контуры стратегической нестабильности XXI века. Геополитические игры на мировой шахматной доске: Прогнозы до 2030 года. М., 2014, էջ 151:

կշիռը բավական ցածր է՝ 9-10 %, այնինչ զարգացած երկրում այն 30-60 % է: ՌԴ նորարարական ռազմավարության արդյունավետությունը այսօր կախված է իրականացվող կարգավորման միջոցառումների արդյունավետությունից, համապատասխան օրենսդրական դաշտի ստեղծումից, ինչպես նաև մշակված ծրագրերի իրականացումից²⁰:

Արտաքին քաղաքականության կարևոր խնդիրներից է պետության տեխնոլոգիական առաջընթացի համար արտաքին բարենպաստ միջավայրի ձևավորումը: Օրինակ՝ ամերիկյան դիվանագիտությանը բնորոշ է նորարարական տեխնոլոգիաների մարկետինգով զբաղվելը, ամերիկյան բիզնեսի համար բարենպաստ ռեժիմ ստեղծելը, որն ունի նաև իր առանձնահատկությունը: Որոշակի պահից սկսած՝ բարձր տեխնոլոգիաները ևս կարող են դառնալ արտաքին քաղաքականության ինքնուրույն գործիք: Տնտեսական կամ ռազմական նշանակություն ունեցող կարևոր տեխնոլոգիաները որպես «փափուկ ուժ» կարող են խթանել ռազմավարական համագործակցությունը: Օրինակ՝ ՌԴ ռազմատեխնիկական կամ էներգետիկ համագործակցությունը ՉԺՀ-ի, Հնդկաստանի, Հայաստանի Հանրապետության և մի շարք այլ երկրների հետ նպաստում է նրանց միջև համագործակցության հետագա ընդլայնմանը: Տեխնոլոգիաների վաճառքից հետո դրանց սպասարկման, արդիականացման, անհրաժեշտ մասնագետների պատրաստման և վերապատրաստման համար այդ երկրները շահագրգռված են պահպանելու բարիդրացիական կապերը նորարարական տեխնոլոգիաներ մատակարարող պետությունների հետ:

Բացի տնտեսական գործոնից, կցանկանայինք առանձնացնել կրթության ևս մեկ կարևոր առանձնահատկություն: Կրթությունը ցանկացած պետության կոմպլեքսային (ինտեգրալ) հզորության (ՊԿՀ) կարևոր բաղադրիչ է: ՊԿՀ-ի զաղափարը առաջին անգամ մշակվել է Չինաստանում և ներառում է այլ պետությունների հետ շահավետ հարաբերություններ հաստատելու, ինչպես նաև ներքին գործընթացների վրա ոչ բարեկամական երկրների բացասական ներգործությանը հակազդելու պատմական պատկերացումները²¹:

Աշխարհի խոշոր երկրների համար կրթության բնագավառը ռազմավարական կարևոր նշանակություն ունի, քանի որ միայն այս ճանապարհով կարելի է իրացնել «մարդկային կապիտալը» և ապահովել պետության գիտական և տեխնոլոգիական վերընթաց զարգացումը: Այսօր զարգացած երկրներում ազգային հարստության 70-80 տոկոսը ներկայացվում է մարդկային կապիտալի տեսքով²²:

²⁰ Տե՛ս «Россия в полицентрическом мире». М., 2011, էջ 27-28:

²¹ Տե՛ս նույն տեղը:

²² Տե՛ս «Концепция модернизации российского образования до 2010 года» // old...ru/news/base/concept.html

ԱՊՀ տարածքում Մոսկվան աշխատում է իր ազդեցությունը պահպանել նաև կրթության բնագավառում: Նկատի ունենալով ռուսերենի տարածվածությունը և այդ երկրների հետ քաղաքակրթական, մշակութային կապերը՝ Ժողովուրդների բարեկամության ռուսաստանյան համալսարանի (ԺԲՌՀ) նախաձեռնությամբ 2008 թ. մագիստրոսական ծրագրի շրջանակներում բացվեց ԱՊՀ ցանցային համալսարան: Ստեղծվեց կոնսորցիում, որում ընդգրկվեցին 8 երկրների 16 համալսարաններ (Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուս, Ղազախստան, Հայաստան, Մոլդովա, Տաջիկստան, Ղրղզստան): Ռուսաստանը, Չինաստանը և Ղազախստանը հիմնել են նաև Շանհայի համագործակցության համալսարան²³:

Այսպիսով, անդրադառնալով ՌԴ արտաքին քաղաքականության ոչ նյութական ռեսուրսներին՝ կարող ենք հանգել որոշակի եզրակացությունների:

1. Ժամանակակից գլոբալացող և անկայուն աշխարհում միջպետական մրցակցությունում հաղթում են այն պետությունները, որոնք, իրենց առջև դնելով իրատեսական նպատակներ և արդյունավետ օգտագործելով իրենց նյութական և ոչ նյութական ռեսուրսները, կարողանում են հաղթահարել ժամանակի մարտահրավերները: Արևմուտքը ՌԴ-ի վրա ճնշում է գործադրում, իսլամական Արևելքը աշխատում է իր ազդեցությունը տարածել Կենտրոնական Ասիայի, Հարավային Կովկասի և Ռուսաստանի «եղբայրական ժողովուրդների» վրա, Չինաստանը իր հայացքը սևեռել է ՌԴ Հեռավոր Արևելքի ու Սիբիրի վրա՝ ձեռնամուխ լինելով դանդաղ և խաղաղ «անեքսիայի»: Եվրասիական տարածքում ռուսական ինտեգրացիոն գործընթացների դանդաղեցումը կամ անհաջողությունը իսկույն ակտիվացնում է արտաքին ակտորներին:

2. Ռեսուրսների առկայությունը ուղիղ համեմատական չէ պետության ազդեցությանը: Ռեսուրսը կարող է արտաքին քաղաքականության որոշիչ գործոն դառնալ միայն դրա արդյունավետ օգտագործման դեպքում: Օրինակ՝ ՌԴ-ն, գազի պաշարներով լինելով աշխարհի առաջատար երկրներից մեկը, «գազային պատերազմների» հետևանքով վատթարացրեց հարաբերությունները իր մի շարք հարևանների հետ: Իրենց հերթին արտաքին քաղաքականության ոչ բավարար ռեսուրսները կարող են լրացվել և օգտագործվել արդյունավետ դիվանագիտությամբ, և պետության ղեկավարության քաղաքական կամքի առկայության դեպքում՝ ամրապնդել պետության դիրքերը: Ասվածի լավագույն օրինակ է ՌԴ դիվանագիտական հաջողությունը Լատինական Ամերիկայի որոշ երկրներում:

3. Ռուսական քաղաքական էլիտայի և հասարակության շրջա-

²³ Ст' у **Торкунов А.** Образование как инструмент «мягкой» силы России // russian-council.ru/inner/?id_4=1467#top-content

նում միասնական գաղափարախոսության բացակայությունը հնարավորություն չի տալիս առավել արդյունավետ օգտագործելու ժողովրդի ստեղծագործական ներուժը: Միասնական գաղափարախոսության բացակայությունը խոչընդոտում է նաև հստակ ռազմավարության մշակումը, հետևաբար նաև՝ առաջնահերթությունների որոշումը, որոնցից բխում են համապատասխան ռեսուրսներ տրամադրելը և արդյունավետ քաղաքականություն վարելը:

4. Ռեսուրսների արդյունավետ օգտագործումը ենթադրում է դրանց հստակ չափանշումը, ինչպես նաև ռեսուրսային նվազագույն վատնումով ծրագրված նպատակին հասնելը: Այսպիսով, կապը փոխադարձ է գաղափարախոսության, ազգային արժեքների և ռեսուրսների միջև:

ՌԴ-ն այսօր ԱՄՆ-ի նման չի կարող ունենալ գլոբալ շահեր: Ռուսաստանը, ի տարբերություն ԽՍՀՄ-ի, հրաժարվեց գլոբալ պատմական ծրագրերից: Գլոբալ երկիր դառնալու համար պետք է ունենալ համապատասխան ռեսուրսներ ու կամք, համամոլորակային ծրագրեր կամ գաղափարախոսություն, համապատասխան իմիջ, այսինքն՝ գրավիչ լինել այլ երկրների ու ժողովուրդների համար:

Ներկայումս ՌԴ արտաքին քաղաքականության ռեսուրսները սահմանափակ են: Տնտեսական, քաղաքական, ժողովրդագրական, գաղափարախոսական և գիտակրթական առումով ՌԴ-ն չի կարող գլոբալ դերակատարում ունենալ: ՌԴ-ն ավելի շատ պետք է գործի ԱՊՀ տարածքում և քայլեր ձեռնարկի իր սահմանների հարևանությամբ հակամարտությունների կանխարգելման ուղղությամբ:

5. ԱՊՀ տարածքում ինտեգրման գործողություններ ձեռնարկելիս Մոսկվան հիմք պետք է ունենա ընդհանուր քաղաքակրթական գործունք, կրթության և մշակույթի «ընդհանուր շուկան»: Այսինքն՝ ՌԴ-ն ԱՊՀ տարածքում նախ և առաջ պետք է ստեղծի միասնական մշակութային և կրթական տարածք: Ներկայումս դժվար է պատկերացնել ռուսական մշակութային էքսպանսիան (ռուսական ֆիլմեր, համակարգչային խաղեր, փոփ կամ ռոք երաժշտություն) դեպի Եվրոպա կամ անգլոսաքսոնական երկրներ: Այստեղ կարևորվում է նաև գաղափարախոսության դերը: Խոշոր պետության արտաքին քաղաքականությունը հնարավոր չէ առանց գաղափարախոսության, որի հիման վրա որոշվում է ռազմավարական նպատակը: Եթե ԽՍՀՄ-ը հանդես էր գալիս որպես ազատագրական շարժումների, գաղութացված ժողովուրդների պաշտպան, իսկ ԱՄՆ-ը՝ որպես ժողովրդավարության և ազատության, ապա արդի փուլում միջազգային թատերաբեմում ՌԴ-ն դեռևս չի մշակել իր գործունեության նպատակներն ու գաղափարները: Այսինքն՝ հայտնի չէ, թե գլոբալ հավակնություններ ունեցող Ռուսաստանը ինչպիսի առաքելություն է վերագրում իրեն: Այդ պատճառով ՌԴ-ում չի աշխատել «Նպատակ = շահ +/- ռեսուրսներ» բանաձևը: Այս բանաձևից բխում է,

որ շահերի իրականացումը սահմանազատվում է ռեսուրսների շրջանակով, և եթե շահը ցանկալի արդյունքն է, ապա նպատակը՝ ցանկալիի հնարավորը:

6. Ներկայումս ՌԴ-ն արդյունավետ և իրատեսական արտաքին քաղաքականություն վարելու համար նախ և առաջ պետք է համախմբի իր կազմակերպչական ու մտավոր ռեսուրսները: Արտաքին քաղաքականության բոլոր ռեսուրսները ուղղակի կամ անուղղակի փոխկապակցված են: Այն, ինչը այսօր կարող է թվալ ծախսատար կամ ոչ արդյունավետ (հատկապես մշակութայինը և գիտակրթականը), վաղը կարող է հսկայական շահաբաժիններ բերել (նյութական և ոչ նյութական):

Բանալի բառեր - ՌԴ, ԱՄՆ, Արևմուտք, արտաքին քաղաքականություն, ոչ նյութական ռեսուրսներ

MARUT VARDAZARYAN – Нематериальные ресурсы внешней политики РФ и перспективы их реализации. – В статье отмечается, что нематериальный потенциал российской внешней политики может стать определяющим фактором только при наличии необходимой политической воли и организационного ресурса. Сами по себе разного рода ресурсы не прямо пропорциональны влиянию государства, поскольку их нехватку способна дополнить эффективная дипломатия. В настоящее время Россия неэффективно использует свои ресурсы во внешней политике. Её политическим кругам мешает отсутствие единой идеологии. При таком потенциале и географическом положении РФ, несомненно, должна играть куда более важную роль, чем сегодня.

Ключевые слова: РФ, США, Запад, внешняя политика, нематериальные ресурсы

MARUT VARDAZARYAN – Non-Material Resources of the Russian Federation and the Prospects of Their Realization. – On the basis of rich factual data the non-material resources of the Russian Federation and their criteria are analyzed in this article, and it is stated that they can act as determining factors only in case of the presence of political will and organizational resources of the political elite. At the same time, it highlights the fact that the presence of resources is not directly proportional to the influence of the state and that scarce resources of the foreign policy of the state can be supplemented by effective diplomacy.

At present, the Russian Federation ineffectively utilizes its resources in foreign policy. The absence of a single ideology in the Russian political and social circles does not allow to use the potential of the nation at its best.

Currently, the Russian Federation that is possessing existing resources in foreign policy can not have global influence, but having such geographical position and potential this state should definitely play a more important role than other states of the region.

Key words: the RF, the USA, the West, foreign policy, non-material resources

**ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ՀԵՏՄԱՌՈՂԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ**

ԱԲՐԱՀԱՄ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Ազգային անվտանգության դիսկուրսը Թուրքիայում ժողովրդավարացման գործընթացի համատեքստում

Լիբերալ ժողովրդավարությունը ենթադրում է քաղաքական համակարգի ինստիտուտների ղեկավարների «ապառազմականացում»: Նման քաղաքացիական իշխանության ձևավորման համար անհրաժեշտ է բավարարել նվազագույնը երեք պայման. առաջին՝ զինվորականությունը չպետք է ունենա քաղաքական իշխանության կառավարման լծակներ, երկրորդ՝ քաղաքացիական վարչակարգում զինվորականությունը պետք է զբաղվի միայն մասնագիտական-արհեստավարժ գործառույթների իրականացմամբ, այլ խոսքով՝ զինված ուժերը չպետք է հնարավորություն ունենան սեփական կամքով մշակելու քաղաքականություն, որքան էլ նրանք լուրջ դերակատարում ունեն հատկապես երկրի պաշտպանական քաղաքականությունը մշակելու և իրականացնելու գործում, երրորդ՝ զինվորականները պետք է անվերապահորեն ենթարկվեն քաղաքացիական իշխանություններին նույնիսկ հակընդդեմ շահերի առաջացման դեպքում¹:

Հակառակ ժողովրդավարական ինստիտուտների կոնսոլիդացիայի (համախմբման) ջանքերին՝ Թուրքիայում 3-րդ ռազմական հեղաշրջումից հետո ԶՈՒ ինստիտուտն իրեն վերապահեց ընտրությունների միջոցով իշխանության եկած քաղաքական ուժերի օրինական կառավարման իրավունքը: Ռազմական հեղաշրջումից միայն երեք տարի անց՝ 1983 թ. դեկտեմբերին, խունտան պաշտոնապես իր լծակները զիջեց ընտրված քաղաքացիական իշխանությանը: Հատկանշական է, որ նույնիսկ այն ժամանակահատվածում, երբ Թուրքիան պաշտոնապես ղեկավարում էին քաղաքացիական կառավարությունները, քաղաքական համակարգի ինստիտուտները երբեք քաղաքացիականացված չեն եղել: Զինվորականությունը պատասխանատու էր լայն շրջանակների որոշումներ ընդունելու համար, որն իրականում պետք է պատկաներ քաղաքացիական իշխանությանը: Քաղաքացիական ղեկավարներն էլ, Հիքմեթ Օզդեմիրի դիտարկմամբ, բավականին անզոր էին հատկապես ռազմական բյուջե և

¹ Տե՛ս **Janowitz M.**, The Military in the Political Development of New Nations: An Essay in Comparative Analysis, Chicago, 1964, էջ 3-4:

ազգային պաշտպանական քաղաքականություն մշակելու հարցերում²:

Թուրգուր Օզալի՝ որպես «քաղաքացիական» վարչապետի իշխանության գալով՝ երկիրը չվերադարձավ նախահեղաշրջումային մեկնակետին: Ընդհակառակը, քրդական շարժման ակտիվացումը իշխանություններին ստիպեց երկրում դե ֆակտո մտցնել ռազմական դրություն, սահմանափակել ցույցերի անցկացումը, գրաքննել մամուլն ու գրականությունը և այլն: Այս ընթացքում, ինչպես նշում է Մեթին Հեփերը, աշխատանքի բաժանում էր առաջացել գործադիր մարմնի երկու թևերում. նախագահ Քենան Էվերենը, որը ներկայացնում էր զինվորականությունը, պատասխանատու էր երկրի ներքին ու արտաքին անվտանգային քաղաքականություն մշակելու, իսկ վարչապետ Օզալի կառավարությունը՝ սոցիալ-տնտեսական քաղաքականություն իրականացնելու համար³: Այնուամենայնիվ պետք է փաստել, որ 1983-1987 թվականներին զինվորականների դերը հետզհետե սկսեց նվազել, իսկ ռազմական դրությունը նահանգներում հասցվեց նվազագույնի (ընդամենը չորս քրդաբնակ շրջաններում): Այս համատեքստում հատկանշական է սահմանադրագետ Ջաֆեր Ուսքյուլի դիտարկումը. Թուրքիայի Հանրապետությունն իր գոյության 78 տարիներից 40-ը անցկացրել է արտակարգ իրավիճակում⁴: Փաստորեն արտակարգ դրության հայտարարումը հնարավորություն տվեց զինվորականներին պայքարելու քրդական զինված խմբերի դեմ, իսկ քաղաքացիական իշխանություններին՝ վերահսկելու այդ տարածաշրջանների բնակիչների քաղաքական ակտիվությունը: Կարելի է եզրակացնել, որ նույնիսկ ռազմական դրության վերացումն ու այն փոխարինելը ապառազական օրենսդրական ակտով՝ արտակարգ դրությամբ, չնպաստեցին Թուրքիայում լիարժեք քաղաքացիական և ժողովրդավարական կառավարում հաստատելուն:

Նախագահի պաշտոնավարման առաջին ժամկետի ավարտը նշանավորվեց Քենան Էվրենի՝ վերընտրվելու մտադրությունից հրաժարվելու մասին հայտարարությամբ, ինչն էլ բեկեց ռազմաքաղաքացիական հարաբերությունները (Ռ-ՔՀ) երկրում⁵: Նկատենք, որ վերընտրվելու ցանկության դեպքում Էվրենին անհրաժեշտ էր Սահմանադրության 101 հոդվածի փոփոխություն⁶: Հատկանշական է, որ մինչև պաշտոնա-

² Տե՛ս **Ozdemir H.**, Rejim ve Asker, Istanbul, 1989, էջ 229-230:

³ Տե՛ս **Heper M.** The Politics of Transition in The Third Turkish Republic, paper presented to the BRISMES Annual Conference, Oxford, 9-11 July, 1984, էջ 11-12:

⁴ Տե՛ս Ջաֆեր Ուսքյուլի հարցազրույցը «Ռադիկալ» օրաթերթում (տե՛ս <http://www.radikal.com.tr/haber.php?haberno=24855>): Չնայած այն փաստին, որ արտակարգ դրությունը դեռևս գործում էր Դիարբեքիի և Շըրնաքի շրջաններում, արտակարգ իրավիճակը՝ ՕՀԱԼ-ը, շարունակվեց մինչև 2002 թ. հուլիսի 20-ը, երբ վերջին երկու շրջաններում՝ Թունջելիում և Հաքքարիում, վերացվեց արտակարգ դրությունը (տե՛ս <http://yenisafak.com.tr/arsiv/2002/kasim/28/gundem.html>):

⁵ Տե՛ս http://www.belgenet.com/secim/cbsecim_01.html

⁶ Ըստ 1982 թ. Սահմանադրության 101 հոդվածի՝ հանրապետության նախագահն ընտրվում է մեկ շրջանի համար ԹԱՄԺ-ի կողմից 7 տարի ժամկետով «...» (տե՛ս <http://www.byegm.gov.tr/sayfa.aspx?id=59>):

վարման առաջին շրջանի ավարտը զինվորականներն այդպես էլ չդիմեցին Էվրենի վերընտրության՝ սահմանադրական դրույթը բարեփոխելու նախաձեռնության: Այդ քայլն իրականացվեց հետագայում, երբ վարչապետ Օզալն ստանձեց երկրի նախագահի պաշտոնը: Դեռ Էվրենի (1980-1987), ապա նաև Օզալի կառավարման տարիներին (1987-1993) զինվորականների՝ 1982 թ. պարտադրած Սահմանադրությունը սկսեց ենթարկվել բարեփոխման (1987, 1993, 1995, 1999, 2001, 2002 թթ.): Այս առումով, ինչպես նշում է Լևենթ Գյոնենչը⁷, ամենակարեվորը 2001 թ. բարեփոխումների նախագիծն էր, որում առաջարկվում էր հանրապետության նախագահին հնարավորություն տալ երկրորդ անգամ անընդմեջ վերընտրվելու այդ պաշտոնում՝ «5+5» ձևաչափով, այսինքն՝ նախկին 7 տարվա փոխարեն նախագահը հնարավորություն ունենա ընտրվելու 2 անգամ՝ 5-ական տարի ժամկետով⁸: 2001 թ. սահմանադրական բարեփոխումներն էապես նպաստեցին 1980 թ. ռազմական հեղաշրջման հետևանքների վերացմանը, քաղաքական համակարգի ինստիտուտների փոխհարաբերությունների, մարդու և քաղաքացու ազատությունների լավացմանը⁹: Կուսակցությունների մասին փոփոխությունների նախագիծը հստակեցրեց Սահմանադրության 69 հոդվածում՝ ԹԱՄԺ-ում ներկայացված կուսակցական խմբակցությունների «ոչ սահմանադրական գործողությունները»: Այս փոփոխությունը կարևոր էր և անհրաժեշտ, որովհետև Եվրամիության օրենսդրությանը պատշաճեցնելու պարտավորություն ստանձնած Անկարան քննադատվել էր սահմանադրական դատարանի որոշմամբ իսլամիստական «Բարօրություն» կուսակցության գործունեությունը կասեցնելու և այն լուծարելու համար¹⁰:

ՌՔՀ սահմանադրական և ինստիտուցիոնալ փոխակերպումը 2001-2005 թթ.

2001 թ. սահմանադրական փոփոխությունները բեկումնային էին քաղաքական համակարգում՝ ընդհանրապես ՌՔՀ-ի և մասնավորապես Ազգային անվտանգության խորհրդի (ԱԱԽ) դերի վերանայման և վերագնահատման առումով: 1982 թ. սահմանադրությունը, որոշ փոփո-

⁷ Տե՛ս **Gönenç L.** The 2001 Amendments to the 1982 Constitution of Turkey, Ankara Law Review Vol.1, №1 (Summer: 2004), էջ 89-109.

⁸ Տե՛ս **Gönenç L.** <http://auhf.ankara.edu.tr/journals/alr-archive/ALR-2004-01-01/ALR-2004-01-01-Gonenc.pdf>

⁹ Տե՛ս **Özbudun E.** Anayasa Değişiklikleri ve Siyasal Reform Onerileri, İstanbul, 2001, էջ 13:

¹⁰ Տե՛ս **Ergül H.** «The Representation(s) of Turkey's EU Journey in Islamic Newspaper», paper was presented in the 2nd International Conference on Multicultural Discourses, 13-15 April, 2007, Institute of Discourse&Cultural Studies, Zhejiang University, Hangzhou, China, http://www.ea.usp.br/caligrama/english/09_hakan.pdf: Թուրքիայում կուսակցությունների գործունեության, արտախորհրդարանական ակտիվության, լուծարման և կասեցման մասին ավելի մանրամասն տե՛ս **Erdoğan M.** «Anayasa Değişti mi?», **Açık Toplum**, Liberal Düşünce Topluluğu, <http://www.liberal-dt.org.tr/guncel/gunccl.htm>, 07.10.2001:

խություններով առաջին ռազմական հեղաշրջումից հետո (1961 թ.) ընդունված սահմանադրության և 1971 թ. բարեփոխումների¹¹ օրգանական շարունակությունն էր: Եվ երկու սահմանադրությունների համեմատությունից ակնհայտ է դառնում, որ 1982 թ. սահմանադրության 117, 118 հոդվածները ԱԱԽ-ին վերապահում են ավելի լայն լիազորություններ՝ այդպիսով մեծացնելով քաղաքական համակարգում որոշումներ ընդունելու գործընթացում զինվորականների դերը, և նվազեցնելով քաղաքացիական իշխանությունների լիազորությունները: Դրա վառ ապացույցը 118 հոդվածում ամրագրված դրույթն է. «...Կառավարությունն իր որոշումներում պետք է առաջնահերթություն տա ԱԱԽ-ի այն որոշումներին, որոնք վերաբերում են պետության անկախության գոյությանն ու պահպանմանը, տարածքային ամբողջականությանը, միասնականությանը և հասարակությունում խաղաղության և անվտանգության ապահովմանը»¹²: Մինչդեռ 2001 թ. բարեփոխումների 118 հոդվածով էականորեն կրճատեցին ԱԱԽ-ին վերապահված լիազորությունները: Այդ կառույցի ընդունված որոշումներն արդեն ոչ թե պարտադիր, այլ առաջնային էին կառավարության համար: Հիշյալ հոդվածում ասվում է. «ԱԱԽ-ն պետք է ընդունված խորհրդատվական բնույթի որոշումների, ինչպես նաև պետության ազգային անվտանգության (ԱԱ) քաղաքականության ձևավորման, հաստատման և իրականացման վերաբերյալ իր տեսակետները ներկայացնի նախարարների խորհրդին: Նախարարների խորհուրդը պետք է գնահատի ԱԱԽ-ի որոշումները, որոնք հիմնականում վերաբերում են պետության անկախության և գոյության պահպանմանը, նրա միասնականությանն ու ամբողջականությանը, խաղաղության և անվտանգության ապահովմանը»¹³: Փաստորեն՝ զինվորականները, որոնք վարչական լծակներն ավելի արդյունավետ էին օգտագործում, քան քաղաքացիական իշխանությունները, հայտնվեցին ոչ շահեկան վիճակում: Եվրաինտեգրման շրջանակում օրենսդրության պատշաճեցման պահանջը ենթադրում էր, որ ինչպես ԵՄ ժողովրդավարական համակարգերում, այնպես էլ միության թեկնածու երկրներում անհրաժեշտ է ՌԲՀ-ի հավասարակշռման ուղղությամբ օրենսդրական ու ինստիտուցիոնալ քայլեր ձեռնարկել: Թուրքիայում ժողովրդավարության համախմբման ձախողումը հիմնականում պայմանավորված էր այն հանգամանքով, որ զինվորականների ներկայացուցչական գերակայությամբ ԱԱԽ-ին երկրի մայր օրենքով վերապահված էր այնպիսի որոշումներ կայացնելու լիազորություններ, որոնք առաջնային նշանակություն ունեին այն կաբինետի համար, որը ձևավորվել էր ուղիղ և ներկայացուց-

¹¹ 1961 և 1982 թվականների սահմանադրությունների միջև տարբերությունների մասին տե՛ս **Yazıcı S.**, Türkiye'de Askeri Müdahalelerin Anayasal Etkileri, Ankara, 1997, էջ 219-220:

¹² <http://www.anayasa.gen.tr/1982ay.htm>

¹³ <http://www.byeqm.gov.tr/sayfa.aspx?Id=59>

չական ժողովրդավարական ընտրությունների միջոցով, և քաղաքացիական այդ ներկայացուցիչները համարվում են օրինական իշխանության լեգիտիմ ղեկավարներ: ԱԱԽ-ում որոշումներ ընդունելու հարցում զինվորականներին վերապահված սահմանադրական լիազորությունները, փաստորեն, խոչընդոտում էին ժողովրդավարության համախմբումը Թուրքիայում: Նկատենք, որ 2001 թ. լիազորությունների դե յուրե բարեփոխումը գրեթե չնվազեցրեց զինվորականների ազդեցությունը իրական քաղաքական կյանքում: Դե ֆակտո զինվորականությունը պահպանեց ԱԱԽ-ում իր ավանդական գերիշխող դերը: Դրա վառ ապացույցը 2007 թ. նախագահական ընտրություններում գնեթալների նախագուշակական նամակն էր, որը քաղաքագիտական շրջանակներում ստացավ «Էլեկտրոնային հեղաշրջում» անվանումը:

2001 թ. սահմանադրական փոփոխությունները ՌՔՀ հստակեցման առումով մեծ ազդեցություն չունեցան Թուրքիայում նաև այն պատճառով, որ լիովին չվերացան կուսակցությունների գործունեությանն առնչվող արգելքները: Ավելին, օրենսդրական փոփոխություններով խստացվեց կարգազանց կուսակցությունների պատժաչափը: Բացի կուսակցության վերջնականապես լուծարումից, ՄԴ-ին իրավունք վերապահվեց ամբողջովին կամ մասնակիորեն պետական աջակցությունից զրկել այն կուսակցությանը, որի գործունեությունը համարվում է հակասահմանադրական: Կուսակցական գործիչներն այդպիսով չէին կարող մեկտեղել զինձառայությունն ու քաղաքական գործունեությունը¹⁴, բարեփոխումն էլ միտված էր հանրապետության հիմնադիր Մուսթաֆա Քեմալի՝ բանակը քաղաքականությունից տարանջատելու սկզբունքը կրկին կյանքի կոչելուն¹⁵: Այստեղ նկատենք, որ հենց Աթաթյուրքն էր բանակի ինստիտուտին վերապահել «հանրապետության բացարձակ պահապանի» առաքելությունը¹⁶: Այս առումով համաձայն ենք քաղաքագետ Ումիթ Ջիզրեի այն մտքին, որ «քաղաքականության հարցերում բանակի գերակայությունը պայմանավորված է պետական շահերի պահպանությամբ, որի ամենակարևոր բաղադրատարրը ազգային միասնության շարունակականությունը կամ պահպանումն է»¹⁷: Փաստորեն, ռազմական հեղաշրջումները հետևանք էին ՋՈւ ինստիտուտի սահմանած այն տեսակետի, ըստ որի՝ բանակը պետության միասնականության, տարածքային ամբողջականության ու հանրապետության արժեքների պահապանն է: Բանակի՝ քաղաքական կյանքին

¹⁴ 1924 թ. Թուրքիայի Սահմանադրության 23 հոդվածը տե՛ս <http://www.tbmm.gov.tr/anayasa/anayasa24.htm>

¹⁵ Տե՛ս **Öztürk M.** Ordu ve Politika, Ankara, 1993, էջ 58:

¹⁶ Տե՛ս **Güney A.** The Military, Politics and Post-Cold War Dilemmas in Turkey, London, 2002, էջ 163:

¹⁷ **Cizre Ü.** The Anatomy of the Turkish Military's Political Autonomy, 1997, Comparative Politics, 29(2), էջ 151-166.

յուրաքանչյուր միջամտությունից հետո կազմվեց (կամ բարեփոխվեց) նոր սահմանադրություն, որի մշակումը թեև հանձնարարվեց իրավաբաններին, սակայն իրական քաղաքական պատվիրատուն զինվորականներն էին: Եվ հակառակ այն փաստին, որ պետության ու նրա ինստիտուտների գործունեության համար սահմանվեցին իրավական սահմանագծեր, և հեղաշրջումից հետո քաղաքացիական իշխանությունները վերստանձնեցին քաղաքական կառավարումը, այնուամենայնիվ բանակայինները շարունակեցին վերահսկել քաղաքացիականների գործունեությունը և հետևել պետական մեքենայի գործառությանը՝ այդ ամենի համար, իհարկե, ապահովելով այնպիսի սահմանադրական հիմք, որը կարդարացներ նրանց ստանձնած այդ «պահապանի» դերը: Այլ խոսքով՝ բանակի ինստիտուտն էր, որ քաղաքացիական իշխանությունների, կուսակցությունների ղեկավարների ու քաղաքական դերակատարների համար գծեց քաղաքական լեգիտիմ գործունեության սահմանները՝ այդպիսով ինքն իր համար ենթահող ստեղծելով «սեփականաշնորհելու» ԱԱ քաղաքականության մշակումը և այդ հարցում նվազեցնելով քաղաքացիական իշխանությունների դերը:

Վերոնշյալ եզրակացությունը կարելի է հիմնավորել նաև Մերին Հեփերի այն փաստարկով¹⁸, որ Թուրքիայում ԱԱ քաղաքականության մշակման ու պահպանման հարցում զինվորականների անվստահությունը՝ ուղղված քաղաքական ընտրանուն (իմա՝ կուսակցություններին), պայմանավորված է այն հանգամանքով, որ զինվորականները թերահավատ էին քաղաքացիական իշխանությունների նկատմամբ և վտանգ էին տեսնում նրանց գործունեության մեջ՝ մասնավորապես հանրապետության արժեքների պահպանման և ինստիտուտների գործունեության հարցերում: Միաժամանակ պետք է ընդգծել, որ Թուրքիայում «պետական քաղաքականության»¹⁹ պաշտպանության, անվտանգային և արտաքին քաղաքականության հարցերում հենց քաղաքական դերակատարների տեսակետերի ու մոտեցումների նմանությունը նպաստեց, որ ԱԱ հայեցակարգի մշակման ու իրագործման հարցերում նվազի քաղաքական ուժերի մասնակցությունն ու դերը:

ԱԱ քաղաքականության փաստաթղթի ինստիտուցիոնալ փոփոխությունները

Քաղաքագետ Փինար Բիլգինի համոզմամբ՝ Թուրքիայում բանակն ինքն ստանձնեց ԱԱ քաղաքական փաստաթղթի մշակումը և օգտագործելով անվտանգային քաղաքականության հարցում իր մենաշնոր-

¹⁸ Տե՛ս **Heper M.** State Tradition in Turkey, Northgate, 1985, էջ 140:

¹⁹ Տե՛ս **Dogan N.** Türk Siyasal Partilerinin Uluslararası İlişkilere Yaklaşımı, 1923-1980: Partilerin Benimsedikleri Dışisleri, Güvenlik ve Savunma Politikaları, 2002, Ankara, էջ 117-154:

հը՝ ընդլայնեց իր խուսանավումների հնարավորությունները և լեզիտիմացրեց իր միջամտությունը քաղաքական գործընթացներին²⁰: Ամենամեծ գործոնը, որ ՌԲՀ-ում քաղաքական նժարը թեքեց զինվորականների օգտին, այն էր, որ կուսակցությունների քաղաքական գործունեության համար չստեղծվեցին այնպիսի պայմաններ, որոնք հնարավորություն կտային կուսակցություններին զբաղվելու ԱԱ քաղաքականության մշակմամբ: Կուսակցությունների գործունեության կասեցումը, դրանց լուծարումն ու արգելանքները, հետապնդումները, դեկավարներին բանտարկելը, քաղաքական գործունեությամբ զբաղվելու օրենսդրական խոչընդոտներն ու այլ սահմանափակումները գծեցին «քաղաքականության մշակման» ու դերակատարների սահմանները: Նման պայմաններում բնական է, որ կուսակցությունները ակամա չէին մասնակցելու ԱԱ քաղաքականության մշակմանը և չէին համարձակվելու բանավիճել զինվորականների հետ:

1970-ականներին Թուրքիայում ԱԱ նկատմամբ սպառնալիքները հիմնականում հնչում էին ձախակողմյան ուժերից և քեմալիզմը վտանգող գաղափարախոսություններից ու կուսակցություններից: 1990-ականների սկզբին նրանց միացան ևս երկուսը՝ ՔԲԿ-ի արդեն աճող վտանգը և քաղաքական իսլամը²¹: Այս իրողությունը ևս մեկ անգամ ապացուցեց քաղաքական համակարգի միջինստիտուցիոնալ հարաբերություններում բանակի գերակշռող դերը և ԱԱ քաղաքականության լրամշակման հարցում ամրապնդեց նրա «ինքնավարությունը»: 1990 թ. այդ փաստաթուղթն ստացավ «Պետության հայեցակարգը և շրջանակը» անվանումը²², իսկ ԱԱԽ գլխավոր քարտուղարությունն այն համարեց «պետության և ազգի գոյատևման, երկրի միասնականությունն ու ամբողջականությունը ներքին և արտաքին սպառնալիքներից պահպանելուն համարժեք փաստաթուղթ»²³: ԱԱ քաղաքական օրակարգին նման արտաքին և ներքին սպառնալիքների հավելումը նոր հնարավորություններ տվեց բանակին՝ ընդլայնելու իր գործունեության սահմանները՝ հիմք ընդունելով զինված ուժերի ներքին ծառայության մասին օրենքի 35 հոդվածը (այն ընդունվել է 1960 թ. հեղաշրջումից հետո), որն ամրագրում էր. «Թուրքիայի ԶՈւ պարտականությունը թուրքական պետության պաշտպանությունն է, իսկ Թուրքիայի Հանրապետության սահմանումը տրված է Սահմանադրությամբ. Թուրքիայի ԶՈւ պա-

²⁰ St' u Bilgin P. Making Turkey's Transformation Possible: Claiming 'Security-Speak'-not Desecuritization!, South East European and Black Sea Studies, 2007, 7(4), էջ 535-57:

²¹ Այս մասին խոսել է նաև Ումիթ Ջիզրեն (տե՛ս Cizre, Ü. Europeanization and the Role and Attitude of the Turkish Military Toward Europe, (2003), http://www.yale.edu/unsy/Cyprus_Conference_Cize.pdf):

²² «Devlet'in Kavram ve Kapsamı» կոչվող փաստաթղթի մասին տե՛ս ԱԱԽ-ի պաշտոնական կայքէջում, <http://www.mgk.gov.tr/Turkce/sss.html>

²³ Şaban İ. Milli Güvenlik Devleti: Dünyada ve Türkiye'de Belgeleriyle Milli Güvenlik deolojisi ve Kurumlasma”, 1998, İstanbul, էջ 102:

տասխանատու է ԱԱ պահպանման ու ազգային շահերի (նպատակների) իրականացման համար»²⁴: Փաստորեն, ԱԱ այս «ընդգրկուն» օրակարգը «օրինական» հնարավորություն տվեց զինվորականներին, միջամտելու քաղաքական գործընթացներին որպես ԱԱ քաղաքականության գլխավոր և առաջնային դերակատար: ԱԱ քաղաքականության փաստաթղթի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ավելի լավ պատկերացնելու, թե ինչպես են դրա շուրջ քննարկումները ծավալվում Թուրքիայում, և որն է դրա առանցքային համակարգը: Փաստաթուղթը սահմանում է, թե որոնք են պետության արդիական և պոտենցիալ վտանգները: ԱԱ-ին սպառնացող փաստաթուղթը Թուրքիայում ստացել է «Պետության գաղտնի կամ Կարմիր Սահմանադրություն» անվանումը²⁵: Այն վերանայվել է 3 անգամ՝ 1992, 1997, 2005 թվականներին. 1992-ին ավելացվեց քրդական անջատողականության դեմ պայքարը՝ որպես պետության ներքին սպառնալիքի չեզոքացում, 1997-ին կրոնական արմատականությունը, ինչպես նաև քաղաքական իսլամը, ծայրահեղ ձախակողմյան շարժումներն ու ծայրահեղ ազգայնականությունը պաշտոնապես համարվեցին պետության ներքին սպառնալիք: Նկատենք, որ «Կարմիր գիրքը», որը պատրաստվում է Թուրքիայի գլխավոր շտաբում և վերջնական տեսք է ստանում ԱԱԽում, վերջին անգամ հաստատվել է 2005 թ. հոկտեմբերին, երբ Անկարան Եվրամիությանն անդամակցելու բանակցություններ էր սկսել: Վերջին խմբագրմամբ սպառնալիք էին համարվում «իսլամական արմատականությունը», անջատողականությունն ու ձախակողմյան խմբավորումների գործունեությունը: Հիմնական արտաքին սպառնալիքը համարվում էր ահաբեկչությունը: 2010 թ. փետրվարին անվտանգային գլխավոր փաստաթղթում արմատական փոփոխություններ կատարելու վերաբերյալ թուրքական էլիտայի պատրաստականությունը, կարծում ենք, պայմանավորված էր վերջին տարիներին՝ հատկապես 2009 թ., հայտարարված արտաքին քաղաքական կուրսի՝ «Զրո ինդիր, առավել գործակցություն» մարտավարության որդեգրմամբ, երբ Թուրքիան էապես բարելավեց հարաբերությունները տարածաշրջանի մի շարք հակառակորդ կամ «ոչ ցանկալի» երկրների՝ Հունաստանի, Ռուսաստանի, Իրանի և Իրաքի հետ: Ի դեպ, Թուրքիայի «գաղտնի Սահմանադրության» մեջ կա ուշագրավ մի դրույթ. փաստաթղթում քրդական պետության կազմավորման հնարավորությունը չի նույնացվում ռազմական գործողություններ սկսելու փաստին: 2005 թ. հայեցակարգում շեշտվում է, որ Քիրքուկում և թուրքումանների նկատմամբ Հյուսիսային

²⁴ Թուրքիայի զինված ուժերի ներքին ծառայության մասին օրենքին (Turk Silahlı Kuvvetleri İç Hizmet kanunu) ավելի մանրամասն կարելի է ծանոթանալ <http://www.hukuki.net/kanun/211.14.text.asp> կայքէջում կամ Թուրքիայի ԶՈւ պաշտոնական կայքէջում http://www.tsk.mil.tr/1TSK_HAKKINDA/1_3_Gorevi/gorevi.htm

²⁵ Տե՛ս **Տե՛ս Ֆան Ա.**, նշվ. աշխ., էջ 106:

Իրաքում քրդական խմբավորումների գործողությունները կարող են լուրջ խնդիր առաջացնել, ինչը սպառնալիք է մերձավորարևելյան տարածաշրջանի կայունության և անվտանգության համար²⁶:

ՌԲՀ-ն Թուրքիայում կարևոր նշանակություն ունեն հասարակության քաղաքական տրանսֆորմացիային միտված գործընթացներում: Փաստ է, որ 1960-ականներից հետո զինվորականների հաջողվել է ստեղծել օրենսդրական լծակներ՝ պետության գոյատևման համար անհրաժեշտ աշխարհիկության սկզբունքի պահպանումը գերխնդիր դարձնելու և այն վտանգված լինելու շղարշի կամ պատճառաբանության ներքո քաղաքացիական իշխանություններին զերծ պահելու երկրում քաղաքական գործընթացների ուղղորդումից ու իրականացումից: Այս տեսանկյունից հետաքրքրական է Հեփերի այն միտքը, որ զինվորականներն այդ միջամտություններն իրականացնում էին՝ պնդելով, որ քաղաքացիական իշխանությունները ի վիճակի չեն ապահովելու հասարակական շահերը²⁷:

Այս գործում էական է նաև այն հանգամանքը, թե շահերի իրականացման (կամ պահպանման) ինստիտուտները ինչպես են գործում ժողովրդավարության խաղի պայմաններում: Այլ կերպ ասած՝ ինչպես է բանակի ինստիտուտը վերաբերվում Թուրքիայում ժողովրդավարության կայացմանը: Ժողովրդավարությունը զինվորականների համար ավելի շատ եղել է միջոց, քան նպատակ²⁸: Քաղաքական կյանքին իրենց ուղղակի կամ անուղղակի բոլոր միջամտություններից հետո զինվորականները ժողովրդավարությունը չեն համարել կառավարման անարդյունավետ ձև, նրանք այդ հարցում մեղադրել են քաղաքական գործիչներին՝ որպես ժողովրդավարացման գործընթացը տապալոդների: Այս առումով հետաքրքրական է համեմատել 1960-1997 թթ. զինվորականների չորս միջամտությունները ՌԲՀ-ի տեսանկյունից: 1960-1961, 1971-1973, 1980-1983 թվականներին ՌԲՀ-ը կարելի է բնութագրել որպես «պահպանի» մոդել, երբ զինվորականները միջամտում են քաղաքական կյանքին, դուրս անում քաղաքացիական իշխանություններին իրենց գրասենյակից և վերադառնում զորամասեր: 1997 թ. սպիտակ հեղաշրջմանը չհաջորդեց զինվորականների իշխանության գալը: Զինվորականներին ընդամենը հաջողվեց, իրենց բնութագրմամբ, երկրի աշխարհիկ կարգերին սպառնացող քաղաքացիական իշխանությունը փոխարինել մեկ ուրիշով՝ զերծ պահելով երկիրը ցնցումներից: 1997 թ. հեղաշրջումը ՌԲՀ-ի տեսանկյունից կարելի է բնութագրել մի իշխանութ-

²⁶ 2005 թ. ազգային անվտանգության քաղաքականության փաստաթղթի տեքստը տե՛ս <http://kirmizikitap.blogspot.com/> հասցեում:

²⁷ Տե՛ս **Tachau F., Heper M.** The State, politics, and the Military in Turkey, 1983, Comparative Politics 16, էջ 17-33:

²⁸ Տե՛ս **Heper M.** Civil-Military Relations in Israel and Turkey, 2005, Journal of political and Military Sociology, Vol 33, № 2, էջ 231-248:

յան փոխարինումը մեկ ուրիշով, որն իր հերթին դժվարություններ չի առաջացրել այդ փոխադրումն իրականացրած ուժի կամ ինստիտուտի համար: Փաստորեն, բանակը Թուրքիայում իր միջամտությունների ընթացքում երբեք չի կիրառել «կառավարողի» մոդելը, այսինքն՝ երկար ժամանակ չի մնացել իշխանությունում և առաջնային քաղաքական ինստիտուտների պաշտոններին չի նշանակել զինվորականների: Վերջիններս, ըստ Հեփերի, մնացել են աշխարհիկ-ժողովրդավարական հանրապետության պահպանները և կառավարման ղեկին նշանակել են արհեստավարժ քաղաքական գործիչներ²⁹:

Քաղաքական գործընթացներն ուղղորդելու և իրականացնելու լեգիտիմ իրավունքը Թուրքիայում այդպես էլ չպատկանեց ներկայացուցչական ժողովրդավարության միջոցով ընտրովի պաշտոնյաներին: Թուրքիայում կուսակցությունների ծրագրերը երբեք չեն հակադրվել ժողովրդավարության սկզբունքներին: Հարցն այն է, որ բանակի ինստիտուտը անվտանգային քաղաքականության մշակումն ու իրագործումը երբևէ «չի վստահել» ժողովրդավարական ընտրությունների միջոցով ձևավորված քաղաքացիական իշխանություններին:

Սահմանադրության ձևավորումը Թուրքիայում մինչև եվրահիստեգրման բանակցությունների մեկնարկը, կարծում ենք, իրականացվեց այն պայմանով, որ չխանգարի զինվորականների առաքելությանը՝ աշխարհիկ-ժողովրդավարական կարգերի պահպանման իրականացմանը: Այսինքն՝ բանակը ձևավորեց այնպիսի մեխանիզմներ, որոնք հնարավորություն ընձեռեցին նրան անարգել գործադրելու այդ «լեգիտիմ առաքելությունը» և քաղաքական իշխանության իրավական տերերից՝ քաղաքացիական իշխանություններից, չհանդիպել այնպիսի դիմադրության, որը կհանգեցներ քաղաքական համակարգում զինվորականների դերի կրճատմանը: Ըստ այդմ՝ զինվորականների ձևավորած ինքնիշխանությունը սահմանադրորեն անհավասար պայմաններ ստեղծեց քաղաքացիական իշխանությունների համար: Նման Սահմանադրությունը և ՋՈւ ներքին ծառայության մասին օրենքի 35 հոդվածը, փաստորեն, ապահովեցին այն օրենսդրական շրջանակը, որի սահմաններից դուրս ոչ մի քաղաքական կամ քաղաքացիական ուժ չէր կարող խուսափել ԱԱ սպառնալիքներին սեփական մեկնաբանությունը տալիս:

Թուրքիայում ազգային անվտանգային քաղաքականության մշակումը այն մրցասպարեզն է, որտեղ բախվում են բանակի ու կուսակցությունների ինստիտուտի շահերը: Վերջիններս հաճախ չէին ցանկանում դիմել քաղաքական ոխկի և ԱԱ քաղաքականության մշակման հարցի շուրջ թեժ բանավեճ ծավալել բանակի ինստիտուտի հետ: Կուսակցապետերը լավ էին հասկանում, որ նման դեպքերում կվտանգվի ի-

²⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 242:

րենց քաղաքական կարիերան, իսկ իրենց ղեկավարած ուժը կհայտնվի լուսանցքում: Ամենավառ օրինակը 2001 թ. օգոստոսի 4-ին գումարված «Մայր հայրենիք» կուսակցության 7-րդ համագումարն էր, որտեղ կուսակցության նախագահ, փոխվարչապետ Մեսուդ Յըլմազը առաջին փորձը կատարեց հրապարակավ քննարկման առարկա դարձնելու ԱԱ քաղաքականության փաստաթուղթը, որ, ըստ նրա, տասնամյակներ շարունակ «առեղծվածային տաբու» է եղել³⁰: Իր ելույթում Յըլմազն ընդգծեց, որ եթե Թուրքիան ցանկանում է առաջընթաց ապրել, պետք է հաղթահարի «ազգային անվտանգության սինդրոմը»: Յըլմազի ելույթից երեք օր անց ԶՈւ-ի գլխավոր շտաբի պետը հրապարակավ հայտարարեց, որ «կուսակցության համաժողովը» անլուրջ է և նման զգայուն թեմա քննարկելու համար քաղաքական շահերով կեղտոտված ոչ հարմար ամբիոն»³¹: ԳՇ-ի հաղորդագրությունից պարզ երևում է, որ զինվորականներին հիմնականում անհանգստացնում էր ԱԱ փաստաթուղթը հանրային քննարկման առարկա դարձնելու Յըլմազի դիրքորոշումը, որովհետև, ըստ այդ հաղորդագրության, «Յըլմազի հայտարարությունը երկրում քաղաքական և սոցիալական միջավայրը նպաստավոր կդարձնի իսլամիստական ուժերի և անջատողականների համար, որպեսզի նրանք զիջումներ պահանջեն ԱԱ հարցերում»³²: Զինվորականների նման դիրքորոշումը ևս մեկ անգամ հաստատում է քաղաքացիական դերակատարների նկատմամբ նրանց ավանդական անվտանգությունը: Բացի այդ, նման դիրքորոշմամբ զինվորական ինստիտուտը, կարծես, առանձնացրեց ԱԱ թեման քաղաքական բուն գործընթացներից, որոնք նա համարում էր ոչ արդյունավետ և կոռումպացված³³: Հաղորդագրությանը հետևեց 2001 թ. օգոստոսի 16-ին ցամաքային զորքերի հրամանատար, գեներալ Հիլմի Օզքուկի հայտարարությունն այն մասին, որ Թուրքիայի բանակն ունի լուրջ պատասխանատվություն աշխարհիկ վարչակարգը պահպանելու գործում: Փաստորեն, զինվորականների նման կոշտ արձագանքը քաղաքական ու քաղաքացիական ուժերին ուղղված ևս մեկ հաղորդագրություն էր առ այն, որ բանակը չի հանդուրժի ԱԱ հարցերի շուրջ քննարկումների հրապարակայնացումը և դրանով զինվորականների դերի նսեմացումը:

ԱԱ հարցերում կուսակցությունների կրավորական կեցվածքն ու գեներալների հետ չբախվելու մտավախությունը, փաստորեն, լեգիտիմացրին բանակի մենաշնորհը ԱԱ քաղաքականության և քննարկումների

³⁰ Այս և ազգային անվտանգության քաղաքականության քննարկման (Ulusal Guvenlik Tartismasi) մասին «Մայր հայրենիք» կուսակցության առաջնորդի ամբողջական ելույթին կարելի է ծանոթանալ http://www.belgenet.com/2001/yilmaz_040801.html կայքէջում:

³¹ Թուրքիայի ԶՈւ ԳՇ-ի քարտուղարության հաղորդագրության մանրամասները տե՛ս http://www.belgenet.com/2001/genkur_070801.html էլեկտրոնային կայքէջում:

³² <http://www.hurriyetdailynews.com/h.php?news=low-intensity-political-dispute-2001-08-12>

³³ Տե՛ս **Cooper M.** The Legacy of Atatürk: Turkish Political Structures and Policy-Making, 2002, International Affairs, 78(1), էջ 115-128:

հարցերում: Դրա վառ ապացույցը կոալիցիոն գործընկերների՝ «Ազգայնական շարժում» կուսակցության՝ MHP-ի, և Ժողովրդավարական ձախ կուսակցության՝ DSP-ի ղեկավարների կողմից Յըլմազին ուղղված քննադատական ելույթներն էին, որոնց համաձայն՝ «Ազգային անվտանգության հարցը ենթակա չէ փոփոխության, քննարկման կամ վիճարկման»³⁴:

Տասնամյակների այս քաղաքականությունը փոփոխության ենթարկվեց ժողովրդավարության խթանիչ ազդակի՝ արտաքին ալիքի ազդեցության ներքո: ՌԲՀ-ն վերաարժևորվեց Եվրամիության բարեփոխումների իրականացման հրամայականի ներքո: Այդուհանդերձ, բանակի ինստիտուտը խախտեց նոր խաղի նոր կանոնները: Պատճառը ոչ թե ժողովրդավարական կառավարման ձևին հավատարմության երդումը խախտելն էր, այլ ժողովրդավարական կառավարման ինստիտուտներն արդիականացնելու և կառուցվածքային փոփոխություններ իրականացնելիս քաղաքական համակարգում կամ միջինստիտուցիոնալ հարաբերություններում բանակի ինստիտուտի դերի հնարավոր նվազման վտանգի զգացողությունը: Իսկ դա դրսևորվում է Թուրքիայի անվտանգային քաղաքականության առաջնահերթությունները մշակելիս ու իրականացնելիս քաղաքացիական կամ ռազմական ինստիտուտի առաջնայնությունը որոշելու հարցում:

Ըստ ԵՄ անդամակցության համագործակցության 2001 և 2003 թվականների փաստաթղթերի՝ ենթադրվում էր, որ Թուրքիան պետք է իրավական բարեփոխումներ իրականացնի ԱԱԽ-ում զինվորականների կողքին քաղաքացիական դերակատարների թիվն ավելացնելու ու նրանց դերը բարձրացնելու ուղղությամբ³⁵: Եվրամիության օրենսդրությանը պատշաճեցման գործընթացի շրջանակում ընդունվեցին օրենսդրական փոփոխությունների մի շարք փաթեթներ, որոնց ծիրում պետք է կարգավորվեին նաև ՌԲՀ-ն՝ հիմք ընդունելով ԱԱԽ-ում քաղաքացիական և ոչ քաղաքացիական ուժերի ներկայացվածության աստիճանի հավասարության վերաբերյալ ԵՄ պահանջը: Այդ շրջանակում ԱԱԽ-ում քաղաքացիական ներկայացուցիչների թիվն ավելացվեց՝ հավասարեցվելով ոչ քաղաքացիականների թվին:

Ավելին, ԱԱԽ-ի գլխավոր քարտուղար նշանակվեց քաղաքացիական պաշտոնյա (սա առաջին դեպքն էր Թուրքիայի Հանրապետության պատմությունն ան մեջ), փոխվեց նաև ԱԱԽ-ի նիստերի ժամանակային պարբերականությունը. խորհուրդն իր նիստերն սկսեց գումարել երկու ամիսը մեկ: Հակառակ ակնկալվող արձագանքին և ազգային անվտանգային քաղաքականության հարցերում ապամենաշնորհային օրենսդրարական հիմքի ձևավորմանը, զինվորականները հիմնականում չվիճարկեցին քաղաքացիական իշխանությունների առաջարկած փո-

³⁴ <http://www.hurriyetdailynews.com/h.php?news=low-intensity-political-dispute-2001-08-12>

³⁵ Տե՛ս Թուրքիայի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի զեկույցները 2001, 2003 թթ.:

փոխությունները: Կարծում ենք, որ հիմնական պատճառը զինվորականների ավանդական արևմտամետ կողմնորոշումն էր, որը տասնամյակներ շարունակ եղել և մնացել է նույնը. բանակը խնամքով է փայփայում Թուրքիայի արդիականացման վերաբերյալ Քեմալի ժառանգությունը: Եվ հենց պարզվեց, որ եվրահինտեգրման գործընթացը շարունակելու համատեքստում անհրաժեշտ է էական փոփոխություններ կատարել ԱԱԽ-ի կազմում, զինվորականները վերապահումներով արձագանքեցին խորհրդում քաղաքացիական դերակատարների կշռի բարձրացման հրամայականին³⁶: Միաժամանակ ընդգծենք, որ բանակի բյուջեի նկատմամբ խորհրդարանական վերահսկողության բացակայությունը, Բարձրագույն զինվորական խորհրդի (որը դատական տեսանկյունից պատասխանատու է զինվորականների իրենց պաշտոնում նշանակելու, ազատելու, կարգապահական խախտումների դեպքում նաև պատժելու համար) ընդունած որոշումների անձեռնմխելիությունն ու այլ փաստեր ցույց են տալիս, որ կատարված փոփոխությունները չնպաստեցին երկրում ԱԱ քաղաքականության փաստաթղթի ձևավորման ու մշակման գործում քաղաքացիականների արդյունավետ ներգործության բարձրացմանը³⁷: Այնուամենայնիվ կարելի է փաստել, որ ՌԲՀ-ում ժողովրդավարացման արտաքին գործունք ի դեմս Եվրամիության առաջարկած բարեփոխումների, կարևոր, սակայն ոչ արդյունավետ դերակատարում ունեցավ Թուրքիայում քաղաքացիական իշխանություններ-բանակի ինստիտուտ հարաբերությունների որոշակիացման համար գոնե օրենսդրական առումով: Այդ պիքը նպաստեց, որ անվտանգային քաղաքականության առումով Թուրքիայում բանավեճ ծավալվի քաղաքական գործընթացների երկու գլխավոր դերակատարների միջև: Մասնավորապես, Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման և քրդական հարցում Թուրքիայում իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության նախաձեռնությունները (անկախ դրանց արդյունքներից) վկայում են, որ քաղաքացիական իշխանություններին հաջողվեց մասնակցություն ունենալ անվտանգային քաղաքականության հարցերում և չհանդիպել ավանդական անհաղթահարելի խոչընդոտների: Թեև պետք է խոստովանել, որ 2009 թ. քրդական հարցում վարչապետ Ռեջեփ Էրդոհանի առաջարկած «Ճանապարհային քարտեզը» հանդիպեց ընդդիմադիրների խիստ քննադատությանը³⁸: Իսկ զինվորականությունը, ի դեմս ԶՈւ ԳՇ-ի պետ Իլքեր Բաշբուլի, հայտարարեց, որ բանակն աջակցում է կառավար-

³⁶ Տե՛ս **Karawan I.** Security Sector Reform and Retrenchment in the Middle East, 2003, Challenges of Security Sector Governance, DCAF, Geneva, էջ 263:

³⁷ Տե՛ս **Misrahi F.** The EU and the Civil Democratic Control of the Armed Forces: An Analysis of Recent Developments in Turkey, 2004, Perspectives, 22, էջ 22-42:

³⁸ Տե՛ս <http://www.hurriyetdailynews.com/h.php?news=opposition-critical-to-gov8217t8217s-road-map-offering-its-own-measures-2009-11-13>

րության ջանքերին, սակայն միաժամանակ հիշատակեց այն «կարմիր գիծը», որը չի կարելի անցնել քրդական հարցում: «Բոլորը պետք է հասկանան, որ Թուրքիայի Սահմանադրության 3 հոդվածը, որն անփոփոխելի է, սահմանում է, որ երկրի տարածքային ամբողջականությունը, միասնականությունն ու ժողովրդի ինքնիշխանությունն անքակտելի են»³⁹: Վերոնշյալ օրինակը ևս մեկ ապացույց է, որ Թուրքիայում ՌԲՀ-ն ավելի շատ ենթարկվում է իրական քաղաքականության տրամաբանությանը:

Բանալի բառեր- *Թուրքիա, ԱԱԽ, ռազմաքաղաքացիական հարաբերություններ, Սահմանադրություն, անվտանգություն, զինվորականություն, ժողովրդավարություն, հեղաշրջում, կուսակցություն*

АБРААМ ГАСПАРЯН – *Видоизменение в Турции военно-гражданских отношений после холодной войны.* – После основания в 1923 году Турецкой республики, стремясь поддержать угодный ей политический порядок, армия неоднократно вмешивалась в происходившие в обществе процессы. Такое вмешательство имело место в 1960, 1971, 1980, 1997 и 2007 годах. В статье анализируется динамика отношений между армией и властью в 1997–2007 гг. в контексте проводившейся в стране политики национальной безопасности и процесса интеграции в ЕС. Кроме того, с точки зрения роли и задач турецких вооружённых сил освещается деполитизация армии. Особенности подхода к национальной безопасности в этой стране рассматриваются как препятствие на пути консолидации демократических сил.

Ключевые слова: *Турция, СНБ, военно-гражданские отношения, конституция, армия, демократия, государственный переворот, политическая партия*

ABRAHAM GASPARYAN – *National Security Discourse and the Constitutional-Political Status of NSC in Post-Cold War Turkey in the Context of Civil-Military Relations.* – Civil-military relations in Turkey have been an everlasting debate since the foundation of the republic in 1923. In order to maintain political order and protect these institutions, the military found it necessary to intervene five times in 1960, 1971, 1980, 1997 and 2007. This article looking at the period between 1997 and 2007 and analyzing the civil-military dynamics in Turkey in the context of National Security policy making process and in the framework of EU integration process. Furthermore, in terms of the roles and missions of the military in Turkey, the article discussing the problems of “civilianization” of army institution, the specific features of National Security discourse in that country as an obstacle on the road of consolidating democracy.

Key Words: *Turkey, NSC, Civil-Military Relations, Constitution, Security, Army, Democracy, Coup d'état, Political Partry*

³⁹ <http://www.hurriyetdailynews.com/n.php?n=military-outlines-its-red-lines-on-kurdish-move-2009-08-25>

ՎԵՍՏՖԱԼՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԻԲՐԵՎ ԱՐԴԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԴԱՐՁԱՅԻՆ ՀԱՆԳՐՎԱՆ

ՏԻԳՐԱՆ ԵՓՐԵՍՅԱՆ

Վեստֆալյան պայմանագրերը շրջադարձային նշանակություն ունեցան միջազգային հարաբերությունների պատմության մեջ: 1648 թվականից հետո ինքնիշխան պետությունների միջև ձևավորված հորիզոնական հարաբերությունները փոխարինեցին կայսրության և եկեղեցու հիերարխիայով քողարկված տարասեռ ֆեոդալական միավորների միջև ուղղաձիգ-աստիճանակարգային հարաբերություններին: Պետական ինքնիշխանության համախմբումը և հարկադրանքի միջոցների մենաշնորհումը պետական իշխանություններին տվեցին բացառիկ վերահսկողություն արտաքին քաղաքականության գործիքների (բանակ, դիվանագիտություն և այլն) նկատմամբ: Քաղաքական դաշտը տարանջատվեց ներքին և արտաքին ոլորտների: Վեստֆալյան պայմանագրերից հետո ոչտարածքային քաղաքական միավորները (ֆեոդալներ, ազատ քաղաքներ և այլ) դուրս մնացին միջազգային քաղաքականությունից: Սկսվեց միջազգային հարաբերությունների հաստատութենականացումը (institutionalization): Քաղաքականության և կրոնի տարանջատումն ու ինքնորոշման գաղափարը հանգեցրին միջազգային հանրության իրավահավասար անդամների խաղաղ գոյակցության սկզբունքին: Կայսերական համընդհանրական հայեցակարգի և քրիստոնեական հանրապետության (res publica christiana) համատեքստում բարոյահոգևոր գերիշխանության պապական ձգտումներին փոխարինեց ուժերի հավասարակշռության սկզբունքը՝ իբրև բազմաբնեռ, անարխիկ միջավայրում միջազգային հարաբերությունների բնական կարգավորիչ: Վեստֆալի (1648 թ.) և Ուտրեխտի (1713 թ.) պայմանագրերի միջև ընկած ժամանակահատվածում սկսեցին ձևավորվել արդի միջազգային հարաբերությունները¹:

Մույն հոդվածում ներկայացվում է միջնադարյան եվրոպական համընդհանրական աշխարհակարգից անցումը միջազգային հարաբերությունների արդիականությունը խորհրդանշող ինքնիշխան պետությունների վեստֆալյան համակարգին: Այս անցումը նշանավորվեց վերազգային և անդրազգային հաստատություններից ինքնիշխանության

¹ Տե՛ս **Teschke B.**, The Myth of 1648: Class, Geopolitics, and the Making of Modern International Relations. London, New York: Verso, 2003, էջ 3:

փոխանցման և պետությունների կողմից ինքնիշխանության համախմբման գործընթացներով: Վեստֆալյան համակարգը մինչ այդ գոյություն ունեցող տեղային (լոկալ) աշխարհակարգերից միակն էր, որ դարձավ համաշխարհային (գլոբալ):

1. Միջնադարյան Եվրոպա. միջպետական հարաբերությունների իդեալական կառույցը

Աշխարհակարգի միջնադարյան մոդելը կամ մինչվեստֆալյան աշխարհակարգը Եվրոպայում ներկայանում էր իբրև քրիստոնյա ժողովուրդների հանրապետություն (*Res Publica Gentium Christianorum*) Հռոմի պապի գլխավորությամբ: Այս աշխարհակարգի համընդհանրական «կարգավորողներն» էին Հռոմի պապը և Սրբազան հռոմեական կայսրության կայսրը²:

Սրբազան հռոմեական կայսրությունը իր հզորության գագաթնակետին էր հասել Կառլոս 5-րդ կայսեր (1519-1558 թթ.) օրոք, ով միաժամանակ նաև Իսպանիայի թագավորն էր: Նրանից հետո կայսրության գահը ժառանգեց նրա եղբայր Ֆերդինանդ 1-ինը, իսկ Իսպանիային՝ որդին՝ Ֆիլիպ 2-րդը: Կայսրության կենտրոնը Վիեննան էր: Այն ընդգրկում էր գրեթե ողջ Կենտրոնական Եվրոպան՝ Բրանդենբուրգից Լոմբարդիա և Բուրգունդիայից Բոհեմիա: Այս ընդարձակ տարածքում կառավարող իշխանները ենթակա էին Հռոմի պապի հոգևոր և Հռոմեական սրբազան կայսեր քաղաքական իշխանությանը³:

Ողջ միջնադարում կայսրության հետհռոմեական առասպելը կարևոր նշանակություն ուներ: Ինչպես որ գոյություն ուներ մեկ կրոնական համայնք, որը ղեկավարվում էր մեկ եկեղեցու կողմից, այնպես էլ կար մեկ կառավարչի կողմից ղեկավարվող միայն մեկ քաղաքական համայնք: Ռեֆորմացիայի հետևանքով այս առասպելը փշրվեց, իսկ Երեսնամյա պատերազմի և Վեստֆալյան խաղաղության շնորհիվ պետությունները դարձան միակ լեզվաբան քաղաքական միավորները: Պետությունները ղեկավարվում էին ինքնիշխանների կողմից, որոնք չէին ճանաչում այլ իշխանություն ո՛չ իրենց վերևում և ո՛չ էլ ներքևում: Պետությունների շուրջ սկսեց զարգանալ արդի դարաշրջանին բնորոշ նոր տեսակի քաղաքական կյանքը՝ միջազգային քաղաքականությունը⁴:

Միջնադարյան Եվրոպայում միայն Հռոմի պապն էր ինքնիշխան համարվում: Մյուս տիրակալները (թագավորներ, դուքսեր, կոմսեր) պապական վասալների դերում էին: Սա բրգաձև կառույց էր, որի գագաթին Հռոմի պապն էր, այնուհետև՝ մյուս տիրակալները: Բուրգի ներ-

² Տե՛ս **Зонова Т. В.** Вестфальская система // «Вестник МГИМО», 2008, № 1, էջ 78:

³ Տե՛ս **Moita L.**, A critical review on the consensus around the Westphalian system, JANUS.NET e-journal of International Relations Vol. 3, № 2, 2012, էջ 21-22:

⁴ Տե՛ս **Ringmar E.**, Identity, Interest and Action: A Cultural Explanation of Sweden's Intervention in the Thirty Years War. Cambridge, New York, Melbourne: Cambridge University Press, 1996, էջ 10:

սում հարաբերությունները ուղղաձիգ աստիճանակարգային էին: Աստիճանաբար աշխարհիկ տիրակալներն իրենք էլ սկսեցին ձգտել ինքնիշխանության իրենց տիրույթներում և այդպիսով հակամարտության մեջ մտան Հռոմի հետ: Իսկ արդեն 1648 թվականի Վեստֆալյան հաշտությունից հետո «ինքնիշխանություն» եզրը բնութագրական էր ոչ թե կաթոլիկ եկեղեցու առաջնորդությամբ քրիստոնեական համայնքի միասնության, այլ անկախ քաղաքական համայնքների (horizontal system of sovereign states) բազմազանության համար, թեպետ պայմանագրերը ձևակերպվեցին համընդհանրական քրիստոնեական լեզվի կանոններով⁵:

Վեստֆալյան համաձայնագրերը խորհրդանշում են միջնադարյան քրիստոնեական հիերարխիկ կառույցների վրա հիմնված քաղաքական իշխանության համակարգի փոխակերպումը տարածքային ինքնիշխան պետությունների հորիզոնական կարգի: Քաղաքական իշխանության բնույթի այսպիսի կառուցվածքային կերպափոխումը, որին նպաստեցին Վերածնունդն ու Ռեֆորմացիան, հանգեցրեց խորը վերափոխումների քաղաքական միավորներում և թե նրանց տարածքային տիրույթում⁶:

Այս գործընթացները նպաստեցին Եվրոպայի հետագա մասնատմանը: Դավանանքային բաժանումը պահպանվեց, և նախառեֆորմացիայի շրջանի համակարգ վերադառնալու բոլոր փորձերը ձախողվեցին: Մակայն 17-րդ դարի ընթացքում «համընդհանրական միապետություն» հղացքը դեռևս պահպանվում էր բացարձակ միապետությունների քաղաքական օրակարգում, բայց սա միայն նշանակում էր մեկ միապետի գերիշխող դիրք պետությունների համակարգում համընկնող ինքնիշխանության (երբ միապետը հավակնում էր մեկից ավելի ինքնիշխան պետությունների գահերի) և ոչ թե եվրոպական գերպետության տեսքով⁷:

Եվրոպայում միջնադարյան քաղաքական մշակույթի ձախողումը պայմանավորված էր նաև վերջինից արմատապես տարբեր հունահռոմեական ժառանգության վերածննդով: Միաժամանակ, Եվրոպան, նվաճելով նոր հայտնագործված աշխարհամասերը, իրեն ենթարկեց նաև նրանց մշակույթները՝ սկիզբ դնելով աշխարհի վերափոխմանը: Ռեֆորմացիայի շնորհիվ փլուզվեց նաև ճշմարտության եկեղեցական մենաշնորհը: Բողոքական երկրներում միջնադարյան գիտության, կրթության, կրոնի և դիվանագիտության համընդհան-

⁵ St' u **Dekker I. F., Werner W. G.**, Governance and International Legal Theory, Leiden and Boston: Martinus Nijhoff Publishers, 2004, էջ 135-136:

⁶ St' u **Larkins J.**, From Hierarchy to Anarchy: Territory and Politics before Westphalia. New York: Palgrave Macmillan, 2010, էջ 3-4:

⁷ St' u «War in the early modern world 1450-1815», Black J. (ed.), London and New York: Routledge, Taylor & Francis, 2005, էջ 194:

րական լեզուն՝ լատիներենը, փոխարինվեց ազգային լեզուներով⁸:

Վեստֆալյան աշխարհակարգը, ի տարբերություն միջնադարյանի, արտացոլում էր միանգամայն նոր իրողություն: Այստեղ այլևս չկար բարձրագույն համընդհանրական իշխանություն, և միջազգային հարաբերությունների գլխավոր «կարգավորիչը» դարձավ ուժերի հավասարակշռության սկզբունքը⁹: Սկսած 15-րդ դարից՝ հավասարակշռության տեսությունը մշակել են նշանավոր մտածողներ Գվիչարդինին, Մաքիավելին, Ջենտիլեն: Գվիչարդինին Թուքիդիդեսի¹⁰ «ուժերի հավասարակշռության» տեսությունը նախ կիրառեց Ապենինյան թերակղզում Լորենցիո դի Մեդիչիի քաղաքականությունը նկարագրելու համար. իտալական պետությունները դաշինքներ կամ միություններ էին կազմում միմյանց դեմ, որոնք փոփոխվում էին՝ կախված կողմերի ուժային հարաբերակցությունից: Այսպես իտալական տիրակալների հաջողվում էր լուծել միմյանց միջև ծագած վեճերը, և ըստ այդմ՝ այսպես կոչված «իտալական մոդելը» Եվրոպայում, ապա նաև աշխարհում վերածվում է միջազգային հարաբերությունների մոդելի, որի գլխավոր չափորոշիչներն էին աշխարհիկ ինքնիշխանությունը, ինքնիշխան հավասարությունը և աշխարհիկ ինքնիշխան տիրակալների միջև ուժերի հավասարակշռությունը¹¹: Հենց այս չափորոշիչներն էլ ընկան Հուգո Գրոցիուսի մշակած նոր՝ աշխարհիկ միջազգային իրավունքի հիմքում:

Գաղափարական առումով արդի պետությունների ձևավորումը հիմնավորվեց Ժամանակի խոշոր իրավագետների և քաղաքական իմաստասերների աշխատություններում: Ժան Բոդենը (1529-1596 թթ.) իր «Վեց գիրք պետության մասին» (*Les six livres de la Republique*, 1576) աշխատությունում զարգացրեց «պետական ինքնիշխանություն» հասկացությունը, ըստ որի՝ «ինքնիշխանությունը պետության բացարձակ և մշտական իշխանությունն է իր հպատակների և քաղաքացիների նկատմամբ»¹²: Նիկոլո Մաքիավելին (1469-1527 թթ.), որը քաղաքական ռեալիզմի տեսության հիմնադիրներից է, իր «Տիրակալը» (*De Principatibus*, 1532) տրակտատում հիմնավորեց պետական շահի առաջնա-

⁸ Տե՛ս **Ringmar E.**, նշվ. աշխ., էջ 146:

⁹ Տե՛ս **Зонова Т. В.**, նշվ. աշխ., էջ 78-80:

¹⁰ Տե՛ս **Behr H.**, *A History of International Political Theory: Ontologies of the International*. London, New York: Palgrave Macmillan, 2010, էջ 23: Հույն պատմիչ Թուքիդիդեսը (Ք. ա. 460-395 թթ.) իր «Պելոպոնեսյան պատերազմի պատմություն» աշխատությամբ համարվում է ռեալիզմի տեսության առաջին ներկայացուցիչը: Այդ տեսությունն ունի երեք հիմնական ընդհանրություն արդի ռեալիզմի տեսության հետ՝ միջազգային քաղաքականության հիմնական միավորները պետություններն են, պետությունները ձգտում են իշխանության կա մ ինքնանպատակ, կա մ որպես միջոց այլ նպատակներ իրականացնելու համար, պետությունների վարքագիծը բանական է, հետևաբար հասկանալի:

¹¹ Տե՛ս **Larkins J.**, նշվ. աշխ., էջ 7-12:

¹² **Кортунов С. В.** Крушение Вестфальской системы международных отношений и становление нового мирового порядка // «Мировая политика». М., 2007, с. 75-117.

նությունը¹³: Մեծ նշանակություն ունեցան նաև Թոմաս Հոբսի (1588-1679 թթ.) և Բենեդիկտոս Սպինոզայի (1632-1677 թթ.) աշխատությունները¹⁴: Հուգո Գրոցիուսի (1583-1645 թթ.) «Պատերազմի և խաղաղության իրավունքը» (De Jure Belli ac Pacis, 1625)¹⁵ ու «Ազատ ծով» (Mare Liberum, 1608)¹⁶ աշխատություններով համակարգվեց և մշակվեց միջազգային իրավունքը: Գրոցիուսը զարգացնում է բնական իրավունքի հղացքը: Բացահայտելով հասարակական իրողության համակեցության ինքնուրույն անխուսափելիությունը՝ նա անհրաժեշտ է համարում նաև ազգերի խաղաղ համագոյակցության սկզբունքը, որի իրացման համար բոլոր պետությունները պարտավոր են հետևել որոշակի օրենքների, կատարել ստանձնած պարտավորությունները, պահպանել բարի կամք և իրավահավասարություն¹⁷:

2. Երեսնամյա պատերազմը և միջնադարյան համընդհանրակա-նության փլուզումը

Ռազմաքաղաքական առումով պետությունների՝ իբրև միջազգային հարաբերությունների հիմնական միավորների ձևավորման գործընթացում բեկումնային նշանակություն ունեցան 1618 թ. Եվրոպայում բռնկված Երեսնամյա պատերազմը (1618-1648 թթ.) և դրա ավարտն ավետող Վեստֆալի պայմանագրերը (1648 թ.): Քաղաքական առումով Երեսնամյա պատերազմը նաև «պետականաշինության պատերազմ» էր: Այն ոչ թե առճակատում էր ամբողջապես ձևավորված պետությունների, այլ տարբեր քաղաքական հղացքների և դաշինքների միջև, որի շնորհիվ իբրև քաղաքական միավորներ կայացան պետությունները¹⁸:

1517 թվականին սկսված Ռեֆորմացիայի հետևանքով Սրբազան հռոմեական կայսրությունը բաժանվեց կաթոլիկ հարավի և բողոքական հյուսիսի: 1618 թ. ապստամբությունը Բոհեմիայում Հաբսբուրգների իշխանության և կաթոլիկ գերիշխանության դեմ բողոքեց պատերազմների շարք, որը հայտնի է որպես Երեսնամյա պատերազմ: Երեսնամյա պատերազմի հետևանքով փաստացի փլուզվեց Սրբազան հռո-

¹³ Տե՛ս «The Decline of Spain and the Thirty Years War 1609-48/59», Cooper J. P. (ed.), The New Cambridge Modern History, Volume IV. Cambridge: Cambridge University Press, 1970, էջ 104-112:

¹⁴ Տե՛ս **Скирбекк Г., Гилье Н.** История философии. М., 2003, էջ 263-298:

¹⁵ Տե՛ս **Grotius H.** (1625), The Rights of War and Peace, Including The Law of Nature and of Nations, translated from the original Latin of Grotius with notes and illustrations by A. C. Campbell, with an introduction by David J. Hill, Adamant Media Corporation, Elibron Classics, 2005 (This Elibron Classics Replica Edition is an unabridged facsimile of the edition - Washington & London: M. Walter Dunne, 1901):

¹⁶ Տե՛ս **Grotius H.** (1608), The Freedom of the Seas or the Right Which Belongs to the Dutch to Take Part in the East Indian Trade, Translated with A Revision of the Latin Text of 1688 by Ralph Van Deman Magoffin, Edited with an Introductory Note by James Brown Scott (New York: Oxford University Press, 1916), This is version 1.0 of the Frellock Book Series edition, Oslo, 2008:

¹⁷ Տե՛ս **Grotius H.** (1625), նշվ. աշխ., էջ 417:

¹⁸ Տե՛ս «A Companion to the Reformation World», Po-chia H. R. (ed.), Melbourne: Blackwell Publishing, 2004, էջ 277:

մեական կայսրությունը, քաղաքականապես ամրացվեցին կրոնական ռեֆորմների արդյունքները, և սկսվեց ազգային պետությունների ձևավորման գործընթացը: Երեսնամյա պատերազմը առաջին համաեվրոպական առճակատումն էր: Այն սկսվեց իբրև կրոնական պատերազմ Գերմանիայի կաթոլիկ ու բողոքական խմբավորումների միջև, և իր քաղաքական համատեքստը ստացավ, երբ Հռոմեական սրբազան կայսրության տիրակալ ավստրիացի Հաբսբուրգները փորձեցին իրենց ազդեցությունը տարածել ողջ Եվրոպայում: Իսկ Ֆրանսիան, թեպետ կաթոլիկ երկիր էր, այս վտանգը չեզոքացնելու համար միացավ բողոքական ճակատին¹⁹: Ֆրանսիայի համար եվրոպական քաղաքականության մեջ գերակա էին երկու հիմնական խնդիր՝ ձեռքով իրեն օղակող Հաբսբուրգների տարածքները և կանխել Նիդերլանդները վերանվաճելու Իսպանիայի նկրտումները²⁰: Ընդունված է պատերազմի ընթացքը բաժանել հետևյալ չորս փուլերի՝ բոհեմական ապստամբություն և Պֆալցի նվաճում (1618-1623 թթ.), դանիական շրջան (1624-1629 թթ.), շվեդական (1630-1634 թթ.) և ֆրանսիական շրջափուլեր (1635-1648 թթ.)²¹:

Կաթոլիկ խմբավորումը՝ Սրբազան հռոմեական կայսրության կաթոլիկ իշխանություններ, Պապական պետություն, Իսպանիա, Պորտուգալիա և այլն, առաջնորդում էին ավստրիացի Հաբսբուրգները: Նրանց դիմակայում էր բողոքական դաշինքը՝ Գերմանիայի բողոքական իշխանությունները, Շվեդիան, Դանիան, կաթոլիկ Ֆրանսիան (1635 թ.-ից) և այլ պետություններ: Սրբազան հռոմեական կայսրության կայսր Ֆերդինանդ 2-րդի (1619-1637 թթ.) կայսրությունը փրկելու փորձը ձախողվեց: Այստեղ գլխավոր դերը կատարեց Ֆրանսիան՝ ի դեմս Ռիշելյեի (1624-1642 թթ.) դիվանագիտության. կարդինալը պաշտպանեց բողոքական երկրներին՝ առաջնորդվելով Ֆրանսիայի գերակա շահերով (*raison d'état*)²²: Մյուս կողմից սրան նպաստեց նաև Հռոմի պապ Ուրբանոս 8-րդի (1623-1644 թթ.) աշխարհիկ քաղաքականությունը, որը ավելի շատ հետաքրքրված էր Իտալիայում Հաբսբուրգների ազդեցության թուլացմամբ, քան կաթոլիկ խաչակրաց արշավանքով²³: Երեսնամյա պատերազմի մասնակից առանցքային տերություններից էր նաև Շվեդիան: Ըստ Էրիկ Ռինգմարի՝ Շվեդիայի մուտքը Երեսնամյա պատերազմ 1630 թ. նվազ չափով էր պայմանավորված վերջինիս պետական շահերով, այն ավելի շուտ՝ ինքնուրունական խնդիր էր²⁴:

Կարդինալ Ռիշելյեն ձգտում էր Ֆրանսիայի անվտանգությունը կա-

¹⁹ Տե՛ս **Bonney R.**, *The Thirty Years' War 1618-1648*, Oxford: Osprey Publishing, 2002, էջ 7:

²⁰ Տե՛ս «The Decline of Spain and the Thirty Years War 1609-48/59», էջ 306:

²¹ Տե՛ս նույն տեղը, էջ 307:

²² Տե՛ս **Kissinger H. A.**, *Diplomacy*, New York, London, Toronto, Sydney, Tokyo, Singapore: Simon & Schuster, 1994, էջ 59:

²³ Տե՛ս **Treasure G.**, *The making of modern Europe, 1648-1780*, London and New York: Routledge, Taylor & Francis e-Library, 2003, էջ 176:

²⁴ Տե՛ս **Ringmar E.**, նշվ. աշխ., էջ 4-5:

ռուցել էվրոպական հավաքական անվտանգության համակարգի համատեքստում, ինչը շահեկան էր բոլոր պետությունների համար²⁵: Ըստ այդմ՝ Ռիշելյեն պնդում էր, որ իր բոլոր դաշնակիցները պետք է ընդգրկվեն խաղաղության բանակցություններում, հետևաբար նաև վերջնական կարգավորմանը: Ավելին, նա պահանջում էր կայսրության միավորների (Reichsstände) կամ առնվազն Ֆրանսիայի դաշնակիցների մասնակցությունը խաղաղության կոնգրեսին և պայմանագրի կնքմանը: Ռիշելյեն կարևորում էր ազնիվ կամ համընդհանուր խաղաղության գաղափարները (Pax honesta, pax universali): Անգամ 1636 թ. իսպանական և կայսերական բանակների հաղթարշավի ժամանակ, երբ Ֆրանսիան ռազմական պարտության վտանգի առջև էր կանգնած, Ռիշելյեն մերժեց առանձին խաղաղություն կնքելու կայսեր առաջարկը: Նա համոզված էր, որ նույնիսկ նման լրջագույն և վտանգավոր հանգամանքներում Ֆրանսիայի համար ընդունելի կարող էր լինել բացառապես ազնիվ խաղաղությունը (Pax honesta), ինչն անհնար էր առանց դաշնակիցների²⁶:

Եվրոպան՝ որպես քաղաքական միավոր և հղացք, սկսում էր ավելի ու ավելի շատ վկայակոչվել դիվանագիտական քարոզչության մեջ: Ռիշելյեն պնդում էր, որ Հաբսբուրգների գերիշխանությունից պաշտպանելու է ոչ միայն գերմանական իշխանությունների ազատությունները, այլև Եվրոպան: Իրավագետների խոսույթում դեռ գերակշռում էին հռոմեական կամ Հին Կտակարանի նախադեպերը ազգերի իրավունքի (Jus Gentium) շուրջ, ինչն արտահայտում էր կայսրության կամ ընտրյալ ժողովրդի հավակնությունները: Սակայն հանգամանքներն այլևս աննպաստ էին, քանզի կայսրությունը և պապականությունը՝ իբրև համընդհանրական վերազգային հաստատություններ, փաստորեն դադարեցին գործել: Իր աշխատություններում Հուգո Գրոցիուսը նախագծեց անցումը ազգերի իրավունքից միջազգային իրավունքին (jus gentium → jus inter gentes): Նա ձգտում էր ցույց տալ, որ այս նոր իրավիճակում պետությունների շահերից է բխում օրենքի գերակայության ընդունումը, քանզի իրենց գոյության պահպանման համար անհրաժեշտ է որոշակիորեն կազմակերպված ազգերի համայնք: Պետությունները պետք է ունենան հավասար իրավունքներ, նույնիսկ եթե նրանք չունեն դրանք պաշտպանելու հավասար ուժեր: Այս սկզբունքները որոշ առումով նպաստեցին ազգերի էվրոպական համայնքի զարգացմանը²⁷:

Փաստորեն Երեսնամյա պատերազմի բոլոր կողմերը հայտարարում էին, որ իրենց պատերազմի նպատակը խաղաղությունն է (finis

²⁵ Տե՛ս **Rowen H. H.**, The Peace of Westphalia Revisited, «The Journal of Modern History» Vol. 33, No. 1 (The University of Chicago Press, Mar., 1961), էջ 53-56:

²⁶ Տե՛ս **Kampmann Ch.**, Peace Impossible? The Holy Roman Empire and the European State System in the Seventeenth Century. // «War, the State, and International Law in Seventeenth-Century Europe». Farnham, Burlington: Ashgate Publishing, 2010, էջ 207-208:

²⁷ Տե՛ս «The Decline of Spain and the Thirty Years War 1609-48/59», էջ 6:

belli pax esto)²⁸: Միևնույն ժամանակ, Երեսնամյա պատերազմի ընթացքում իսկապես գոյություն ունեւր պետությունների համակարգ և մշտական կապ ու բանակցելու պատրաստակամություն պատերազմող կողմերի միջև: Իսկ քաղաքական վերնախավում միմյանց ոչնչացնելու մտադրությունը գերակշռող չէր: Մակայն այս ամենը չկանխեց պատերազմը²⁹:

3. Վեստֆալյան խաղաղությունը (1648 թ.)

Խաղաղության բանակցությունները պայմանականորեն կարելի է բաժանել երեք փուլի: Առաջին փուլը հիմնականում ընթացակարգային էր և սկսվեց 1643 թ. հունվարին Ֆրանկֆուրտում՝ որոշ ընդհատումներով տևելով մինչև 1645 թ. նոյեմբեր, երբ կայսերական պատվիրակության ղեկավար կոմս Տրաուտմանդորֆը ժամանեց Մյունստեր: Երկրորդ փուլը ձգվեց մինչև 1647 թ. հունիս, երբ կոմսը մեկնեց: Վերջին փուլը տևեց մինչև 1648 թ., երբ կնքվեցին խաղաղության երեք պայմանագրերը³⁰:

Վեստֆալի կոնգրեսի պաշտոնական բացումը եղավ 1643 թ. հուլիսի 11-ին: Վերջապես 1645 թ. օգոստոսի 29-ին Ֆերդինանդ 3-րդ կայսրը համաձայնեց, որ գերմանական իշխանությունները լիիրավ մասնակցեն Վեստֆալի կոնգրեսին³¹: Այն իսկապես համաեվրոպական կոնգրես էր, ուր ներկայացված էին Եվրոպայի բոլոր քաղաքական ուժերը՝ բացի Անգլիայից, Լեհաստանից, Ռուսաստանից և Օսմանյան կայսրությունից³²: Վեստֆալյան բանակցություններում դերակատարների ուժերի հավասարակշռումը (equilibrium) դարձավ ընդհանուր անվտանգության քաղաքականության առաջնային կանոն: Երբ մեկը հզորանում է, մյուսները ընդդիմադիր միություններ և դաշինքներ են կազմում հավասարակշռությունը (equipoise) պահպանելու համար: Նույնիսկ պապական կուրիան (Papal Curia) 1632 թ. իր դիվանագետներին հիշեցնում էր, որ ուժերի հավասարակշռությունը «Հռոմեական եկեղեցու շահերից» է բխում³³:

Կաթոլիկ պետությունների ներկայացուցիչները բանակցելու համար հավաքվել էին Վեստֆալիայի կաթոլիկ հատվածում՝ Մյունստերում, իսկ բողոքականները՝ Օսնաբրյուկում³⁴: Նախնական պայմանագիրը կայսեր և Ֆրանսիայի միջև ստորագրվեց Մյունստերում 1646 թ. սեպտեմբերի 13-ին, վերջնականը՝ 1648 թ. հոկտեմբերի 24-ին: Կայսեր և Շվեդիայի միջև նախնական պայմանագիրը կնքվեց 1647 թ. փետրվարի 18-ին Օսնաբրյուկում, վերջնականը՝ 1648 թ. մայիսի 15-ին, ինչը համա-

²⁸ Տե՛ս **Kampmann Ch.**, նշվ. աշխ., էջ 205:

²⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 210:

³⁰ Տե՛ս «The Thirty Years' War», Parker G. (ed.), Second edition, London and New York: Routledge, Taylor & Francis e-Library, 2006, էջ 155:

³¹ Տե՛ս **Bonney R.**, նշվ. աշխ., էջ 86:

³² Տե՛ս «The Decline of Spain and the Thirty Years War 1609-48/59», էջ 352:

³³ Տե՛ս «The Thirty Years' War», էջ 159:

³⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 156:

պատասխան էր Ֆրանսիայի հետ նախնական պայմանագրին: 1648 թ. հունվարի 30-ին՝ Նիդերլանդների և Իսպանիայի միջև կնքված անջատ հաշտության պայմանագրից հետո, որով ճանաչվում էր Նիդերլանդների ինքնիշխանությունը, Ֆրանսիան, ի դեմս կարդինալ Մագարինիի, պահանջեց, որ կայսրությունը չեզոք դիրք գրավի ֆրանս-իսպանական շարունակվող կոնֆլիկտում, ինչն ընդունվեց Ֆերդինանդ 3-րդի կողմից: Խաղաղությունը ավելի հարատև դարձնելու համար 1648 թ. հոկտեմբերի 24-ի ֆրանս-կայսերական հաշտության պայմանագրի մեջ ընդգրկվեցին նաև շվեդա-կայսերական և կոնգրեսին մասնակից կայսրության միավորների կնքած պայմանագրի շատ դրույթներ³⁵: Արդյունքում ստացվեց փոխկապակցված փաստաթղթերի ամբողջություն՝ հաստատելով «Վեստֆալյան խաղաղությունը» (Pax Westphalica): Ֆրանս-շվեդական դաշինքը Վեստֆալյան պայմանագրերով հաստատված եվրոպական պետությունների նորաստեղծ համակարգի անկյունաքարն էր³⁶: Պայմանագրերի լեզուն լատիներենն էր: Շուտով ֆրանսերենը փոխարինեց լատիներենին՝ իբրև դիվանագիտության, գիտության և Եվրոպայի ընդհանուր լեզու³⁷: Բանակցություններում ծախսված հինգ տարիները (1643-1648 թթ.) Վեստֆալի խաղաղության կոնգրեսը դարձրին Եվրոպայի արդի պատմության համանման ամենաերկարատև գործընթացը:

Վեստֆալի պայմանագրով Սրբազան հռոմեական կայսրության իշխանությունները իրենց տարածքներում ստացան գերիշխանություն, բայց ոչ ինքնիշխանություն: Նրանք իրավունք ստացան վարելու իրենց սեփական արտաքին քաղաքականությունը, սակայն նրանց թույլատրված չէր գործելու ի վնաս կայսեր կամ կայսրության³⁸: Բայց գործնականում նրանք կարող էին և գործում էին՝ մտնելով նաև արտաքին դաշինքների մեջ: Իսկ կայսրը իր հերթին պահպանում էր հակաօրինական գործողության դեպքում իշխանությունների կառավարիչներին գահընկեց անելու իրավունքը: Կայսրությունից առանձնացավ և իբրև ինքնիշխան պետություն ձևավորվեց Շվեյցարական համադաշնությունը (Confoederatio Helvetica): Երաշխավորվում էր նաև շվեյցարական կանտոնների անձեռնմխելիությունը: Այսպիսով, կայսրությունը ժառանգական բացարձակ միապետության վերածելու Հաբսբուրգների փորձերը ձախողվեցին³⁹: Միաժամանակ լուծարվեց նաև 1617 թ. Օնատի պայմանագրով ձևակերպված՝ իսպանական և ավստրիական

³⁵ Տե՛ս «Treaty of Westphalia: Peace Treaty between the Holy Roman Emperor and the King of France and their respective Allies», *Yale Law School; Lillian Goldman Law Library, The Avalon Project: Documents in Law, History and Diplomacy*. URL:// http://avalon.law.yale.edu/17th_century/westphal.asp (28.05.2015).

³⁶ Տե՛ս «The Decline of Spain and the Thirty Years War 1609-48/59», էջ 433:

³⁷ Տե՛ս **Treasure G.**, նշվ. աշխ., էջ 5:

³⁸ Տե՛ս **Sonnino P.**, Mazarin's quest: the Congress of Westphalia and the coming of the Fronde. Cambridge, Massachusetts, London: Harvard University Press, 2008, էջ 8:

³⁹ Տե՛ս **Teschke B.**, նշվ. աշխ., էջ 244:

Հաբսբուրգների համընդհանրական միությունը⁴⁰: Կայսրությունը դարձավ լոկ աշխարհագրական հասկացություն, և նրա տարածքի վրա իբրև քաղաքական միավորներ կայացան Ավստրիան, Բավարիան, Սաքսոնիան և Բրանդենբուրգը՝ ապագա Պրուսիան⁴¹: Պատերազմը առաջացրեց ժողովրդագրական ահռելի փոփոխություններ: Ըստ վերջին հաշվարկների՝ Սրբազան հռոմեական կայսրության բնակչությունը նվազեց 20 տոկոսով, ինչը վերականգնվեց միայն 1700 թ.⁴²: Մինչև Երկրորդ աշխարհամարտը, Երեսնամյա պատերազմը Գերմանիայի պատմության ամենացավոտ շրջափուլն էր: Մարդկային և նյութական կորուստները ավելի մեծ էին, քան Երկրորդ աշխարհամարտում: Մշակութային և տնտեսական խափանումը ևս պահպանվեց ավելի երկար⁴³:

Պապի նվիրակը դատապարտեց համաձայնագրերի ողջ փաթեթը, քանի որ հակասում էր եկեղեցու շահերին: Իսպանիան ևս իր դժգոհությունն արահայտեց՝ կայսերը մեղադրելով դավաճանության մեջ⁴⁴: Կաթոլիկները, ինչպես և բողոքականները անտեսեցին պապի դժգոհությունը՝ ուղղված խաղաղության պայմանագրերի այն դրույթների դեմ, որոնք ձեռնառու չէին կաթոլիկ եկեղեցուն: Ինքնիշխան պետությունների ներքին գործերին միջամտելու եվրոպական վերազգային կրոնական իշխանության ձգտումը մերժվեց: Մինչև ֆրանսիական հեղափոխությունը Վեստֆալյան խաղաղությունը համարվում էր եվրոպական պետությունների համակարգի հիմքը: Երկու պետությունների՝ Նիդերլանդների Միացյալ Նահանգների և Շվեյցարիայի Համադաշնության անկախության ճանաչումը ամրապնդեց այն համոզմունքը և պատասխանատվությունը, որ միայն եվրոպական կոնգրեսը կարող է վավերացնել պետությունների ստեղծումը կամ վերացումը⁴⁵:

1648 թ. Վեստֆալի պայմանագրով Շվեդիան դարձավ Եվրոպական քաղաքականության առանցքային դերակատարներից մեկը: Քաղաքականապես «վեստֆալյան կարգավորումները վերահաստատեցին Գերմանիայի մասնատվածությունը և ամրապնդեցին բողոքականության դիրքերը Եվրոպայում⁴⁶:

Վեստֆալյան պայմանագրերը երկակի բնույթ ունեին. միաժամանակ և՛ միջազգային, և՛ գերմանական սահմանադրական իրավունքի գործիքներ էին: Գերմանական սահմանադրության բարձրացումը միջազգային հանրային իրավունքի մակարդակի նշանակում էր ներգեր-

⁴⁰ St' u «A Companion to the Reformation World», էջ 278-286:

⁴¹ St' u **Веджвуд С. В.** Тридцатилетняя война. М., 2012, էջ 561-563:

⁴² St' u «The Thirty Years' War», էջ 178:

⁴³ St' u նույն տեղը, էջ 181:

⁴⁴ St' u **Веджвуд С. В.**, նշվ. աշխ., էջ 546:

⁴⁵ St' u «The Decline of Spain and the Thirty Years War 1609-48/59», էջ 358:

⁴⁶ St' u **Ringmar E.**, նշվ. աշխ., էջ 9:

մանական քաղաքականության միջազգայնացում. գերմանական իշխանությունների սահմանադրական ազատությունը կայսրից երաշխավորվում էր Ֆրանսիայի և Շվեդիայի կողմից: Վեստֆալի պայմանագրի կետերը խախտելու դեպքում Ֆրանսիային և Շվեդիային իրավունք էր վերապահված միջամտելու կայսրության ներքին գործերին: Երբ Նապոլեոն Բոնապարտը 1806 թ. վերացրեց կայսրությունը, Շվեդիան՝ իբրև Վեստֆալի պայմանագրի երաշխավոր, ընդդիմացավ⁴⁷:

Մինչև 1806 թ. Վեստֆալյան պայմանագրերը դիտվում էին իբրև կայսրության հիմնարար սահմանադրություն և անգամ Կենտրոնական Եվրոպայում կարգերի պահպանման սկզբունքային երաշխավոր: 1866 թ. Ֆրանսիայի երկրորդ նախագահ և պատմագետ Ալֆոնս Տիեռը (1797-1877 թթ.) պնդում էր. «Եվրոպական քաղաքականության բարձրագույն սկզբունքն է, որ Գերմանիան կազմված լինի անկախ պետություններից՝ կապված միայն դաշնային նուրբ թելերով: Սա էր Վեստֆալի կոնգրեսում ողջ Եվրոպայի կողմից հռչակված սկզբունքը»⁴⁸: Առաջինը Նապոլեոնն է, որ արդարացնում էր իր վարած միջազգային քաղաքականությունը և նվաճումները ազգային և մշակութային տարրերի գերակայության հենքով⁴⁹:

Եվրոպայում պատերազմը չավարտվեց անմիջապես 1648 թ.: Արևելքում, Կրետեի պատերազմից հետո, հասունանում էր ավստրիական Հաբսբուրգների և թուրքերի միջև բախումը: Էլզասի և Լոթարինգիայի անցումը Ֆրանսիային ևս բարդություններ առաջացրեց: Էլզասում տասը ամենամեծ քաղաքները պահպանեցին կայսրության անդամի իրենց կարգավիճակը և ներկայացուցիչներ ունեին կայսրության պառլամենտում⁵⁰: Երեսնամյա պատերազմի անվիճելի հաղթողները՝ Ֆրանսիան և Շվեդիան, շարունակեցին պատերազմել իրենց հարևանների դեմ հետագա շուրջ վեց տասնամյակների ընթացքում: Սակայն այս պատերազմներն այլևս չունեին կրոնական երանգ⁵¹:

Ֆրանսիայի համար դեռ մնում էր իսպանական Հաբսբուրգների սպառնալիքը, որոնք գերիշխում էին Հարավային Եվրոպայում և նշանակալի քաղաքական ուժ էին հակառեֆորմացիայի թիկունքում⁵²: 1658 թ. կարդինալ Մազարինին (1642-1661 թթ.) գերմանական որոշ պետությունների փորձում էր համոզել միանալու Ֆրանսիայի կողմից ուղղորդվող Հոննոսյան լիգային՝ հավաքական անվտանգության համակարգ ստեղծելու նպատակով: Սակայն գերմանական պետությունները

⁴⁷ Տե՛ս **Teschke B.**, նշվ. աշխ., էջ 244:

⁴⁸ «The Thirty Years' War», էջ 182:

⁴⁹ Տե՛ս «The Decline of Spain and the Thirty Years War 1609-48/59», էջ 4:

⁵⁰ Տե՛ս «The Thirty Years' War», էջ 183:

⁵¹ Տե՛ս նույն տեղը, էջ 184:

⁵² Տե՛ս **Ward W. R.**, Christianity under the Ancien Re'gime, 1648–1789: New Approaches to European History, series editors - William Beik and T. C. W. Blanning. Cambridge: Cambridge University Press, 2004, էջ 34-35:

մերժեցին այս գաղափարը. Վեստֆալի պայմանագիրը վերջնական էր, և հավաքական անվտանգությունն այլևս անհրաժեշտ չէր⁵³:

Ֆրանս-իսպանական հակամարտությունը շարունակվեց մինչև 1659 թ. Պիրենեյների հաշտության պայմանագիրը՝ ավարտվելով Իսպանիայի դիրքերի թուլացմամբ: Իսպանիայի թագավոր Ֆիլիպ 4-րդի (1621-1665 թթ.) համար պատերազմի նպատակը արդեն Իբերական միասնության պահպանումն էր, որը չիրականացավ, քանզի 1668 թ. ճանաչվեց Պորտուգալիայի անկախությունը⁵⁴:

Իսպանական Հարսբուրգների բազմազգ կայսրությունը իբրև անարդյունավետ իշխանություն ևս փլուզվեց: Եվրոպական քաղաքականության ապագան պատկանում էր ազգային պետություններին՝ Ֆրանսիա, Անգլիա, Միացյալ Նիդերլանդներ և Շվեդիա, որոնք հասել էին որոշակի ինքնուրույնության և ամբողջականության: Մյուս կողմից, չնայած լեզվական և մշակութային ընդհանրությանը, խորացավ Գերմանիայի քաղաքական մասնատվածությունը, քանզի միջազգային հարաբերություններում դեռևս տիրապետող էին դինաստիական նկատառումները⁵⁵:

Սկսվեց բացարձակապետության ժամանակաշրջանը: Այս քաղաքական համակարգում թագավորները իրենց պետություններում համարվում էին բացարձակ ինքնիշխաններ, որոնք Հռոմի պապի նման ներկայացնում էին Աստծու իշխանությունը: Եվ ո՛չ պապը վերևում, ո՛չ էլ հպատակները կամ այլ իշխանական մարմին որևէ օրենքով կամ հանրային դաշինքով չէին կարող ընդհատել ժառանգական թագավորական իրավահաջորդությունը, որը կարգել էր Աստված⁵⁶: Բացարձակ միապետական կարգերը սպառնում էին եկեղեցիների անկախությանը և քրիստոնեական կոսմոպոլիտիզմին, իսկ եկեղեցիներն իրենց հերթին, ելնելով իրենց կորպորատիվ շահերից, հակված էին ավելի ռազիոնալ քաղաքական համակարգի⁵⁷:

Միջազգային հարաբերությունների նեոմարքսիստական քննադատական տեսության համաձայն՝ բացարձակապետության դարաշրջանի Եվրոպայում 1648 թ.-ից հետո էլ առաջնորդվում էին ոչ թե ազգային, այլ դինաստիական շահերով: Միջազգային հարաբերությունների համակարգի կայացումը, գործունեությունը և կերպափոխումը գերազանցապես ղեկավարվում էին սոցիալական ունեցվածքային հարաբերություններով: Դիվանագիտության բարձրագույն մեխանիզմը դինաստիական ամուսնություններն էին, որոնք ոչ միայն բնութագրում էին «միջազ-

⁵³ Տե՛ս **Bonney R.**, նշվ. աշխ., էջ 88, 90:

⁵⁴ Տե՛ս **Kennedy P. M.**, *The Rise and Fall of the Great Powers: Economic Change and Military Conflict from 1500 to 2000*. London, Sydney and Wellington: Unwin Hyman, 1988, էջ 41:

⁵⁵ Տե՛ս «The Decline of Spain and the Thirty Years War 1609-48/59», էջ 3:

⁵⁶ Տե՛ս **Treasure G.** (1985), նշվ. աշխ., էջ 183-184:

⁵⁷ Տե՛ս **Ward, W. R.**, նշվ. աշխ., էջ 155:

գային» հարաբերությունները, այլև հաստատում էին իշխողների շահամետ ծավալապաշտական ռազմավարությունը: Ինչպես Բեննո Թեսչքն է նշում. «Մա աշխարհաքաղաքական կարգ էր, որում «պետությունները» կարող էին ամուսնանալ «պետությունների» հետ»⁵⁸: Այս միություններն ապահովում էին տարբեր տարածքներով պետությունների ներգրավվածությունը մեկ քաղաքական տարածության մեջ: Այս առումով եվրոպական քաղաքականությունը Հաբսբուրգների, Բուրբոնների, Ստյուարտների, Հոհենցոլերնների, Ռոմանովների, Վիտելսբախների և այլ միապետական տների հարաբերություններ էր: Բացի այդ, կարևոր դեր ունեին նաև անդրազգային միջազնվականական միությունները:

4. Վեստֆալյան համակարգը. միջազգային հարաբերությունների արդի դարաշրջանի մեկնարկը

1648 թ. Մյունստերի և Օսնաբրյուկի պայմանագրերը, որոնք միասին հայտնի են որպես Վեստֆալի պայմանագիր, ձևավորեցին միջազգային հարաբերությունների և իրավունքի նոր հարացույց ու համակարգ՝ հիմնված երեք հիմնական սկզբունքների վրա՝ պետական ինքնիշխանություն, ինքնիշխան պետությունների իրավահավասարություն և ինքնիշխան պետությունների ներքին գործերին չմիջամտելու պարտավորություն⁵⁹:

Ուստի Վեստֆալյան համակարգ մտած ինքնիշխան պետությունները ունեին լիակատար իշխանություն իրենց տարածքում և իրավահավասար էին միջազգային ասպարեզում⁶⁰: Հետագայում այս սկզբունքները զարգացան և վերածվեցին միջազգային իրավունքի: Իշխանությունը, որ նախկինում բխում էր մի քանի կենտրոններից՝ ֆեոդալական, եկեղեցական և քաղաքացիական, այժմ համախմբվում է պետության կամ միապետի վերահսկողության ներքո⁶¹:

Վեստֆալյան համակարգը ոչ միայն սկզբունքների հավաքականություն է կամ միջազգային պայմանագրերի ամբողջություն, այլ նաև պետությունների ու ռեժիմների ամբողջություն է: Այն նախ և առաջ այնպիսի համակարգ է, որն իր բնականոն կենսագործունեության ապահովման համար խնդիր ունի համարժեք պատասխաններ տալու ներքին և արտաքին մարտահրավերներին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ զարգանալ, կերպավորվել և հարմարվել հարափոփոխ աշխարհի պայմաններին: Վեստֆալյան համակարգի կերտողները ինքնիշխանության սկզբունքի միջոցով ոչ միայն դրեցին նոր միջազգային

⁵⁸ Teschke B., նշվ. աշխ., էջ 225:

⁵⁹ Տե՛ս Rosenau J. N. and Czempiel E. O. (ed.), *Governance without government: order and change in world politics*. Cambridge, New York: Cambridge University Press, 2003, էջ 59:

⁶⁰ Տե՛ս Лебедева М. М. Что угрожает Вестфалию? // «Международные процессы: Журнал теории международных отношений и мировой политики», 2008, январь–апрель, т. 6, № 1(16), էջ 117-121:

⁶¹ Տե՛ս Treasure G., նշվ. աշխ., էջ 185-186:

քաղաքական համակարգի հիմքերը, այլև հետագա զարգացման և կերպարվածության հնարավորություն ստեղծեցին:

Վեստֆալյան պայմանագրերը ստորագրած պետությունները կազմեցին Վեստֆալյան համակարգը: Հատկանշական է, որ Վեստֆալյան համակարգում ընդգրկված պետությունները դիտարկվում էին «վեստֆալյան չափումներով», իսկ համակարգից դուրս մնացածները՝ բոլորովին այլ կերպ. այստեղ ևս դրսևորվում են Վեստֆալի համակարգային բնույթը, ամբողջականությունը և «նույնականությունը»: Վեստֆալյան կարգավորումներով վերացվեց 1555 թ. Աուգսբուրգի հաշտության պայմանագրի «*cuius regio, eius religio*» (այն է՝ հպատակները դավանում են իրենց տիրակալի հավատքը)⁶² դրույթը՝ առաջ քաշելով կրոնական ինքնորոշման գաղափարը: Վեստֆալյան խաղաղությունը ուրվագծեց այսպես կոչված «կրոնական պատերազմների» ավարտը, ինչը ներկայիս դիտանկյունից կարելի է անվանել նաև «սկզբունքային պատերազմներ»: Սա շարունակվեց ոչ գաղափարաբանական՝ ժառանգության իրավունքի համար պատերազմների միջակայքով, մինչև որ Ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակաշրջանում պատերազմը կրկին դարձավ «սկզբունքային»⁶³:

Վեստֆալյան խաղաղությունից հետո եվրոպական միջազգային համակարգում դրսևորվեց ինչպես պետությունների իրավահավասար համակեցության սկզբունքը, այնպես էլ դրա հաղթահարման փորձերը: Եվ ամենանշանավորը, թերևս, Ֆրանսիայի արքա Լյուդովիկոս 14-րդի (*Roi soleil*) փորձն էր, որն ավարտվեց «Իսպանական ժառանգության համար» պատերազմով: Բացի այդ, մի կողմից Բրիտանիան էր հանդես գալիս համընդհանրականության դիրքերից՝ իբրև Եվրոպայի իրավարար և ծովերի կայսրություն, մյուս կողմից՝ Ռուսաստանը՝ «երրորդ Հռոմի» գաղափարով և Պետրոս Մեծի կողմից կայսրության հռչակումով: 17-րդ դարի վերջին Եվրոպայում իր գերիշխանության ձգտումներով դեռևս կարևոր գործոն էր նաև Օսմանյան կայսրությունը⁶⁴:

Ժառանգության իրավունքի համար պատերազմներից հատկապես կարևոր էին «Իսպանական ժառանգության համար» պատերազմը (1701-1714 թթ.) և Ուտրեխտի 1713 թ. պայմանագիրը, որտեղ ուժերի հավասարակշռության սկզբունքը դարձավ միջազգային հարաբերությունների ճանաչված նորմ⁶⁵, որի հիմնական գաղափարը ինքնորոշումն էր, ոչ թե խաղաղությունը: Մեծ Բրիտանիան⁶⁶, 1713 թ. Ուտրեխտի պայմանագրով ստանալով Ջիբրալթարը և Մինորկա կղզին, հրաժար-

⁶² Տե՛ս «The Thirty Years' War», էջ 157:

⁶³ Տե՛ս **Rowen H. H.**, նշվ. աշխ., էջ 54:

⁶⁴ Տե՛ս **Burkhardt J.**, *Wars of States or Wars of State-Formation?* էջ 27:

⁶⁵ Տե՛ս **Teschke B.**, նշվ. աշխ., էջ 233:

⁶⁶ 1707 թ. Անգլիայի և Շոտլանդիայի միջև միության մասին պայմանագրով (*Treaty of Union*) ձևավորվում է Մեծ Բրիտանիայի թագավորությունը:

վեց մայրցամաքային Եվրոպայում տարածքային պահանջներից և պատրաստակամություն ու կարողություն ցուցաբերեց կարգավորելու հարաբերությունները «ակտիվ հավասարակշռման» իր նոր քաղաքականությամբ⁶⁷: Իսկ Ֆրանսիայի և Ավստրիայի միջև «Իսպանական ժառանգության համար» պատերազմը եզրափակող 1714 թ. մարտի 7-ի Ռաշտատի պայմանագրի լեզուն արդեն ոչ թե լատիներենն էր, այլ ֆրանսերենը⁶⁸: Այսպիսով, Ուտրեխտի և Ռաշտատի պայմանագրերով զսպվեցին Ֆրանսիայի արքա Լյուդովիկոս 14-րդի համընդհանրական միապետության կառուցման ձգտումները, և նորոգվեց եվրոպական միջազգային կարգը, ուր շահեկան դիրք ստացավ Մեծ Բրիտանիան. հավասարակշռություն հաստատվեց մայրցամաքային Եվրոպայում, մինչդեռ ծովում Մեծ Բրիտանիան ազատվեց հակակշիռներից⁶⁹: Մեծ Բրիտանիան միակ եվրոպական պետությունն էր, որի ազգային շահերը պահանջում էին ոչ թե ծավալապաշտություն Եվրոպայում, այլ ուժերի հավասարակշռության պահպանում: Ինչպես մի առիթով ասել է Անգլիայի թագավոր Ուիլյամ 3-րդ Օրանացին (1689-1702 թթ.), եթե ինքն ապրեր 1550-ականներին, երբ Հաբսբուրգները տիրապետության էին ձգտում Եվրոպայում, ինքը կլիներ «նույնչափ ֆրանսիացի, որքան հիմա իսպանացի է»⁷⁰:

Այսպիսով, Վեստֆալի խաղաղության կոնգրեսը հաջողությամբ ամփոփեց «պետականաշինության պատերազմը» ձևափոխելով միջազգային իրավունքը և ներկայացնելով իրավահավասար պետությունների համագոյակցության նոր մոդելը՝ իբրև Եվրոպայի կազմակերպման լեգիտիմ միջոց⁷¹: Վեստֆալյան խաղաղությունը եզրափակեց ինքնիշխանության փոխանցման գործընթացը վերազգային հաստատություններից՝ պապականությունից և կայսրությունից դեպի ներքև և անդրազգային ֆեոդալական ու քաղաքացիական միավորներից դեպի վերև՝ պետություններին, որոնք հաճախ մարմնավորում էին միապետի անձը: Այս կերպ Վեստֆալյան համաձայնագրերը խորհրդանշում են միջնադարյան համընդհանրական-հիերարխիկ աշխարհակարգի փոխակերպումը ինքնիշխան պետությունների հորիզոնական կարգի: Ըստ այդմ՝ պետությունների շուրջը սկսեց զարգանալ արդի դարաշրջանին բնորոշ նոր տեսակի քաղաքական կյանքը՝ միջազգային քաղաքականությունը: Եթե մինչև 1648 թ. Եվրոպայում պատերազմում էին միապետները, ապա Վեստֆալյան հաշտությունից հետո սկսեցին պատերազմել պետությունները՝ ի դեմս միապետների: Վեստֆալյան համակարգում ինքնիշխանությունը առաջին անգամ դարձավ նաև պե-

⁶⁷ Տե՛ս **Teschke B.**, նշվ. աշխ., էջ 259:

⁶⁸ Տե՛ս **Treasure G.**, նշվ. աշխ., էջ 283:

⁶⁹ Տե՛ս **Kennedy P. M.**, նշվ. աշխ., էջ 105-106:

⁷⁰ **Kissinger H. A.**, նշվ. աշխ., էջ 72:

⁷¹ Տե՛ս «A Companion to the Reformation World», էջ 285:

տության հատկանիշ, այլ ոչ թե միայն միապետի: Մինչև 1648 թվականը ևս եղել են այսպիսի քաղաքական համակարգերի ստեղծման ինչպես իրական, այնպես էլ իդեալական փորձեր (Հին Հունաստանը իր քաղաք-պետություններով, Հռոմեական կայսրությունը, Արաբական խալիֆայությունը և այլն): Սկզբունքներն ամենուրեք տարբեր էին: Սակայն միայն վեստֆալյան սկզբունքներն են դարձել համաշխարհային:

Բանալի բառեր – *Երեսնամյա պատերազմ, Վեստֆալյան խաղաղություն, արդի պետություն, ինքնիշխանություն, աշխարհակարգ, աշխարհաքաղաքական հիերարխիա, միջազգային անարխիա, միջազգային համակարգ*

ТИГРАН ЕПРЕМЯН – Вестфальская система как поворотная веха современной европейской политики. – В статье анализируется переход европейской политики от универсального мирового порядка средних веков к современной системе международных отношений. Поворотным событием в их истории явился Вестфальский мир (1648). Он символизировал переход от системы политического правления, основанной на иерархических структурах средневекового христианского мира, к горизонтальной системе суверенных государств. В средние века ещё имел значение постримский имперский миф. В эпохи Возрождения и Реформации на смену папству и империи с их иерархией в западнохристианский мир пришёл национальный индивидуализм. После Вестфальского мира межгосударственные отношения, основанные на взаимном признании суверенитета, вытеснили связи между разного рода феодальными негосударственными субъектами. Европейская политика дифференцировалась на внутреннюю и международную сферы. Государства стали единственными политическими акторами, регулировались суверенными правителями, не признавая конкуренции ни сверху, ни снизу. Секуляризация и присущая ей идея самоопределения повлекли за собой принцип мирного сосуществования юридически равноправных членов международного сообщества. Понятие универсального мирового порядка теперь означало не прямое правление супергосударства, но превосходство конкретного монарха в системе фрагментированных суверенитетов.

Ключевые слова: *Тридцатилетняя война, Вестфальский мир, современное государство, суверенитет, мировой порядок, геополитическая иерархия, международная анархия, международная система*

TIGRAN YEPREMYAN – Westphalian System as a Crucial Milestone of Modern European Politics. – The paper comparatively analyzes and illustrates the transition of European politics from the medieval universal world order to the modern international relations system. The Peace of Westphalia (1648) was a turning point in the history of international relations. It symbolized the transformation from the system of political rule based on the hierarchical structures of medieval Christendom to the horizontal system of sovereign territorial states. Throughout the middle ages, the post-Roman myth of the empire still had a great significance. The rising sense of national individualism was promoted by the Renaissance and Reformation, which replaced the Papacy and Empire upon which the hierarchies of western Christendom had been centered. As a result, after the Peace of Westphalia formalized relations between modern states based on mutual recognition of sovereignty displaced the criss-crossing relations

between heterogeneous feudal and non-state actors organized by the hierarchical claims of the Empire and the Church. With the consolidation of the means of violence by sovereigns and the emergence of territorially bounded states, the European politics was differentiated into distinct domestic and international spheres. Thus, sovereign states became the only legitimate political actors which were governed by sovereign rulers, acknowledging no rival authorities above them and none below. These processes affected the international dimension of conflict by furthering the fragmentation of Europe into distinct states. Around the states a new kind of political life – international politics – started to develop. The start of the secularization and its adjacent idea of self-determination entailed the principle of peaceful coexistence among legally equal members of international society. However, the concept of a universal world order remained on the political agenda, but it meant only the preeminence of a monarch within a system of fragmented and overlapping sovereignty rather than direct rule over a European super-state.

Key words: *Thirty Years' War, Peace of Westphalia, modern state, sovereignty, world order, geo-political hierarchy, international anarchy, international system*

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԳԱՐԻԿ ՔԵՆՅԱՆ

Մտոր պատերազմի ժամանակաշրջանից հետո հավաքական անվտանգությանը վերաբերող միջազգային իրավունքի նորմերում տեղի ունեցան էական փոփոխություններ: Խաղաղության և միջազգային անվտանգության ապահովման խնդիրը նոր բովանդակություն ստացավ: 1992 թ. հունվարի 31-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամ պետությունների և կառավարությունների ղեկավարները եկան միասնական եզրահանգման, որ առաջին անգամ լավ հնարավորություն է ստեղծվել՝ հասնելու համընդհանուր միջազգային խաղաղության ու անվտանգության¹: Միաժամանակ նրանք խոստովանեցին, որ միջազգային հարաբերություններում տեղի ունեցող փոփոխությունները հղի են գլոբալ անվտանգության և կայունության դեմ ուղղված նոր մարտահրավերներով: Երկբևեռ աշխարհակարգի վերացումից և գաղափարական դիմակայության ավարտից հետո ի հայտ եկան մի շարք սուր խնդիրներ: Աճեց տեղային հակամարտությունների քանակը արդեն ոչ միայն պետությունների միջև, այլև նրանց ներսում: Թշնամության հին օջախներին ավելացան նոր, էլ ավելի վտանգավորները, որոնք ծնվեցին էթնիկական, կլանային, կրոնական անհանդուրժողականությունից և ագրեսիվ նացիոնալիզմից: Բացի այս, սրությամբ դրվեցին միջազգային ահաբեկչության, թմրանյութերի վաճառքի և զանգվածային ոչնչացման զենքերի տարածման խնդիրները, որոնք խորանում են նաև միջազգային ահաբեկչության վտանգի ավելացման և գլոբալացման հետևանքով: Հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում լայնածավալ պատերազմների բացակայությունը ինքնին չի վերացնում միջազգային անվտանգության ու խաղաղության դեմ ուղղված մարտահրավերները, որովհետև դրանք արդեն ծնվում են ոչ այնքան ռազմական, որքան հումանիտար, տնտեսական, սոցիալական և էկոլոգիա-


¹ St' u «Заседание Совета безопасности ООН на уровне глав государств и правительств: заявление Председателя». Нью-Йорк, 31 января 1992 г. // <http://www.un.org/ru/documents/resguide/scsess.shtml>

կան բնագավառներում առկա անկայունությունից: Որպես օրինակ կարելի է նշել Հյուսիսի և Հարավի՝ տնտեսապես զարգացած և հետամնաց երկրների միջև եղած անդունդի խորացումը, որը հանգեցնում է Ասիայի և Աֆրիկայի ընդարձակ տարածաշրջաններում կոնֆլիկտայնության աճին՝ հաճախ վերածվելով տեղային պատերազմների: Հատկանշական է, որ սառը պատերազմի ավարտից տարիներ անց միջազգային անվտանգությունը չամրապնդվեց, այլ դարձավ առավել փխրուն: Ինչպես նշված է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի 1998 թ. ամենամյա հաշվետվության մեջ, անորոշությունն ու անկանխատեսելիությունը միջազգային հարաբերությունների մի քանի բնագավառներում մնում են միջազգային անվտանգության հիմնական սպառնալիքը²: Մի կողմից որոշ պետություններ, որոնք ունակ չեն սեփական երկրի բնակչության կառավարումն ու հուսալի պաշտպանությունը ապահովելու, գործը հասցրին արյունալի հակամարտությունների՝ այդ կերպ խափանելով աշխարհի տարբեր հատվածների անվտանգությունը: Մյուս կողմից վտանգավոր ռազմական տեխնոլոգիաների և զանգվածային ոչնչացման զենքի տարածումը իր հերթին ստեղծում է պոտենցիալ մեծ վտանգ գլոբալ անվտանգության համար: Օրինակ՝ Պակիստանի և Հնդկաստանի միջուկային փորձարկումները 1998 թ. մայիսին, որոնք լրջորեն վտանգեցին միջազգային անվտանգությունը և միջուկային զենք չտարածելու ռեժիմը: Սա առավել ահագնացող վտանգ էր, որովհետև անկախության ձեռքբերումից հետո Պակիստանը և Հնդկաստանը արդեն հասցրել էին երեք անգամ պատերազմել: Ուսումնասիրողների մեծ մասը գլոբալ անվտանգության առաջնային մարտահրավեր է համարում միջուկային զենք ունեցող պետությունների միջև հակամարտությունները: Ինչպես տեսնում ենք, նոր աշխարհաքաղաքական իրադրությունը և միջուկային զենքի միջազգային իրավական վերահսկմանն ու հավաքական անվտանգության մեխանիզմների կատարելագործմանն հրամայականները միջազգային հանրության առջև խնդիր են դնում միասնական մոտեցումներ մշակել՝ հենվելով նախորդ տասնամյակների փորձի վրա: Իսկ դա կրկին օրակարգային է դարձնում հավաքական անվտանգության լրացուցիչ համակարգեր ստեղծելու անհրաժեշտությունը:

Անվտանգության և խաղաղության ապահովումը համաշխարհային քաղաքականության արդի գործընթացներում դիտվում է որպես միջազգային-իրավական միջոցների կարգավորված ամբողջություն: Այն նախատեսված է միջազգային վեճերի լուծման, հավաքական անվտանգության համակարգերի ձևավորման, ագրեսիայի և պատերազմ-

² Տե՛ս «Справочник по документации Организации Объединенных Наций» // <http://www.un.org/ru/documents/resguide/scsess.shtml>

ների կանխարգելման, պատերազմների նյութական հենքի և տարածման ոլորտի կրճատման, զինված ուժերի ու զինատեսակների սահմանափակման, պետությունների ռազմական գործունեության միջազգային վերահսկման և ռազմական ոլորտում փոխադարձ վստահության ամրապնդման համար: Միջազգային անվտանգության համակարգն ընդգրկում է մի ամբողջ շարք բաղադրիչներ, որոնք պետք է ապահովեն միջազգային հարաբերությունների կայուն և անվտանգ զարգացումները: Այդ բաղադրիչներից առաջնային են խաղաղությանը սպառնացող միջազգային վեճերի կանխարգելիչ դիվանագիտությունը և միջազգային լայն համագործակցության կոլեկտիվ միջոցառումները: Համընդհանուր անվտանգություն ապահովելու համար միջազգային իրավունքն իր հերթին ներառում է նաև բազմաթիվ միջոցներ, որոնք կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.



Միջազգային անվտանգության ապահովման միջոցների մեջ ակնհայտ է հավաքական անվտանգության առաջնայնությունը: Արդի քաղաքագիտական գրականության մեջ հավաքական անվտանգության համակարգը դիտվում է որպես կոնկրետ աշխարհագրական տարածքում կամ ամբողջ աշխարհում ազդեցիկ և խաղաղության սպառնալիքներին դիմագրավելու և պետությունների համատեղ գործողությունների համակարգ: Ներկայիս համակարգերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, եղած տարբերությունների հետ մեկտեղ, նրանք ու-

նեն հիմնարար նմանություններ: Ցանկացած համակարգ հենվում է հավաքական անվտանգության միջպետական պայմանագրի վրա, որի մասնակիցները, կոնկրետ պարտավորություններին զուգահեռ, մեծ մասամբ ճանաչում են երեք հիմնական դրույթներ՝ վեճերի կարգավորում խաղաղ ճանապարհով, ուժի և ուժի սպառնալիքի չկիրառում, միջազգային հարաբերությունների առողջացման և խաղաղության դեմ ուղղված մարտահրավերների կանխման համագործակցություն: Միջազգային քաղաքականության զարգացումները ապացուցում են միջազգային հարաբերությունների պրակտիկայում հավաքական անվտանգության սկզբունքների աստիճանական և անվերադարձ ներդրման կարևորությունը: Այն, իհարկե, ընթացքում նաև կատարելագործվել է՝ ելնելով կիրառման արդյունքներից և փորձից: Անդրադառնալով խաղաղ կարգավորման և անվտանգության նոր մոդելի ձևավորման հիմնախնդիրներին՝ Լ. Իվանաշչենկոն կարևորում է հավաքական անվտանգության սկզբունքների մշակման առաջնահերթությունը³:

Հավաքական անվտանգության գաղափարն ունեցել է իր շարժընթացը: Այս հարցի ուսումնասիրողները առանձնացնում են **«հավաքական անվտանգություն»** հասկացության փոփոխության և էվոլյուցիայի մի քանի փուլեր: Գործընթացն սկսվում է 19-րդ դարի վերջերից, հասնելով մինչև մեր օրերը: Սկզբում միջազգային բախումների կանխման նպատակով քննարկվում էին հավաքական գործողությունների ծրագրեր, հավաքական անվտանգության ստեղծման նախադրյալներ: Այս առումով հատկանշական էին Հաագայում գումարված խաղաղության առաջին և երկրորդ միջազգային կոնֆերանսները 1899 և 1907 թվականներին, որոնք բավականին ներկայացուցչական էին մասնակից պետությունների և պատվիրակությունների քանակով: Առաջինին մասնակցում էր 27, երկրորդին՝ 44 պետություն: Կոնֆերանսներում ընդունված բանաձևերը, հռչակագրերն ու կոնվենցիաները մեծ մասամբ վերաբերում էին պատերազմների վարման և միջազգային ընդհարումների խաղաղ կարգավորման հիմնախնդիրներին: Հաագայի կոնֆերանսների կոնվենցիաներում ամրագրված դրույթները կարելի է համարել հավաքական անվտանգության գաղափարների սերմնավորում միջազգային քաղաքականության մեջ⁴:

Այնուհետև Ազգերի լիգայի հիմնադրումով (1919) «հավաքական անվտանգություն» հասկացությունը մշակվեց, դրվեց գիտական շրջանառության մեջ, և իրավաբանորեն ձևակերպվեցին նրա հիմնական

³ См. у **Иванашенко Л. А.** Формирование новой модели обеспечения военной безопасности // "Международное право в современном мире". М., 2011:

⁴ См. у «Дипломатический словарь». Т. 1. М., 1960, էջ 335-337 // <http://ve.academic.ru/95/%D0%93%D0%B0%D0%B3%D1%81%D0%BA%D0%B8%D0%B5>

սկզբունքները: Միջազգային այս առաջին համապարփակ կազմակերպության ծնունդը անմիջականորեն կապված էր հավաքական անվտանգության մեխանիզմների ստեղծման անհրաժեշտության հետ, որը համահունչ էր Առաջին աշխարհամարտից հետո կայուն խաղաղության հասնելու առաջադեմ հասարակության ձգտումներին: Լիգայի կանոնադրության մեջ ամրագրված էր, որ այն առաջին հերթին լինելու է խաղաղություն պահպանող և ագրեսիաների կանխմանը նպատակադրված միջազգային համագործակցություն սպասեցող կազմակերպություն: Ըստ կանոնադրության 10-րդ հոդվածի՝ Լիգայի անդամները պարտավորվում էին արտաքին ներխուժումից պահպանել միմյանց տարածքային ամբողջականությունը և քաղաքական անկախությունը⁵: 11-րդ հոդվածով Լիգայի խորհուրդը լիազորություններ էր ստանում պատերազմի վտանգի առկայության դեպքում դիմել խաղաղության պահպանմանը նպատակաուղղված միջոցառումների:

Հավաքական անվտանգության գաղափարի զարգացման առումով հատկանշական էին 12-ից 17-րդ հոդվածները, որոնք պարտավորեցնում էին անդամ պետություններին պատերազմ չսկսել միջպետական սուր վեճերի առկայության դեպքում և սպասել երրորդ կողմի դատական վճռին կամ Լիգայի խորհրդի որոշմանը: 13-րդ հոդվածով առաջին անգամ միջազգային պրակտիկայում ամրագրվում էր խաղաղության պարտադրումը, որովհետև Լիգայի խորհուրդը կարող էր իր որոշումների կատարման համար դիմել ուժային միջոցների: 15-րդ հոդվածը, որը մյուս հոդվածների համեմատ բավականին ծավալուն էր, մանրամասն անդրադառնում է միջպետական վեճերի լուծման ընթացակարգին, իսկ 16 և 17-րդ հոդվածները նախատեսում էին պատժամիջոցներ ազդեցոր պետության նկատմամբ: Ընդ որում, կանոնադրամբ թույլատրվում էր Ազգերի լիգայի միջամտությունը ոչ անդամ երկրների վեճերին: Նախքան Լիգայի ստեղծումը պետությունների լոկալ կազմավորումները գործունակ էին տարածաշրջանային բախումների ժամանակ, բայց անգոր էին աշխարհում միջազգային իրադրության վրա ազդելու հարցում: Նրանք չունեին հավաքական անվտանգության իրականացման գործառնություններ, սակայն պետք էր հաշվի առնել նրանց ձեռք բերած փորձը, որն օգտագործվեց Ազգերի լիգայի գործունեության ընթացքում: Միաժամանակ պետք է ընդգծել, որ Ազգերի լիգան չկարողացավ ստեղծել հավաքական անվտանգության կայուն համակարգ: Այստեղ բացակայում էր շահերի հավասարության սկզբունքով համընդհանուր խաղաղության պահպանման գործելակերպը: Ընդունված որոշումները պարունակում էին դրույթներ, որոնք ծառայում էին մեկ

⁵ Այս և նշվող մյուս հոդվածները տե՛ս «Статут лиги наций» էլեկտրոնային կայքէջում, <http://www.hist.msu.ru/Departments/ModernEuUS/INTREL/SOURCES/Legnatust.htm>

կամ մի քանի երկրների շահերին: Կար նաև մեկ այլ հանգամանք. Ազգերի լիգայի անդամ պետություններից շատերն անկարող էին լիարժեքորեն մասնակցելու և իրենց շահերը պաշտպանելու հակամարտությունների կարգավորմանն ուղղված քննարկումների և որոշումների ընդունման ժամանակ, որովհետև Ազգերի լիգայի կանոնադրության համաձայն՝ անդամ պետությունները բաժանված էին խմբերի, որոնց մի մասը գրկված էր որոշումներ կայացնելու և կարգավորման գործերին մասնակցելու իրավասությունից⁶: Փաստորեն, Ազգերի լիգայի խորհրդի ձեռքում կենտրոնացված էր միջազգային հարաբերությունների կարգավորման մեխանիզմը, իսկ խորհուրդը գործում էր մեծ տերությունների թելադրանքով: Նման իրավիճակը թույլ էր տալիս ուժեղներին վարել իրենց շահերի առաջնահերթությունից բխող քաղաքականություն՝ շրջանցելով հավաքական անվտանգության սկզբունքները: Այնուամենայնիվ, պատմության մեջ առաջին միջազգային համընդգրկուն կազմակերպության գործունեությունն ու կառուցվածքը վկայում են միջազգային հարաբերություններում հավաքական անվտանգության սկզբունքների կիրառման հարցում պետությունների շահագրգռվածության մասին: Այն իր տեսակի մեջ առաջին կազմակերպությունն է, որը կառուցվել է հավաքական անվտանգության սկզբունքների կիրառման նպատակադրմամբ, ինչը նշանակում է, որ այդ փորձը անգնահատելի է միջազգային հարաբերություններում հետագա անվտանգ համակարգի ձևավորմանն ուղղությամբ:

Ֆաշիստական պետությունների ագրեսիայի ծավալումը 1930-ական թթ. ապացուցեցին Ազգերի լիգայի շրջանակներում գործող հավաքական անվտանգության սկզբունքների անկատարությունը և նոր սկզբունքների միջազգային-իրավական ձևակերպման անհրաժեշտությունը: Մասնավորապես պետք է նշել նաև, որ միջազգային հանրությունը, հաշվի առնելով Առաջին աշխարհամարտի դառը փորձը, 1920-30 - ական թթ. ակտիվորեն զարգացնում էր հավաքական անվտանգության գաղափարը՝ փորձելով ապահովել Եվրոպայում հնարավոր դրական իրավիճակ: Բրիտան-Կելլոգի պակտը նման փորձերից մեկն էր⁷: Այն հակամարտությունները դիվանագիտական ճանապարհով լուծելու և պատերազմը բացառելու «երաշխիքներ» էր տալիս⁸:

⁶ Տե՛ս Ազգերի լիգայի մասին հոդվածը «Военная энциклопедия». Т. 8. М., 2004, և «Дипломатический словарь». Т. 2. М., 1961, էջ 187-191:

⁷ Բրիտան-Կելլոգի պակտը ստորագրվեց Փարիզում 1928 թ. օգոստոսի 27-ին ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի և Գերմանիայի միջև: Պակտը նախատեսում էր պատերազմի բացառումը ազգային քաղաքականության մեջ: 1929 թ. պակտին միացան ԽՍՀՄ-ը, Էստոնիան, Լեհաստանը, Ռումինիան, Լատվիան, Լիտվան և Թուրքիան:

⁸ Տե՛ս **Войцеховский З.** Проблема коллективной безопасности в Европе в 1919-1939 гг. Варшава, 1955, էջ 26, «Всемирная история дипломатии» // էլեկտրոնային աղբյուր

Բրիան-Կելլոգի պակտը ևս մնաց թղթի վրա: Հետագա միջազգային իրադարձությունները ապացուցեցին պակտի քննադատների իրավացիությունը, որ այն չունի խաղաղության ապահովման իրական մեխանիզմներ: Կարճ ժամանակ անց ԽՍՀՄ-ի նախաձեռնությամբ գումարված զինաթափման կոնֆերանսում խորհրդային պատվիրակության ղեկավար Լիտվինովը քննարկման դրեց հավաքական անվտանգության պայմանագրի նախագիծ: Այն նախատեսում էր հավասար իրավունքներ ու անվտանգության լրացուցիչ երաշխիքներ: Այդ տարիներին խորհրդային դիվանագիտությունը առավել նախաձեռնող ու հետևողական էր հավաքական անվտանգության համակարգի ստեղծման գործում, որովհետև ակնհայտ էր ԽՍՀՄ-ին մեկուսացնելու և անվտանգության համակարգերից դուրս թողնելու անգլո-ֆրանսիական դիվանագիտության ձգտումը: Վերը նշված ժամանակահատվածում հավաքական անվտանգության գաղափարի զարգացման ճանապարհին կարևորվում էր նաև «ազրեստը» հասկացության սահմանումը և դրան հակադրվելու սկզբունքները: Ի դեպ՝ անվտանգային քաղաքականության մշակման համար մեծ կարևորություն ունեցող այս խնդիրը լուծում ստացավ շատ տարիներ անց՝ 1974 թ., ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բանաձևով⁹:

Հատկանշական է հավաքական անվտանգության՝ որպես առանցքային խնդրի առկայությունը 1930-ական թթ. վերջերին ծավալված միջազգային իրադարձություններում: Գերմանիայի գործողությունների հետ կապված համաեվրոպական քաղաքական ճգնաժամը և դեպի Արևմուտք ծավալվելու մասին հետախուզության տվյալները ստիպեցին անգլո-ֆրանսիական կողմին քայլեր ձեռնարկել՝ ստեղծելու հավաքական անվտանգության համակարգ: Փոխադարձ ռազմական օգնության պայմանագրեր կնքվեցին Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Լեհաստանի միջև, որով փորձ էր արվում անվտանգության երաշխիքներ տալ Լեհաստանին: Սակայն այդ պայմանագրերի թերությունն այն էր, որ դրանք ամրագրված չէին ռազմական կոնվենցիաներով, ինչն էլ հնարավորություն էր տալիս Հիտլերին շարունակելու ազրեսիայի ծավալումը՝ տարածքային պահանջներ ներկայացնելով Լեհաստանին և Լիտվային: Այսպիսի միջազգային բարդ իրադրության պայմաններում անգլո-ֆրանսիական կողմը ստիպված էր դիմել հակաքայլերի: Մեծ Բրիտանիան միակողմանի անկախության երաշխիքներ տվեց Լեհաստանին, Հունաստանին, Թուրքիային և Ռումինիային: Լեհաստանին տրված անկախության երաշխիքներին միացավ նաև Ֆրանսիան: Զգալով մոտավորապես պատերազմի վտանգը՝ անգլո-ֆրանսիական դիվանա-

http://www.diphis.ru/pakt_briana_kelloga-a671.html?PHPSESSID=7049a37ba66f60ee1b7856f2015e4d1.

⁹ Տե՛ս http://www.un.org/ru/documents/decl_conv/conventions/aggression.shtml

գիտությունը ստիպված էր բանակցություններ սկսել ԽՍՀՄ-ի հետ՝ հավաքական անվտանգության պայմանագիր կնքելու նպատակով: Այս բանակցությունների ընթացքի, քննարկվող հարցերի և գաղափարների հետազոտությունը կարևոր է հիմնախնդրի պատմության լուսաբանման առումով: Հիշարժան է այն, որ սկզբում առաջնային պլան էր մղվում անկախության երաշխիքների միջոցով անվտանգության համակարգ ստեղծելու մեխանիզմը: Քննարկվում էր նաև ԽՍՀՄ-ի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև եռակողմ պայմանագիր կնքելու առաջարկը, որին պետք է հետևեր երեքի կողմից անկախության երաշխիքների տրամադրումը Բալթիկ ծովից մինչև Սև ծով ընկած արևելաեվրոպական բոլոր պետություններին:

Խորհրդային դիվանագիտությունը առաջնային էր համարում ռազմական կոնվենցիայի կնքումը և առաջարկում էր անվտանգության համակարգի հիմքում դնել գործնական խնդիրներ (ռազմական պարտավորություններ, ռազմական գործողությունների մասնակցության ժամկետներ, զորքերի և զինտեխնիկայի քանակ և այլն): Անգլո-ֆրանսիական կողմը չընդունեց այս առաջարկները, որի պատճառով ԽՍՀՄ-ը 1939 թ. հունիսին հրաժարվեց ստորագրել երեքի պակտը, իսկ հետո առաջ քաշեց անուղղակի ագրեսիայի հարցը: Խորհրդային դիվանագիտությունը գտնում էր, որ հավաքական անվտանգության համակարգում կողմերը միմյանց պետք է օգնեն նաև անուղղակի ագրեսիայի դեպքում՝ նկատի ունենալով դրսի օգնությամբ իրականացվող ֆաշիստական հեղաշրջումը (քաղաքական վարչակարգի բռնի փոփոխություն, որը կարող է տվյալ երկրին դարձնել ագրեսոր կամ ագրեսորի դաշնակից): Սակայն հավաքական անվտանգության պայմանագրի շուրջ բանակցությունները ԽՍՀՄ-ի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև ավարտվեցին անարդյունք: Միջազգային անվտանգային համակարգի բացակայությունը հնարավոր դարձրեց պատերազմը Եվրոպայում և Հեռավոր Արևելքում¹⁰:

Երկրորդ համաշխարհային պատերազմը խթանեց միջազգային հարաբերությունների տեսության մեջ հավաքական անվտանգության գաղափարի զարգացումը: Հաշվի առնելով անցյալի սխալները՝ կարելի էր արդեն մշակել հավաքական անվտանգության նոր, առավել հիմնավոր սկզբունքներ: Հակահիտլերյան կռալիցիայի անդամ պետությունները Գերմանիայի և Ճապոնիայի դեմ համատեղ ռազմական գործողությունների ընթացքում արդեն փորձում էին իրենց միջպետական հարաբերություններում ներդնել հավաքական անվտանգության սկզբունքները: Սակայն պատերազմի ընթացքում կռալիցիայի հիմնական անդամներ ԱՄՆ-ը, ԽՍՀՄ-ը և Մեծ Բրիտանիան հետապնդում էին իրենց շահերը, որոնք ավելի հաճախ հակասում էին միմյանց: Հե-

¹⁰ Տե՛ս «История дипломатии». Т. 3. М., 1965, էջ 759-798:

տևաբար այս միջպետական ասոցիացիայի շրջանակներում սահմանված նորմերը գործում էին միայն արտաքին թշնամու գոյության ժամանակ, և պատերազմի ավարտից հետո դրանք չշարունակվեցին, սակայն շարունակվեց համագործակցությունը գլոբալ անվտանգության համակարգի ստեղծման ուղղությամբ, որի սկիզբը 1945 թ. ՄԱԿ-ի հիմնադրումն էր: Պատահական չէր, որ ՄԱԿ-ի վեց գլխավոր մարմիններից մեկը դարձավ Անվտանգության խորհուրդը, որին վերապահվեց խաղաղության և միջազգային անվտանգության պահպանման պարտականությունը: Ի տարբերություն ՄԱԿ-ի մյուս մարմինների՝ Անվտանգության խորհրդի որոշումները պարտադիր դարձան բոլոր պետությունների համար: Գործնականում ՄԱԿ-ի ԱԽ-ի գործունեությունը նպատակաուղղված է սահմանելու խաղաղության և միջազգային անվտանգության դեմ ոտնձգություններ կատարող պետությունների դեմ պատժամիջոցներ (այդ թվում նաև ռազմական), հակամարտությունների գոտում կիրառելու խաղաղապահ ուժեր, ստեղծելու հետկոնֆլիկտային կարգավորման միջազգային կառավարման մեխանիզմներ¹¹:

ՄԱԿ-ի գործունեությունը ցույց տվեց, որ յուրաքանչյուր պետության անվտանգության խնդիրների լուծումը պահանջում է համալիր և բազմակողմանի մոտեցում մյուս պետությունների ընդհանուր-հավաքական անվտանգության համակողմանի ամրապնդման ճանապարհով: Քաղաքական գործընթացներում վճռորոշ դարձավ այն համոզմունքը, որ անհնար է սեփական անվտանգության ապահովումը ուրիշների անվտանգության հաշվին, առանց հաշվի առնելու բոլոր պետությունների շահերը: Անվտանգությունը պետք է բացարձակապես հավասար լինի բոլորի համար, իսկ միջազգային անվտանգության ամրապնդման իրական երաշխիքները հավաքական անվտանգության համակարգերն են:

Ցավոք, սառը պատերազմի պայմաններում ընդհանուր անվտանգություն ունենալու գաղափարը կիրառվեց հատվածական շահերի պաշտպանության տրամաբանությամբ: Ելնելով հավաքական անվտանգության գաղափարի և պրակտիկայի զարգացման նախորդ փորձից՝ երկբևեռ աշխարհակարգի կողմերից յուրաքանչյուրը առանձին հիմնեց իր անվտանգային համակարգը, բայց գիտակցելով նաև գլոբալ անվտանգության կարևորությունը՝ շարունակեց համագործակցությունը ՄԱԿ-ի անվտանգության կառույցներում¹²: Այս հանգամանքով էր

¹¹ Տե՛ս <http://www.un.org/ru/sc/about/functions.shtml>

¹² Անվտանգային գործառույթներ ստանձնեցին գրեթե բոլոր տարածաշրջանային միջազգային կազմակերպությունները՝ հատկապես Աֆրիկյան միասնության կազմակերպությունը, Ամերիկյան պետությունների կազմակերպությունը, Արաբական երկրների լիգան:

թելադրված հետպատերազմյան երկբևեռ աշխարհակարգում յուրաքանչյուր պետության կողմից իր հավաքական անվտանգության համակարգերի ստեղծումը, որոնք էին՝ Հյուսիսատլանտյան դաշինքը՝ ՆԱՏՕ-ն¹³, և Վարշավայի պայմանագիրը: Երկբևեռ աշխարհակարգի փլուզումից հետո վերջինս կազմալուծվեց, բայց ԱՊՀ շրջանակներում ձևավորվեց Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը (ՀԱՊԿ): Շատ կարևոր առաջընթաց էր 1960-70-ական թթ. Արևելք-Արևմուտք հարաբերություններում լարվածության թուլացմանը զուգահեռ անվտանգային խնդիրների նկատմամբ նոր մոտեցումների ձևավորումը, որն իր արտահայտությունը գտավ ԱՄՆ-ի և Կանադայի մասնակցությամբ 1975 թ. Հելսինկիում Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդակցության գումարմամբ, որի հիման վրա հետագայում ձևավորվեց կազմակերպությունը՝ ԵԱՀԿ-ն: Փաստորեն լարվածության թուլացումը միջազգային անվտանգությանը քաղաքական երաշխիքներ տվեց:

Անվտանգության և համագործակցության Հելսինկյան խորհրդակցության ընդունած հռչակագիրը նշանավորեց հավաքական անվտանգության գաղափարի և պրակտիկայի շարժընթացի նոր փուլը: Առաջին անգամ հակամարտ բևեռներում գտնվող ժողովրդավարական և կոմունիստական վարչակարգերով պետությունները պաշտոնապես ընդունեցին անվտանգության ապահովման նույն սկզբունքները¹⁴: Այս պահից սկսած՝ միջազգային-հավաքական անվտանգության գաղափարը ավանդական-ռազմական համագործակցության փոխարեն ներառում էր մարդու իրավունքների, ինքնիշխանության, տարածքային ամբողջականության պահպանման, ուժի կիրառումից հրաժարվելու, սեփական ճակատագիրը որոշելու ազգերի իրավունքի և վեճերի խաղաղ լուծման սկզբունքները: Նոր սկզբունքներով միջազգային անվտանգության ու խաղաղության ապահովմանը արդեն հնարավոր էր հասնել ռազմական, քաղաքական, սոցիալական, տնտեսական, հումանիտար, իրավական և էկոլոգիական բնագավառներում միասնական ուժերի

¹³ Հավաքական անվտանգության գաղափարի շարժընթացի գործում բեկումնային էր ԱՄՆ-ի Սենատի՝ 1945 թ. հունիսի 11-ին Վանդենբերգի բանաձևի ընդունումը, որը լիազորում էր երկրի կառավարությանը մտնել Արևմտյան կիսագնդից դուրս ձևավորվող ռազմաքաղաքական անվտանգային դաշինքների մեջ: Բանաձևի ընդունումը նշանավորում էր ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մեջ «իզոլյացիոնիզմի» դարաշրջանի ավարտը և անցումը գլոբալացման սկզբունքին, որը ենթադրում էր ԱՄՆ-ի կենսական շահերի պաշտպանության համար ակտիվ մասնակցություն համաշխարհային քաղաքականությանը (տե՛ս **Корниенко Г. М.** Холодная война: Свидетельство ее участника. М., 1995, էջ 34-38, «Брюссельский пакт» // "Дипломатический словарь". Т. 1. М., 1984, էջ 158-159):

¹⁴ Տե՛ս «Основополагающие принципы декларации, принятой по итогам совещания по безопасности и сотрудничеству в Европе (1975 г.)» // <http://www.osce.org>

ներդրման և իրականացվող միջոցառումների ճանապարհով: Այս համապարփակ մոտեցումը պահանջում էր նաև որակական նոր լուծումներ, որովհետև միջազգային փորձը ցույց տվեց հավաքական անվտանգության հասնելու հին սկզբունքների անկատարությունը: Նոր սկզբունքները պետությունների ուժի հավասարակշռման փոխարեն առաջին պլանում դրեցին շահերի հավասարակշռման, միջազգային ու ազգային անվտանգության արդյունավետ համապատասխանեցման հրամայականը: Եթե անցյալում հավաքական անվտանգության համակարգի գոյությունը պայմանավորված էր մրցակցող տերությունների ուժերի հավասարակշռությամբ, ապա նոր պայմաններում պետությունների շահերի հավասարակշռությունն է դառնում վճռորոշ: Համաշխարհային քաղաքական գործընթացների հայտնի հետազոտող Պիտեր Կալվոկորեսին նշում է, որ առաջին անգամ հավաքական անվտանգության խնդիրների լուծման ասպարեզում պետությունների համագործակցությունը դառնում է նաև տնտեսապես ձեռնտու, քան ամեն մի պետության կողմից ազգային անվտանգության մեկուսի ապահովումը սեփական ուժերով¹⁵: Այսպիսով, անցյալի փորձի և սխալների ուսումնասիրումը, հավաքական անվտանգության սկզբունքներին անբեկանելի հավատարմությունը դարձել են միջազգային հարաբերությունների հաջող զարգացման կարևորագույն պայման:

Բանալի բառեր – *միջազգային գլոբալ անվտանգություն, հավաքական անվտանգություն, Ազգերի լիգա, Բրիան-Կելլոգի պակտ, ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդ, ՆԱՏՕ, Վարշավայի պայմանագրի կազմակերպություն, Հելսինկյան խորհրդակցություն, ԵԱՀԿ, ՀԱՊԿ, շահերի հավասարակշռություն*

ГАРИК КЕРЯН – *Эволюция идеи и практики коллективной безопасности в международных отношениях.* – Система международной безопасности состоит из целого ряда компонентов. Особое место среди них принадлежит коллективной безопасности – системе совместных мероприятий государств определённого географического региона или всего мира, предпринимаемых, чтобы устранить или предотвратить угрозы миру и подавить акты агрессии. Достигнутая во второй половине 1960-х – первой половине 1970-х гг. разрядка напряжённости помогла созданию политических гарантий международной безопасности. Важнейшим итогом этого процесса стало Совещание по сотрудничеству и безопасности в Европе.

Ключевые слова: *коллективная безопасность, Лига Наций, пакт Бриана–Келлога, Совет безопасности ООН, НАТО, Организация Варшавского договора, Хельсинкское совещание, ОБСЕ, ОДКБ, баланс интересов*

¹⁵ Sk' u **Кальвокоресси П.** Мировая политика после 1945 года. Книга 1. М., 2000, էջ 36:

GARIK KERYAN – *The Evolution of the Idea and Practice of Collective Security in International Relations.* – The system of international security consists of a number of components. Tangible resources are allocated for maintenance of collective security. Collective security is a system of joint activities of countries in a given geographical region or around the world, with the aim to eliminate and prevent the threats to peace and suppress the acts of aggression. Discharging in international tension, reached in the second half of the 1960s and the first half of 1970s, helped to establish political guarantees for international security. The main result of this process was the Conference on Security and Cooperation in Europe.

Key words: *international, global security, collective security, the League of Nations, the Kellogg-Briand Pact, the UN Security Council, NATO, Warsaw Treaty Organization, the Helsinki meeting, OSCE, CSTO, balance of interests*

ՀՀ ԱԺ 2007 Թ. ԵՎ 2012 Թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԿՈՌԵԼՅԱՑԻՈՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԱՐՈՒՍՅԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Արդի հասարակության քաղաքական համակարգի զարգացման պայմաններում մեծանում է կուսակցությունների դերը կառավարման և որոշումների ընդունման գործընթացում: Կուսակցությունները քաղաքականության կարևոր սուբյեկտներից են, որոնք միջնորդի դեր են ստանձնում պետության և քաղաքացիների միջև: Կուսակցությունները և ընտրական գործընթացները համեմատական քաղաքագիտության հետազոտության կարևոր օբյեկտներից են:

Հայաստանի կուսակցություններն ու ընտրական գործընթացները ուսումնասիրելու և գնահատելու նպատակով որպես հետազոտության մեթոդ ընտրվել է կոռելյացիոն վերլուծությունը, որը վիճակագրական մեթոդ է և արդյունավետ կիրառվում է նախընտրական և հետընտրական գործընթացները գնահատելիս¹: Հատկապես XXI դարում բազմաթիվ և բազմաբնույթ տեղեկատվական հոսքերի առկայության պայմաններում վիճակագրական մեթոդների կիրառումը համեմատական քաղաքագիտության շրջանակներում ձեռք է բերում նոր որակ: Քաղաքական հետազոտություններում բավական հաճախ է կիրառվում կոռելյացիոն վերլուծությունը՝ և՛ որպես առանձին մեթոդ, և՛ որպես առավել բարդ համալիր մեթոդների բաղկացուցիչ մաս²: Կոռելյացիայի վերլուծությամբ չափվում է երկու փոփոխականների կապի սերտությունը: Այն գնահատվում է -1 -ից մինչև $+1$ -ը ընկած միջակայքում ($-1 \leq R_{xy} \leq 1$): Որքան գործակցի արժեքը մոտ է $|1|$ -ի, այդքան կապը ավելի սերտ է: Եթե $R=0$, ապա կապը ընդհանրապես բացակայում է³:

Այսպես՝ հոդվածում ՀՀ ԱԺ 2007 թ. և 2012 թ. համամասնական ընտրությունների տվյալների հիման վրա ուսումնասիրվել են ընտրությունների մասնակցած կուսակցությունների առանձնահատկությունները և

¹ St' u **Ахременко А. С.** Корреляционный анализ электоральной статистики: некоторые методологические и методические проблемы // "Вестник Московского университета". Сер. 12, "Политические науки", 2008, № 2, էջ 3-16, **Евстифеев Р. В.** Моделирование электорального пространства российских регионов на основе показателей корреляционной близости политических альтернатив // "Моделирование в социально-политической сфере", 2007, № 1:

² Այդ մասին տե՛ս **Pollock P.** The Essentials of Political Analysis, Washington, 2008, էջ 171-173, **Monroe A.** Essentials of Political Research. Colorado, 2000, էջ 144-146:

³ Ավելի մանրամասն տե՛ս **Ա. Ալեքսանյան**, Վիճակագրական մեթոդների կիրառման հնարավորությունները քաղաքական իրավիճակների վերլուծություններում // «Մխիթար Գոշ», գիտամեթոդական հանդես, 2009, № 1, էջ 29-34:

կատարվել է համեմատություն*։ Երկու կուսակցությունների միջև կոռեկ-
յացիայի գործակիցը ընդունվել է որպես ընտրազանգվածների քաղա-
քական նախապատվությունների ընդհանրության վիճակագրական
չափ։ Ըստ այդմ՝ հետազոտության վարկածն է՝ *որքան բարձր է կոռեկյա-
ցիայի գործակիցը երկու կուսակցությունների միջև, այդքան մեծ են
դրանց ընտրազանգվածների ընդհանրությունները, և ըստ այդմ էլ
բարձր է այդ կուսակցությունների ձայների փոխանակման հավանակա-
նությունը*։ Երկու կուսակցությունների միջև կոռեկյացիայի բարձր գոր-
ծակիցը ($R \geq 0.7$) մաթեմատիկորեն նշանակում է, որ առկա են բազմաթիվ
ընտրատարածքներ, որտեղ նկատվում են կուսակցությունների ստա-
ցիոնար ձայների միաժամանակյա շեղումներ իրենց միջին արդյունքներից։
Կոռեկյացիայի բացասական գործակիցը մատնանշում է դիտարկվող
կուսակցությունների և ըստ այդմ՝ դրանց ընտրազանգվածների միմյանց
նկատմամբ մերժողական տրամադրվածության մասին։

Վերլուծությունը մասնավորապես վերաբերում է ՀՀ ԱԺ 2007 թ. և
2012 թ. ընտրությունների 5 %-ոց արգելքը հաղթահարած կուսակցու-
թյուններին (տե՛ս աղյուսակ 1)։ Ուսումնասիրելով այդ կուսակցություն-
ների ընտրական մասնակցության պատմությունը՝ կարելի է նկատել,
որ խորհրդարանական բոլոր ընտրություններին միայն ՀՅԴ-ն և ՀՀԿ-ն
են հաղթահարել օրենքով սահմանված 5 %-ի արգելքը։ ՕԵԿ-ն իր կա-
յուն ներկայությունն է ունեցել՝ սկսած ԱԺ երկրորդ (1999), իսկ ԲՀԿ-ն և
ԺԿ-ն՝ չորրորդ (2007 թ.) գումարման ընտրություններից։ ՀԱԿ-ը մաս-
նակցել է միայն 2012 թ. խորհրդարանական ընտրություններին։ Ընդ-
հանուր առմամբ կարող ենք փաստել, որ ԱԺ հինգ գումարումների կու-
սակցական կազմը ընտրությունից ընտրություն հիմնականում տար-
բեր է եղել⁴։ Ազգային ժողովի 2007 թ. ընտրությունների համեմատ, 2012
թ. նկատվեց կուսակցությունների որոշակի բեռնաթափում։ Այսպես՝
2007 թ. ընտրություններին մասնակցում էին 22 կուսակցություն և 1
դաշինք, 2012 թ.՝ 8 կուսակցություն և 1 դաշինք։ Արդյունքը եղավ այն,
որ խորհրդարանում հայտնվեց նոր ուժ՝ ՀԱԿ-ը, իսկ քաղաքական 5
ուժ՝ ՀՅԴ-ն, ՀՀԿ-ն, ՕԵԿ-ը, ԲՀԿ-ն և «Ժառանգությունը» (ԺԿ) վեր-
ընտրվեցին։ Հինգերորդ գումարման Ազգային ժողովում ՀՀԿ-ն ձեռք բե-
րեց բացարձակ մեծամասնություն, ԲՀԿ-ն բարելավեց իր դիրքերը 12
մանդատով (ընդհանուր թվով՝ 9 տեղ մեծամասնական, 28՝ համամաս-
նական ընտրակարգով), իսկ ՀՅԴ-ն ստացավ 6 մանդատ նախորդ 16-ի
փոխարեն։ Պատգամավորական մի քանի տեղով դիրքային նահանջ
գրանցեցին նաև ՕԵԿ-ը և ԺԿ-ն։

* Հաշվարկները կատարվել են ՀՀ 2007 թ. և 2012 թ. ԱԺ ընտրությունների վերաբերյալ
ՀՀ ԿԸՀ-ի պաշտոնական տվյալների հիման վրա / www.elections.am, մուտքը 04.11.2015:

⁴ Ավելի մանրամասն տե՛ս Ա. Ալեքսանյան, Հայաստանի ժողովրդավարության
մակարդակի ինդեքսը (1995-2012 թթ.) // «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգա-
յին հարաբերություններ. Քաղաքագիտություն», 144.6, 2014, էջ 66-67:

ՀՀ ԱԺ 2007 թ. և 2012 թ. ընտրություններին մասնակցած կուսակցությունների կապի գնահատումը կոռեկցիայի գործակցի միջոցով

ԲՀԿ		
Կուսակց. անվ.	Կոռ. գործ	
	2007	2012
ԺԿ	0.02	-0.31*
ՀՅԴ	0.25	-0.09
ՀՀԿ	0.07	-0.09
ՕԵԿ	-0.18	-0.30
ՀԱԿ	_____	-0.32*

ՀՀԿ		
Կուսակց. անվ.	Կոռ. գործ	
	2007	2012
ՀՅԴ	0.55**	0.28
ՕԵԿ	-0.15	0.26
ԲՀԿ	0.07	-0.09
ՀԱԿ	_____	-0.40**
ԺԿ	-0.50**	-0.49**

ՀՅԴ		
Կուսակց. անվ.	Կոռ. գործ	
	2007	2012
ՕԵԿ	0.02	0.30
ՀՀԿ	0.55**	0.28
ՀԱԿ	_____	0.20
ԺԿ	-0.47**	0.006
ԲՀԿ	0.25	-0.09

ԺԿ		
Կուսակց. անվ.	Կոռ. գործ	
	2007	2012
ՀԱԿ	_____	0.78**
ՀՅԴ	-0.47**	0.006
ՕԵԿ	-0.04	-0.14
ԲՀԿ	0.01	-0.31*
ՀՀԿ	-0.50**	-0.49**

ՕԵԿ		
Կուսակց. անվ.	Կոռ. գործ	
	2007	2012
ՀՅԴ	0.02	0.30
ՀՀԿ	-0.15	0.26
ՀԱԿ	_____	-0.06
ԺԿ	-0.04	-0.14
ԲՀԿ	-0.18	-0.30

ՀԱԿ		
Կուսակց. անվ.	Կոռ. գործ	
	2012	
ԺԿ	0.78**	
ՀՅԴ	0.20	
ՕԵԿ	-0.06	
ԲՀԿ	-0.32*	
ՀՀԿ	-0.40**	

Կոռեկցիան վերլուծության արդյունքները վկայում են, որ այս հինգ տարվա ընթացքում նկատելի փոփոխություններ են տեղի ունեցել կուսակցությունների ընտրազանգվածների նաև բովանդակային կազմում: Այսպես՝ 2007 թ. խորհրդարանական ընտրություններին կոռեկցիոն ամենաբարձր դրական կապը (տվյալ դեպքում՝ ընտրազանգվածների քաղաքական նախապատվությունների ընդհանրության վիճակագրական չափը) հաստատվել էր ՀՀԿ-ի և ՀՅԴ-ի միջև (0.55), որը բնորոշվում է որպես նկատելի: Սա նշանակում է, որ նշված ժամանակահատվածում այս երկու կուսակցության ընտրազանգվածները ունեին քաղաքական ընդհանուր նախապատվություններ: Վերլուծությունը

* Կոռեկցիան նշանակալից է 0.05 մակարդակում:

** Կոռեկցիան նշանակալից է 0.01 մակարդակում:

ցույց է տալիս նաև, որ այդ երկու կուսակցությունների միջև ԱԺ 2007 թ. ընտրություններին առկա էր 30 % ձայների փոխանակման հնարավորություն ($R^2=0.30$): Եթե հաշվի առնենք, որ չորրորդ և հինգերորդ գումարման ընտրություններում ՀՅԴ-ի ձայները (մոտ 178000) նվազել են մինչև 85 550-ի⁵, ապա կարող ենք ասել, որ այդ ձայներից առնվազն 30000-ը տեղափոխվել է ՀՀԿ: Դրա մասին է վկայում նաև այն, որ երկու կուսակցության կապի գործակիցը 0.55-ից իջել էր 0.28-ի, իսկ դետերմինացիայի գործակիցը⁶ այս դեպքում կազմել է 0.08, այսինքն՝ այժմ առկա է միայն 0.8 % ձայների փոխանակման հնարավորություն: Ըստ այդմ կապը ՀՀԿ-ի և ՀՅԴ-ի միջև մեկնաբանվում է որպես թույլ, սակայն դրական, ինչը նշանակում է, որ թեև ՀՅԴ-ն ընդդիմադիր կուսակցություն է, այնուամենայնիվ այդ կուսակցությունների ընտրազանգվածները հակամարտ չեն: ՀՅԴ-ն, ունենալով գրեթե նույն դրական կապը և՛ ՀԱԿ-ի (0.20), և՛ ՀՀԿ-ի (0.28) հետ, կենտրոնական տեղ է զբաղեցնում իշխանություն - ընդդիմություն համակարգում:

2012 թ. ընտրություններին ՀՀԿ-ի կապը ԲՀԿ-ի հետ թույլ դրականից վերածվել է թույլ բացասականի: Սա նշանակում է, որ ՀՀԿ-ի և ԲՀԿ-ի ընտրազանգվածները միմյանց հետ ոչ մի ընդհանրություն չունեն, ավելին՝ «Դաշնակցությանը» ձայն տված ընտրողը ավելի հեշտությամբ իր ձայնը կտրամադրեր ՀՀԿ-ին, քան ԲՀԿ-ի ընտրողը: Դրան հակառակ՝ ՀՀԿ-ի և ՕԵԿ-ի կապը թույլ բացասականից դարձել է թույլ դրական: Սա նշանակում է, որ ՕԵԿ-ի ընտրազանգվածը երկու ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում փոխվել է: Ընդամենը 0.6 % ձայների փոխանակման հնարավորություն կա ՀՀԿ-ի ընտրազանգվածի հետ:

2007 թ. ՀՀԿ-ի ամենաուժեղ բացասական կապը «Ժառանգություն» (-0.50) կուսակցության, ինչպես նաև «Իմպիչմենտ» դաշինքի (-0.51) հետ էր հաստատվել, որը համարվում է նկատելի բացասական: 2012-ի ընտրություններում ՀՀԿ-ի կոռելյացիոն կապը «Ժառանգության» հետ գրեթե չի փոխվել (-0.49), իսկ ՀԱԿ-ի հետ այն կազմել է -0.40, որոնք մեկնաբանվում են որպես միջին բացասական: Սա նշանակում է, որ «Ժառանգություն» կուսակցության ընտրազանգվածը ավելի բացասաբար է տրամադրված ՀՀԿ-ի նկատմամբ, քան ՀԱԿ դաշինքի ընտրազանգվածը:

Ուշագրավ է «Դաշնակցության» և «Ժառանգության» կապը, որը 2007 թ. խորհրդարանական ընտրություններին -0.47 էր: Կարելի է ասել, որ երկու կուսակցության ընտրազանգվածները գրեթե մերժողաբար էին տրամադրված միմյանց նկատմամբ: 2012 թ. ընտրություններին նրանց անհանդուրժողական վերաբերմունքը միմյանց նկատմամբ

⁵ ՀՀ ԿԸՀ-ի պաշտոնական կայք՝ <http://www.elections.am/proportional/election-82/>, <http://www.elections.am/proportional/>, մուտքը՝ 04.11.2015:

⁶ Ավելի մանրամասն տե՛ս **Ա. Ալեքսանյան**, Վիճակագրական մեթոդների կիրառման հնարավորությունները քաղաքական իրավիճակների վերլուծություններում, էջ 30:

վերացել է. կոռեկցիայի գործակիցը կազմել է 0.06: Սա ցույց է տալիս նաև, որ միասնական թեկնածուով հանդես գալու պարագայում կարձանագրվեր ձայների կորուստ, քանի որ երկուսի ընտրազանգվածները անհամատեղելի են: Մնացած կուսակցությունների հետ կապը ևս թույլ դրական է՝ բացառությամբ ԲՀԿ-ի (-0.09) հետ կապի, որը համարվում է թույլ բացասական:

Ինչպես նշեցինք, ԲՀԿ-ի կապը ՀՀԿ-ի հետ թույլ դրականից վերածվել է թույլ բացասականի, նույնը տեղի է ունեցել նաև ՀՅԴ-ի և գրեթե բոլոր մնացած կուսակցությունների հետ, և քանի որ ԲՀԿ-ն 2012 թ. ընտրություններին բավականաչափ ամրապնդել էր իր դիրքերը, կարող ենք ասել, որ այս ժամանակահատվածում նա իր կողմն է գրավել բոլոր այն կուսակցությունների ընտրողներին, որոնց հետ ուներ ընդհանուր ընտրազանգված:

2007 թ. խորհրդարանական ընտրություններին բավական ուժեղ դրական կոռեկցիոն կապ էր հաստատվել «Ժառանգության» և այնպիսի կուսակցությունների միջև, ինչպիսիք են ԺՈՒԿ-ը (0.72), «Իմպիչմենտ» դաշինքը (0.71), և ՆԺԿ-ն (0.63): Դա թույլ է տալիս եզրակացնելու, որ այս քաղաքական ուժերի միասնական դաշինքով հանդես գալու պարագայում վերջիններս իրենց ներկայությունը կապահովեին խորհրդարանում, և ընդդիմությունը ավելի ներկայացուցչական կլիներ խորհրդարանում: Կոռեկցիայի ուժեղ կապ էր հաստատվել նաև «Ժառանգության» և ՀԱԿ-ի միջև (0.77) 2012 թ. խորհրդարանական ընտրություններին. ձայների փոխանակման գործակիցը այս դեպքում կազմել է 59 %:

Ինչպես ցույց են տալիս վերլուծության արդյունքները, կուսակցություններից շատերը, մասնավորապես՝ ընդդիմադիր, ունեն ընդհանուր ընտրազանգված, սակայն ընդդիմության շրջանում բացակայում է համախմբվելու, միասնաբար հանդես գալու քաղաքական մշակույթը: - Փորձը ցույց է տալիս նաև, որ ձևավորված դաշինքներն էլ երկար չեն գոյատևում, քանի որ այդ համախմբումը տեղի է ունենում ոչ թե գաղափարական հենքի վրա, այլ պայմանավորված է միայն ընտրություններին հաղթելու ձգտումով: Այստեղից էլ ՀՀ կուսակցական համակարգի կարևոր բացերից մեկը. *կուսակցությունները ընտրողների շրջանում՝ ճանաչվում են կուսակցության առաջին դեմքով, լավագույն դեպքում՝ դեմքերով և ոչ թե ծրագրային դրույթներով և գաղափարախոսությամբ*: Խնդրահարույց է նաև Հայաստանում կուսակցությունների չափից ավելի մեծ քանակը: Հանրապետությունում գրանցված 79 կուսակցությունը⁷

⁷ Տե՛ս «ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցված կազմակերպությունների վիճակագրությունը 01.10.2015 թ. դրությամբ» http://www.justice.am/storage/files/legal_acts/legal_acts_4404747911081_registr.hashvetvutyu.n.01.10.2015.pdf, մուտքը՝ 10.11.2015:

3 միլիոն⁸ բնակչության պարագայում վկայում է կուսակցական համակարգի անարդյունավետության մասին: Դրանց մեծ մասը «մարդ-կուսակցություններ» են, որոնց հիմնական նպատակը իշխանության հասնելն ու նեղ խմբային շահերը լուծելն է: Ընտրողներն այս դեպքում միջոց են, իսկ «գաղափարախոսությունը» գործիք՝ թեկնածուի դրական կերպարի և քաղաքական ինքնագովազդի համար: Հատկապես ընդդիմադիր դաշտում տիրող անհամաձայնության և ոչ միասնական մթնոլորտը հանգեցնում է նոր կուսակցությունների ստեղծմանը, որոնք, որպես կանոն, միտված են լրացնելու կառուցողական ընդդիմադիր կուսակցությունների բացակայությունը կամ դրանց անարդյունավետ գործունեության հետևանքով առաջացած վակուումը:

Չնայած կուսակցական համակարգի ձևավորման այս խնդիրներին, դրական միտումները ևս ակնհայտ են: Հայաստանի քաղաքական դաշտում այլևս նոր կուսակցություններ չստեղծելու միտում, այնուամենայնիվ, նկատվում է: Ավելին, չորրորդ և հինգերորդ գումարման Ազգային ժողովում կուսակցական կազմը գրեթե չի փոխվել, ինչը խոսում է այդ կուսակցությունների կայացման և քիչ թե շատ սոցիալական կայուն բազայի ձևավորման մասին: Իսկ հինգից վեց խոշոր քաղաքական կուսակցությունների առկայությունը բավարար է ներկայացուցչականություն ապահովելու, պետական շահը և պետության ժողովրդավարական հիմքերը ամրապնդելու համար:

Այսօր քննարկման կարևոր հիմնահարցերից է «սահմանադրական բարեփոխումների» հայեցակարգը⁹, որով նախատեսվում է Հայաստանում կառավարման կիսանախագահական համակարգից անցում կատարել խորհրդարանականի: Հայեցակարգը դրական գնահատականի է արժանացել Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի կողմից: Նախկին խորհրդային պետությունների շրջանում պառլամենտական ժողովրդավարության որոշակի փորձ ունեն Մոլդովան և Դրոլդաստանը: Վրաստանը ևս 2010 թ. ընդունված սահմանադրական փոփոխությունների փաթեթով 2013 թ. նախագահական ընտրություններից հետո անցում կատարեց պետական կառավարման խորհրդարանական մոդելին:

Այս համատեքստում համաշխարհային փորձը վկայում է, որ պառլամենտարիզմը առավել նպաստավոր պայմաններ է ստեղծում կուսակցական համակարգի զարգացման համար, որում քաղաքական հիմնական դերակատարները հենց կուսակցություններն են: Պայքարը

⁸ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 2015 թվականի ապրիլի 1-ի դրությամբ» վիճակագրական տեղեկագիր, http://www.armstat.am/file/article/bnakch_01.01.2015.pdf, մուտքը 10.11.2015:

⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխություններ (նախագիծ)», 13 հոկտեմբերի 2015 թ.:

իշխանության համար և, ըստ այդմ, ուժեղ մրցակցությունը նպաստում են քաղաքական կուսակցությունների մշտական ակտիվ գործունեությանը, որտեղ կարևոր դերակատարություն ունի կառուցողական ընդդիմությունը: Հայաստանում սահմանադրական փոփոխությունների փաթեթի ընդունումից հետո (06. 12. 2015) կառավարման նոր մոդելի արդյունավետությունը ուղիղ համեմատականով կախված է լինելու դերակատարների քաղաքական մշակույթի մակարդակից, համագործակցության և փոխզիջումի պատրաստակամությունից, որոնք կառավարման ժողովրդավարական յուրաքանչյուր համակարգի գործառնան որոշիչներից են:

Բանալի բառեր – կոռեյացիոն վերլուծություն, քաղաքական դերակատարներ, կուսակցություններ, քաղաքական համակարգ, կուսակցական համակարգ, խորհրդարանական կառավարման համակարգ, սահմանադրական բարեփոխումներ

АРУСЯК АЛЕКСАНИАН – Сравнительный корреляционный анализ выборов в Национальное собрание РА 2007 и 2012 гг. – Политические партии, выступающие в роли посредника между государством и гражданами, – важные субъекты политики. При этом они являются основополагающим объектом исследования политической науки. В статье посредством корреляционного анализа изучаются характерные особенности армянских политических партий. На основе данных о выборах в Национальное собрание 2007 и 2012 гг. рассматриваются и сопоставляются различия и сходства между партийными электоратами.

Ключевые слова: корреляционный анализ, политические акторы, политические партии, политическая система, партийная система, парламентская система управления, конституционные реформы

ARUSYAK ALEKSANYAN – Comparative Correlation Analysis of Elections to the National Assembly of RA in 2007 and 2012. – Political parties are important actors of political process and appear as an intermediary between the state and citizens. They are also the basic object for research in political science. In the article by the correlation analysis, aspects of political parties of Armenia are studied. On the basis of elections of the National Assembly of RA in 2007 and 2012, the author analyzes the differences and similarities of the party electorates and makes a comparative analysis.

Key words: correlation analysis, political actors, political parties, political system, party system, parliamentary system of government, constitutional reforms

**ԿԱՆԱՅՔ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՁ
(կարծրատիպեր եվ արդիականություն)**

ՀԱՍՄԻԿ ՇԱՓԱՂԱԹՅԱՆ

Կանանց և տղամարդկանց համար հավասար հնարավորությունների արդյունավետ քաղաքականության ձևավորումը դժվար է պատկերացնել առանց նրանց սոցիոսեռային դերերի ավանդական համակարգի փոփոխման, ինչպես նաև սոցիալական և հումանիտար գիտությունների մեջ նոր մեթոդաբանության ներդրման: Ինչ խոսք, վերջին մի քանի տասնամյակների ընթացքում կյանքն ինքը իր նոր հարցադրումներով տեղաշարժեց սեռային հավասարության հետ կապված ավանդական պատկերացումները: Այդ գործընթացներից անմասն չմնաց նաև Հայաստանը:

Մեր երկրում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական և քաղաքական խոր փոփոխություններն ու ցնցումներն էապես փոխեցին մեր հասարակության սոցիալ-հոգեբանական պատկերը: Ինչպես անհատը, այնպես էլ ողջ հասարակական օրգանիզմը դուրս եկան կյանքի բնականոն, բայց և կարծրացած վիճակից և կառուցվածքային ու գործառնության ին առումով առայսօր դեռևս ձևավորման ընթացքում են:

Վերջին շրջանում Երևանում «գենդեր» հասկացության շուրջ արհեստականորեն առաջացան իրարամերժ բազում մոտեցումներ: Հասարակության մի սովոր գանգված շարունակ պնդում է, որ գենդերային գաղափարախոսությունը խորթ է մեր ազգային նկարագրին, դրսից ներմուծված, օտարածին մտածողություն է և նպատակ է հետապնդում խարխլել դարերով արմատացած հայոց ազգային ավանդույթները: Իսկ մյուսները հակված են այն կարծիքին, որ սեռերի իրավահավասարության հիմնախնդիրներն ամենևին էլ խորթ չեն և, որ ամենակարևորն է, առաջընթաց քայլ են կայուն և ժողովրդավարական ազգային պետության կայացման ճանապարհին: Այդուամենայնիվ, կանանց քաղաքական ակտիվությունը և մասնակցությունը քաղաքական գործընթացներին կոնֆլիկտային հասարակությունների կարևոր օրինաչափություն են և դեմոկրատական քաղաքական համակարգի կարևորագույն ցուցանիշ: Արդի Հայաստանի հասարակական-քաղաքական իրավիճակն այնպիսին է, որ «կանանց մշակույթը» դիտվում է ածանցյալ «տղամարդկանց մշակույթից»:

Աշխարհի բնակչության մոտավորապես կեսը և Հայաստանի բնակչության ավելի քան 53 տոկոսը կանայք են, հետևաբար սոցիալա-

կան այս խմբի քաղաքական ներուժը բավականին մեծ է, որի անտեսումը կոպիտ սխալ կլինի մեր երկրի համար:

Հայացք նետելով անցյալին՝ կտեսնենք, որ Հայաստանը հնուց ի վեր իրավահավասար քաղաքացիների պետություն է եղել: Թեև հայ պատմագիրների վկայությամբ պետության և իրավունքի մասին գաղափարները Հայաստանում ձևավորվել են քրիստոնեության ընդունումից և գրերի գյուտից շատ ավելի առաջ, սակայն այս երկու իրադարձությունների նշանակությունը այդ գաղափարների մշակման և կայացման գործում անվիճարկելի է: Գրերի գյուտը հիմք դրեց Ոսկեդարի պատմագիտությանը, իսկ քրիստոնեությունը առաջին կրոնն էր, որը քարոզում էր կնոջ և տղամարդու բարոյական հավասարությունը: Հետևաբար հայ ժողովուրդն առաջիններից մեկն էր, որ քրիստոնեության ընդունմամբ, փաստորեն, ազգային համակրանք դրսևորեց նաև կանանց և տղամարդկանց բարոյական հավասարության գաղափարի նկատմամբ: Մեռերի հարաբերակցության հիմնախնդիրների վերաբերյալ մտեցումները հետագա հարյուրամյակներում արձարծվեցին հայ պատմագիտական և իրավաքաղաքական հուշարձաններում, իսկ 19-րդ դարի կեսերից՝ նաև գրական ստեղծագործություններում և մամուլում:

1912 թ. «Մշակ» թերթի 40-ամյակի առթիվ լույս տեսած «Հայ կնոջ իրավունքը» երկհատորյակում (այստեղ ամփոփված էին 40 տարվա ընթացքում «Մշակում» լույս տեսած հոդվածները կանանց հարցի վերաբերյալ) մանրակրկիտ ներկայացված էր հայ կնոջ մտավոր և բարոյական զարգացման էվոլյուցիան: Նշվում էր, որ կինը ազգի տնտեսական, քաղաքական, բարոյական իրավիճակի հայելին է, անդրադարձն այն դրական և բացասական հարաբերությունների, որոնք ընթանում են հասարակության մեջ¹:

Խորհրդային իշխանության սկզբնական տարիներին կանայք ոչ միայն սահմանադրորեն ստացան տղամարդկանց հետ հավասար քաղաքական իրավունքներ, այլև բոլոր մակարդակների ընտրովի մարմիններին մասնակցելու հնարավորություն: Կանանց և տղամարդկանց «գուգակշիռ» մասնակցությունն ընտրովի մարմիններին հիմնականում ապահովվում էր կուսակցական կարգադրագրերի ձևով՝ քվոտային համակարգի միջոցով: Թեև վերջինս որոշ չափով հաղթահարում էր սեռային անհամաչափության ընդգծված դրսևորումը, սակայն դա ավելի շատ ցուցադրական էր: Եվ իսկապես, ընդհանուր համակարգը իրականում գենդերային առումով մնում էր խտրական: Չնայած հռչակված իրավահավասարությանը՝ կանայք շարունակում էին զրկված մնալ կենսագործունեության շատ ոլորտներից՝ մղվելով սակավ վարկանիշային և ցածր վարձատրվող ոլորտներ (կրթություն, առողջապահություն, սպասարկում և այլն), ինչը հնարավորություն էր տալիս նրանց

¹ Տե՛ս **Գ. Գրիգորյան**, Գենդերային մշակույթի հիմնախնդիրները հայ իրավաքաղաքական մտքի պատմության մեջ, «Գենդերային հետազոտություններ-6», Եր., 2001, էջ 59:

համատեղելու աշխատանքային և ընտանեկան պարտականությունները:

Գենդերային տեսության արդի հայեցակարգի ձևավորման գործում մեծ նշանակություն ունեցավ է. Դյուրկհեյմի «Հասարակական աշխատանքի բաժանման մասին» աշխատությունը: Նա գտնում էր, որ քաղաքակրթության զարգացումը հանգեցրել է նրան, որ քաղաքակիրթ ժողովուրդների մեջ կինը տղամարդուց բոլորովին տարբեր գործառույթներ ունի: «Ստացվել է այնպես, որ սեռերից մեկը ավանդաբար տիրապետում է հուզական գործառույթներին, իսկ մյուսը՝ մտավոր»², նշում է հեղինակը: Սակայն Դյուրկհեյմը համոզված էր, որ երկու սեռերն էլ լիակատար չեն, ուստի փոխլրացնում են մեկը մյուսին, ինչը նրանց դարձնում է համերաշխ: Դա էլ նպաստում է հասարակության ներսում սոցիալական և բարոյական կարգուկանոնի հաստատմանը:

Ժամանակակից աշխարհում սեռերի իրավահավասարության սահմանադրական դրույթը դեռևս բավարար նախապայման չէ կանանց ու տղամարդկանց իրական հավասարությունն ապահովելու համար: Այն ենթադրում է նաև հավասար հնարավորություններ. այս դրույթը շատ երկրներ ամրագրել են իրենց սահմանադրություններում՝ իբրև հավասար իրավունքների իրացման երաշխիք: Սակայն այս դաշտում մենք ունենք բավականին անելիքներ:

Հայաստանում ստեղծվել է մի այնպիսի իրավիճակ, երբ առաջին հայացքից օրենքներն ընդունվում են ժողովրդավարական սկզբունքով. չեն խախտվում սեռերի իրավունքները, օրենսդրական դաշտը երկու սեռերին հավասար հնարավորություններ է ընձեռում: Հայաստանը վավերացրել է կանանց իրավունքների և ազատությունների պաշտպանությանը վերաբերող միջազգային պայմանագրերը: Իսկ պետական այրերի դիրքորոշումն ընդհանուր առմամբ հանգում է հետևյալին. իրավական տեսանկյունից ստեղծված են հավասար պայմաններ, և եթե կանայք ի վիճակի են, ապա կարող են կենսագործել իրենց ընձեռված հնարավորությունները:

Աշխարհում ներկայումս տիրապետում է այն պարզ ճշմարտությունը, որ կայուն և բարեկեցիկ հասարակություն ստեղծելու լավագույն երաշխավորը հասարակությունների զարգացման ժողովրդավարական ուղին է իր մասնակցային ավանդույթներով, որոնք ներառում են երկու սեռերին հավասարապես: Հարկ է նշել, որ տարբեր ոլորտներում սեռային իրավահավասարության հաստատման լրջագույն երաշխիքը նախ և առաջ քաղաքական կյանքում հավասարության հաստատումն է:

Որո՞նք են գենդերային իրավահավասարությունը խթանող գործոնները, ի՞նչը հատկապես նպաստեց կանանց սոցիալական դերերի և առաջին հերթին՝ քաղաքական վարքի անհամեմատ բարձրացմանը:

² Дюркгейм Э. Анализ социального статуса женщины и мужчины // "Основы гендерных исследований". М., 2000, с. 209.

Քաղաքական մասնակցության գործընթացում կանանց ներգրավման, նրանց դերի նկատելի բարձրացման և ընդհանրապես գենդերային իրավահավասարության հաստատման ճանապարհին, անտարակույս, խոշոր քայլ է համարվում կանանց քաղաքական և քաղաքացիական իրավունքներ ընձեռելը³: Այսպես, 1893 թ. Նոր Ջեյկանդիայում կանայք առաջին անգամ ստացան ընտրական իրավունք, որին անմիջապես հետևեցին եվրոպական երկրները՝ Ավստրիա (1902 թ.), Ֆինլանդիա (1906 թ.), Նորվեգիա (1919 թ.), Իռլանդիա (1922 թ.), իսկ Ֆրանսիայում, Իտալիայում, Հունգարիայում, Ճապոնիայում՝ 1945 թ., և այլն:

Մյուս կարևորագույն քայլը, որով ժողովրդավար երկրները գենդերային անհամաչափության հաղթահարման առումով հասան լուրջ նվաճումների, գենդերային արդարության սկզբունքի կիրառումն էր՝ իրական գենդերային հավասարության ապահովման համար:

Քաղաքական կյանքում սեռային հավասարությունն ասվածը շատերի կողմից կարող է ընկալվել որպես սեռերի միջև քաղաքական դերերի բաշխվածություն 50/50 սկզբունքով: Սակայն իրականում սեռային հավասարությունը հասարակության կողմից կանանց և տղամարդկանց ընդհանրություններին և տարբերություններին, նրանց զանազան քաղաքական դերերին տրվող հավասար գնահատականն է⁴:

Ինչպես «Գենդերային և կանանց առաջնության հարցերով հատուկ խորհրդակցականի գրասենյակ» գենդերային մեյնսթրիմինգն է նշում, «Գենդերային հավասարություն» նշանակում է հավասար իրավունքներ, պարտականություններ և հնարավորություններ կանանց, տղամարդկանց, տղաների և աղջիկների համար: Հավասարությունը չի նշանակում, որ կանայք և տղամարդիկ դառնալու են նույնը, այլ այն, որ կանանց և տղամարդկանց իրավունքները, պարտականությունները և հնարավորությունները կախված չեն լինելու այն հանգամանքից՝ ծնվել են նրանք տղամարդ, թե կին՝ ճանաչելով կանանց և տղամարդկանց տարբեր խմբերի բազմազանությունը: Գենդերային հավասարությունը ենթադրում է, որ հաշվի են առնվում ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց շահերը, կարիքները և գերակայությունները: Մարդկային զարգացման տեսանկյունից գենդերային հավասարությունը վերաբերում է մի այնպիսի միջավայրի ստեղծմանը, որտեղ և՛ տղամարդիկ, և՛ կանայք կարող են զարգացնել իրենց ողջ ներուժը և վարել արդյունավետ, ստեղծագործ կյանք՝ իրենց կարիքներին ու շահերին համապատասխան, և համարվել հարակայուն մարդակենտրոն զարգացման թե՛ նախապայման, թե՛ ցուցիչ⁵:

³ Տե՛ս **Steven Sridman, Nansy Fischer and Chet Meeks**, *Introducing the New Sexuality Studies*, London and New York, 2009, էջ 38:

⁴ Տե՛ս **Ն. Շվեդովա, Ս. Ջաբելինա**, *Գենդեր. ձեր հարցերը և մեր պատասխանները*, «Գենդերային հետազոտություններ-7», Եր., 2001, էջ 92:

⁵ Տե՛ս <http://www.un.org/womenwatch/osagi/conceptsanddefinitions.htm>

Այլ կերպ ասած՝ սեռերի հավասարությունը կանանց և տղամարդկանց հավասար կարգավիճակն է՝ մարդու իրավունքների և հնարավորությունների իրականացման հավասար պայմաններում: Այս ճանապարհին գենդերային արդարության սկզբունքը լուրջ խթան դարձավ հասարակության քաղաքական կյանքում իրական հավասարության հաստատման համար: Միաժամանակ կարևոր է գիտակցել, որ բոլոր կանայք և տղամարդիկ նույնական չեն, որ կանանց խմբերի միջև կարող են լինել ավելի մեծ տարբերություններ, քան կանանց և տղամարդկանց:

Նշված երկու կարևորագույն քայլերի իրականացումը՝ կանանց քաղաքացիական և քաղաքական իրավունքների ընձեռումը և կանանց իրավունքների ու ազատությունների կենսագործման համար գենդերային արդարության և հավասարության սկզբունքների առաջնայնության ապահովումը, լրջորեն խթանեցին ժողովրդավարական երկրներում կանանց քաղաքական գիտակցության բարձրացումը և իրական քաղաքական ներուժի բացահայտումը: Ներկայումս, փաստորեն, կասկածից վեր է, որ սեռերի հավասարության ապահովումը ժողովրդավարական քաղաքական գործընթացների արդյունավետության բարձրացման կարևորագույն բաղկացուցիչն է: Այն միաժամանակ լայնորեն ապահովում է սոցիալական բարեկեցությունը: Ժամանակին դեռ սոցիալ-ուտոպիստ Շառլ Ֆուրիեն էր նշում, որ սոցիալական առաջընթացի ապահովման գլխավոր սկզբունքներից մեկը կանանց իրավունքների ընդլայնումն է: Պատահական չէ, որ գենդերային անհամաչափության հաղթահարման առումով ամենաբարձր ցուցանիշներ արձանագրած Շվեդիայում 1970-ականների վերջերից նկատվող սոցիալական բարեկեցության աճը զուգորդվեց հասարակական կյանքի տարբեր ոլորտներում սեռային հավասարության սկզբունքի ներդրմանը:

Կայացած ժողովրդավարական երկրներն արդեն մի քանի տասնամյակ այն համոզումն ունեն, որ հասարակական կյանքի տարբեր ոլորտներում կանանց և տղամարդկանց սպասելիքներն իրենց մասնակցությունից թեև կարող են տարբեր լինել, բայց և այնպես ունեն գոյության հավասար հնարավորություն: Եթե օրենքները, ծրագրերը, ժողովրդավարական որոշումները պաշտպանում են բնակչության միայն մի մասի շահերը, ապա առաջանում է աններդաշնակություն, որը կարող է բացասաբար անդրադառնալ ամբողջ հասարակության վրա: Այդ պատճառով էլ Արևմուտքի մի շարք երկրներում հասարակական կյանքի, այդ թվում նաև քաղաքականության տարբեր ոլորտներում, պետության կողմից իրականացվում է համակարգված սոցիոսեռային մոտեցում: Աշխատանքի միջազգային կազմակերպությունն այս կասկածությամբ նույնիսկ սկսել է իրականացնել սեռային պլանավորում, որի առանցքային գաղափարը կանանց և տղամարդկանց յուրահատկությունների հաշվառումն է օրենսդրության, քաղաքական գործըն-

թացների զարգացման յուրաքանչյուր փուլում և ընդհանրապես երկրում իրականացվող ցանկացած այլ ձեռնարկումներում: Այս առումով հասկանալի է Սկանդինավյան երկրների, մասնավորապես Շվեդիայի փորձը⁶: Շվեդիայի պետական ապարատում արդյունաբերության, զբաղվածության և հաղորդակցության միջոցների նախարարությանն առընթեր գործում է գենդերային հավասարության հարցերով զբաղվող հատուկ ստորաբաժանում, որը գլխավորում է նախարարը: Նա պատասխանատու է կառավարության քաղաքականության համար՝ միտված սեռային հավասարության հաստատմանը: Իսկ կառավարությունն իր հերթին կոլեկտիվ պատասխանատվություն է կրում գենդերային քաղաքականության նպատակների իրականացման համար: Բացի այդ, յուրաքանչյուր նախարար պատասխանատու է ձեռնարկվող այն գործողությունների համար, որոնք պետք է նպաստեն տղամարդկանց և կանանց միջև հավասարության հաստատմանն իրենց հաշվետու ոլորտներում⁷:

Այսօր մենք ականատեսն ենք մեր հասարակության տարբեր ոլորտներում սեռով պայմանավորված խտրականության դրսևորումների բազում դեպքերի, որոնք կարծես կազմում են մեր «կվազի» իրականությունը: Մենք հաճախ ենք սիրում բոլոր հարցերում համեմատվել տարբեր երկրների հետ, նույնիսկ այնպիսիների, որոնք քննարկվող ոլորտում արդեն մի քանի տասնամյակներ միայն հաղթանակներ են գրանցում:

Ի՞նչ է տեղի ունենում Հայաստանում, ինչպիսի՞ն է Հայաստանի քաղաքական դաշտի գենդերային խճանկարը, ի՞նչ կարծրատիպեր են վերարտադրվում մեր քաղաքական համակարգում, և համանման բազում հարցեր այսօր էլ լուրջ քննարկման կարիք ունեն:

2013 թ. հունիսի 29-ից ուժի մեջ մտավ ՀՀ «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» Ազգային ժողովի կողմից մայիսի 20-ին ընդունված օրենքը (կամ այլ կերպ՝ գենդերային արդարություն հաստատող օրենքը):

Օրենքը սահմանում է կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման երաշխիքները քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային և հասարակական կյանքի այլ ոլորտներում և կարգավորում դրանց առնչությամբ ծագող հարաբերությունները: Այն ուղղված է կանխելու սեռային հասկանիչի հիմքով խտրականության բոլոր ձևերը: Օրենքով մասնավորապես ամրագրված է, որ հասարակական կյանքի բոլոր ոլորտներում ուղղակի և անուղղակի գենդերային խտրականությունն արգելվում

⁶ Տե՛ս **Հ. Շափաղաթյան**, Քաղաքական մասնակցության արդի հիմնախնդիրները, Եր., 2007, էջ 121:

⁷ Տե՛ս **Ի. Շկոլնիկով**, Գենդերային հավասարության Սկանդինավյան մոդելը, «Գենդերային հետազոտություններ- 2», Եր., 2003, էջ 127:

է: Ավելին, գենդերային խտրականության դեպքերը կարող են բողոքարկվել վարչական կամ դատական կարգով:

Իսկ ի՞նչ ունենք իրականում:

Համաշխարհային տնտեսական ֆորումի հրապարակած Գլոբալ գենդերային անհավասարության զեկույցում («Global Gender Gap Report 2013») Հայաստանը զբաղեցնում է 94-րդ տեղը՝ 2 կետով իր դիրքերը զիջելով նախորդ տարվա ցուցանիշին: Զեկույցում վեր են հանվում սեռային հավասարության իրավիճակային դրսևորումներ հետևյալ չորս հիմնական ոլորտներում՝ տնտեսություն, քաղաքականություն, առողջապահություն և կրթություն: Հատկապես շեշտվում է գենդերային անհավասարության և ազգային մրցունակության միջև կապը, քանի որ երկրի մրցունակությունը զգալիորեն պայմանավորված է նրանով, թե ինչ չափով են կանայք ներգրավված երկրի զարգացման գործընթացներում:

136 երկրներից կազմված ցուցակը գլխավորում են Իսլանդիան, Ֆինլանդիան և Նորվեգիան: Ռուսաստանը այս վարկանիշային աղյուսակում զբաղեցրել է 61-րդ տեղը, Վրաստանը՝ 83-րդ, Ադրբեջանը՝ 99-րդ, Թուրքիան՝ 120-րդ: Աղյուսակի վերջին հորիզոնականում է Եմենը: Զեկույցի տվյալներով, Հայաստանը «Կանայք քաղաքականության մեջ» ցուցանիշով զբաղեցնում է 115-րդ տեղը:

Նշենք, որ Հայաստանի դիրքերը այս զեկույցով տարեցտարի նահանջ են ապրում⁸: Առաջին անգամ մեր երկիրը ներառվել է այս վարկանիշային աղյուսակում 2007 թ.-ին՝ զբաղեցնելով 71-րդ տեղը (128 երկրների շարքում), 2008-ին Հայաստանը 78-րդ տեղում էր, 2009-ին՝ 90-րդ, 2010-ին՝ 84-րդ (135 երկրներից), 2012-ին՝ 92, իսկ 2013 թ. 94-րդն էր 136 երկրներից:

Եթե այս տեսանկյունից փորձենք դիտարկել իշխանության մարմիններում, հատկապես ընտրովի մարմիններում կանանց ցածր ներկայացուցչության պատճառները, ապա պետք է արձանագրել, որ «քաղաքականությունը կնոջ գործը չէ» կարծրատիպը շատ հաճախ պաշտպանություն է գտնում հենց իրենց՝ կանանց կողմից: Այդ են վկայում վերջին մի քանի ընտրությունների նախաշեմին կին ընտրողների շրջանում անցկացված սոցիոլոգիական հարցման տվյալները:

Գենդերային անհամաչափությունը ծայրահեղորեն է դրսևորված նաև տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում: Պատճառը սեռային հավասարության վերաբերյալ մարզային բնակչության ավանդապաշտությունն է և հասարակության հայրիշխանական ավանդույթները, որոնք, որպես կանոն, մայրաքաղաքից հեռու գտնվող բնակավայրերում առավել ուժգին են դրսևորվում: Գրեթե բացակայում է կանանց ներգրավվածությունը տեղական իշխա-

⁸ Այդ մասին տե՛ս **Ա. Ալեքսանյան**, Կանանց քաղաքացիավարական ներկայացվածության հիմնախնդիրները ՀՀ-ում, «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 144.6, 2014 (№ 3), էջ 36-46:

նության մարմիններում, ինչի հետևանքով բարձր բանականությամբ օժտված, մասնագիտական հարուստ գիտելիքների տեր, նախաձեռնող կանանց մի ստվար զանգված շարունակում է օտարված մնալ հրապարակային քաղաքականությունից: Ավելին, քաղաքային համայնքապետերի թվում կանայք չեն եղել և միայն գյուղապետերի թվում ժամանակ առ ժամանակ չնչին տոկոս են կազմել:

Դրա վառ ապացույցն են Գենդերային հետազոտությունների և առաջնորդության ԵՊՀ կենտրոնի և Արիզոնայի պետական համալսարանի Մելիքյան կենտրոնի և Սոցիալական փոխակերպումների դպրոցի հետ համագործակցությամբ 2014-2015 թթ. համար հայտարարված դրամաշնորհային ծրագրի շրջանակներում մեր հետազոտության արդյունքները: Հետազոտությունը կրում էր «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում կանանց քաղաքական մասնակցությունը. խնդիրներ և հեռանկարներ»⁹ անվանումը: Ծրագրի շրջանակներում հետազոտվել են տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում կանանց քաղաքական մասնակցության առանձնահատկությունները, ինքնաբացարկ հայտարարելու պատճառները: Ծրագրի նպատակն էր՝

- Ուսումնասիրել կանանց քաղաքական մասնակցությանն առնչվող, հատկապես ընտրությունները և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը, իրավասություններն ու լիազորությունները կարգավորող օրենսդրական դաշտը:

- Բացահայտել կանանց տեղական ինքնակառավարման մարմիններում թեկնածություն առաջադրելու, հետագայում ինքնաբացարկ հայտնելու պատճառներն ու շարժառիթները:

- Համեմատել ՏԻՄ ընտրություններում հաղթած կանանց և ինքնաբացարկ հայտնած կանանց կարծիքները՝ կանանց քաղաքական մասնակցության խնդիրների, ինքնաբացարկ հայտնելու և հարակից այլ հարցերի առնչությամբ:

- Վեր հանել ՏԻՄ-ին կանանց քաղաքական մասնակցությանն առնչվող առանձնահատկությունները:

Հետազոտության ժամանակահատվածում 915 համայնքներից միայն 18 համայնքի ղեկավարներն են եղել կանայք, ընդ որում՝ նրանք միայն գյուղական համայնքների ղեկավար են, քաղաքային համայնքներում կանայք որպես ղեկավար ներկայացված չեն:

2014 թ. մարտի 9-ի՝ 40 համայնքի ղեկավարների ընտրություններում գրանցվել էր 28 ինքնաբացարկ, որոնցից 4-ը կանայք էին (ինքնաբացարկների 13.8 տոկոս): Նշված 28 ինքնաբացարկից 23-ը (82.14 տոկոս) ապահովել էր մնացած միակ թեկնածուի հաղթանակը:

Կանանց քաղաքական մասնակցությունը խոչընդոտող գործոնները

⁹ http://ysu.am/files/Hasmik_Shapaghatyan_Final_Report_ARM.pdf

րից նշվում էին **կարծրատիպերը** և **տնտեսական գործոնները**:

Հետաքրքիր է, որ առավելապես շեշտադրվում էին ոչ թե կարծրատիպերը, որոնք համայնքի կին ղեկավարները հիմնականում համարում են հաղթահարելի, այլ գյուղերի տնտեսական վատ վիճակը:

Ուշագրավ էր, որ համայնքի կին ղեկավարները երբևէ չեն երազել դառնալ ղեկավար, համայնքի առաջնորդ, քաղաքական գործիչ, այլ դարձել են գյուղապետ, որովհետև

- նախկինում հայրը կամ ամուսինն են եղել գյուղապետ, որը հիմք ընդունելով՝ գյուղացիները վստահել են նրանց,

- եղել են գյուղի կրթված կամ կարողունակ ուժ, աչքի ընկել կա՛մ անձնական, կա՛մ հասարակական որևէ խնդրի հաջող լուծմամբ:

Այսպիսով, քաղաքական մասնակցության որոշումը խոչընդոտող պատճառները կարելի է պայմանականորեն խմբավորել ըստ 2 տիպի գործոնների.

- Սեռով պայմանավորված խտրականության դրսևորումներ կանանց քաղաքական մասնակցության նկատմամբ (անմիջական ազդեցության գործոններ):

- Ընդհանուր սոցիալ-տնտեսական, քաղաքական պատճառներ, որոնք խոչընդոտում են կանանց քաղաքական մասնակցությունը (միջնորդավորված ազդեցության գործոններ):

Նշված գործոնները պատճառ են դառնում պասիվ մասնակցության, անհետաքրքրության՝ քաղաքական մասնակցության նկատմամբ, իսկ հետաքրքրվածության դեպքում՝ ռեսուրսների ու հնարավորությունների կամ գիտելիքների ու հմտությունների պակասի կամ բացակայության:

Կանանց պասիվ քաղաքական մասնակցության պատճառներից շեշտադրվել են նաև

- կանանց անվստահությունը սեփական ուժերի նկատմամբ,
- հատկապես ընտանիքի, մասնավորապես ամուսնու, որոշ դեպքերում՝ հարազատների և ընկերների աջակցության բացակայությունը:

Կին ղեկավարներն ու փորձագետները նշում էին ամուսինների կողմից կանանց աջակցելու կարևորությունը քաղաքական մասնակցության որոշում կայացնելիս, կարևորում էին կանանց մասնակցությունը կրթության, վերապատրաստման ծրագրերին, ինչը դրական ազդեցություն կունենա կանանց ինքնավստահություն, սեփական ուժերի նկատմամբ հավատ ձեռք բերելու գործում:

Եվ այսպես, ընդհանրացնելով օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքները, կանանց «չմասնակցության պատճառները հետևյալներն են՝

- անհավասար մրցակցություն գնահատվող երևույթի հետևանք. նախ կանայք պարզապես ձևականորեն են մասնակցում ընտրություններին՝ այլընտրանք ապահովելով թեկնածուի համար, կատարելով

մարիոնետի դեր, ինչի պատճառով որևէ տեսլական, ծրագիր ունենալն անհիմաստ է,

- մյուս կողմից՝ այդ անհավասար մրցակցության պատճառները կանանց հնարավորությունների, գիտելիքների տեսլական կամ դիրքորոշում չունենալը կամ գրեթե չունենալն են:

Հետազոտության արդյունքների վերլուծության հիման վրա արվել են մի շարք առաջարկություններ (իրավական՝ ինստիտուցիոնալ և տեղեկատվական), որոնք հիմնականում ուղղված են հետևյալ խնդիրների լուծմանը.

- կնոջ քաղաքական մասնակցության վերաբերյալ կարծրատիպերի հաղթահարում, մասնավորապես ՏԻՄ մակարդակում, ՏԻՄ-ում աշխատող կին գործիչների նկատմամբ,

- կին առաջնորդի դրական կերպարի ստեղծում, մասնավորապես համայնքի կին ղեկավարների, ավագանու կին անդամների դրական կերպարի ձևավորում,

- կանանց մասնակցության խթանում հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, ռեսուրսների հավասար հասանելիության ապահովում,

- փոփոխություններ իրավական դաշտում՝ կանանց քաղաքական մասնակցությունը խթանելու և երաշխավորելու նպատակով,

- կանանց կրթական, մասնագիտական հմտությունների բարձրացմանն ուղղված աշխատանքներ, լրացուցիչ և շարունակական կրթության համակարգի ներմուծում և բարելավում:

Կանանց քաղաքական մասնակցությունը հատկապես տեղական ինքնակառավարման մակարդակում կարելի է խրախուսել և երաշխավորել նրանց հնարավորությունները հզորացնելու, տնտեսական, կրթական, սոցիալական պոտենցիալը վեր հանելու, հասարակության բոլոր ոլորտներում ընդգրկվածությանն աջակցելու միջոցով:

Ինչ վերաբերում է խորհրդարանում կանանց ցածր ներկայացուցչության պատճառներին, ապա դրանք բազմազան են, որոնք պայմանականորեն կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

- թերևս ամենագլխավորն այն է, որ թեև կին ընտրողները մեծամասնություն են հասարակության մեջ, սակայն նրանք ամենաքիչն են վստահում կին թեկնածուներին,

- կանանց շարժումը ձևավորման փուլում է և դեռ չի վերածվել ճնշման հզոր միջոցի,

- ի սկզբանե ավելի քիչ կին թեկնածուներ են առաջադրվում, այդ պատճառով էլ ընտրողը իրական հնարավորություն չի ստանում նրանց օգտին քվեարկելու,

- վերացված են քվտաները, չի իրագործվում «աջակցվող քաղաքականությունը», այսինքն՝ պետության կողմից ստեղծված չեն կա-

նանց ներկայացուցչությունն ապահովելու համապատասխան մեխանիզմներ,

- կանայք չափազանց ծանրաբեռնված են կենցաղային հոգսերով, այսինքն՝ կանանց քաղաքական ակտիվությունը խոչընդոտող հիմնական գործոններից մեկը նրանց կրկնակի ծանրաբեռնվածությունն է,

- կան հոգեբանական արգելքներ (պատասխանատվության վախ, թերարժեքության բարդույթ, ինչը սոցիալականացման սխալ գործընթացի հետևանք է),

- քաղաքական մշակույթի պատմական ավանդույթը, մեր հոգեկերտվածքը,

- բացակայում է ազատ մրցակցությունը, ընտրություններն ավելի ու ավելի են «փողային» բնույթ ստանում, իսկ կանանց ֆինանսական ռեսուրսներն անհամեմատ փոքր են,

- երկրի քաղաքական և տնտեսական կյանքի քրեականացումը,

- ընտրություններում մեծ դերակատարություն են ստանձնում կուսակցությունները, որոնք այսօր Հայաստանում հիմնականում «տղամարդկային» են:

Այս շարքը կարելի է շարունակել, ինչն արդեն իսկ մտորելու և իրավիճակը վերլուծելու, համեմատություններ անելու տեղիք է տալիս, ինչը ենթադրում է մի կողմից՝ գիտական, քաղաքական և սոցիոլոգիական լուրջ հետազոտություններ, մյուս կողմից՝ կարծրատիպային համակարգը մեղմելու և փոփոխելու համալիր միջոցառումներ:

Իսկապես, հայ հասարակությունն այսօր կարիք ունի բացահայտելու կանանց ներուժային հնարավորությունները հատկապես քաղաքականության բնագավառում, ժողովրդավարացման գործընթացներում կանանց՝ մինչ այդ անտեսված ռեսուրսը արդյունավետ օգտագործելու: Գուցե կանա յք իրենց առաջադրած լուծումներով կարողանան պատասխան տալ մարդկության առաջ ծառայած բազում հիմնախնդիրներին...

Վերջում մեջբերենք ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նախկին ղեկավար Տեո-Բեն Գուրիբաբի մի առիթով արտահայտած միտքը. «Մենք պետք է հարց տանք մեզ. կարո՞ղ ենք մեզ թույլ տալ անտեսել կնոջ ձայնը, հնարավո՞ր է, որ կանանց առաջարկած լուծումներն այն են, ինչ աշխարհը փնտրում է»: Սա իսկապես նշանակում է, որ առաջադեմ աշխարհում կանանց քաղաքական և քաղաքացիական մասնակցությունը դարձել է ժողովրդավարության կայացման էական գործոն:

Բանալի բառեր – գենդերային անհամաչափություն, աջակցվող քաղաքականություն, տղամարդկային մշակույթ, ժողովրդավարական ընթացակարգ, հավասար հնարավորություններ, սոցիալական դեր, ընտրական իրավունք, գենդերային արդարության սկզբունք

АСМИК ШАПАГАТЯН – Женщины в политике (стереотипы и современность). – Сегодня в разных сферах нашего общества всё ещё наблюдается множество случаев дискриминации по половому признаку. На первый взгляд принцип равноправия полов не нарушается, законодательство предоставляет обоим полам равные возможности. Однако правовая база и действительность сильно между собой расходятся. Политическая активность женщин – это, с одной стороны, главная закономерность постконфликтных обществ, а с другой стороны – ключевой показатель демократической системы. Социально-политическая ситуация в Армении такова, что женщины оттесняются на второй или третий план и рассматриваются как производные маскулинной культуры. Между тем они составляют более 53% населения Армении, политический потенциал этой социальной группы довольно велик, игнорировать его для такой страны, как наша, недопустимо.

Ключевые слова: *гендерный дисбаланс, маскулинная культура, демократические процедуры, равные возможности, социальная роль, избирательное право, принцип гендерной справедливости*

HASMIK SHAPAGHATYAN – Women in Politics (stereotypes and modernity). – Nowadays we witness many cases of sex-based discrimination in different spheres of our society that seem to compile our “quasi” reality. A situation created in Armenia from the first sight is seen as: the laws are adopted according to democratic procedures and the rights of sexes are not violated, also, it can be said that the legislation provides equal opportunities for both sexes. But in reality thousands of problems are accumulated that are emerging from the discrepancies between the reality and the legal framework. Women’s political activism and political participation are from one side an important consistency of a post-conflict society, from the other side it is the key indicator of a democratic political system. A social and political situation in contemporary Armenia is of a kind that regardless of women’s wishes they are pushed back to the second and third plans and are considered to be derivatives of masculine culture. Women constitute nearly the half of the world’s and more than 53% of Armenia’s population. Consequently, the political potential of this social group is quite enormous and it would be luxurious to ignore this fact in relation to a country like ours is. The above-mentioned issues are discussed in the article.

Key words: *gender imbalance, supportive policies, the masculine culture, democratic procedures, equal opportunities, social role, the right to vote, the principle of gender equity*

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ABOUT THE AUTHORS

1. **Մարութ Վարդազարյան** – քաղաքագիտության թեկնածու, դոցենտ, ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի վարիչ
Марут Вардазарян – кандидат политических наук, доцент, заведующий кафедрой международных отношений и дипломатии ЕГУ
Marut Vardazaryan – PhD, Associate Professor, Head of the Chair of International Relations and Diplomacy, YSU
2. **Աբրահամ Գասպարյան** – քաղաքագիտության թեկնածու, ԵՊՀ քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի ախիստենտ
Абраам Гаспарян – кандидат политических наук, ассистент кафедры истории и теории политологии ЕГУ
Abraham Gasparyan – PhD, Assistant Professor of the Chair of Theory and History of Political Science, YSU
Էլ. հասցե՝ abrahamgasparyan@gmail.com
3. **Տիգրան Եփրեմյան** – ԵՊՀ համաշխարհային պատմության ամբիոնի աւպիրանտ
Тигран Епремян – аспирант кафедры всемирной истории ЕГУ
Tigran Yepremyan – PhD student of the Chair of World History, YSU
Էլ. հասցե՝ yeptigran@gmail.com
4. **Գարիկ Քերյան** – քաղաքագիտության դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի վարիչ
Гарик Керян – доктор политических наук, профессор, заведующий кафедрой политических институтов и процессов ЕГУ
Garik Keryan – Sc. D. in Political Sciences, Professor, Head of the Chair of Political Institutes und Processes, YSU
Էլ. հասցե՝ garik_keryan@mail.ru, g.keryan@mail.y-su.am
5. **Արուսյակ Ալեքսանյան** – քաղաքագիտության թեկնածու, ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի դասախոս
Арусаяк Алексанян – кандидат политических наук, преподаватель Центра европейских исследований ЕГУ
Arusyak Aleksanyan – PhD, Lecturer at the Center for European Studies, YSU
Էլ. հասցե՝ arusyak.aleksanyan@yahoo.com
6. **Հասմիկ Շափաղաթյան** – քաղաքագիտության թեկնածու, քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի դոցենտ
Асмик Шапагатян – кандидат политических наук, доцент кафедры политических институтов и процессов ЕГУ
Hasmik Shapaghatyan - PhD, Associate Professor of the Chair of Political Institutions and Processes, YSU
Էլ. հասցե՝ shahas73@mail.ru

**«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ.
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆԴԵՄԻ 2015 Թ. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գասպարյան Աբրահամ – Ռազմաքաղաքացիական հարաբերությունների փոխակերպումը հետսառըպատերազմյան Թուրքիայում.....	3.17
Եփրեմյան Տիգրան – Վեստֆալյան համակարգը իբրև արդի եվրոպական քաղաքականության շրջադարձային հանգրվան.....	3.31
Էլիֆեզովա Անժելա – Ադրբեջանում հակասեմականության հիմնախնդրի շուրջ (ռուս.).....	1.17
Հակոբյան Էդուարդ – Հայաստանի և Ֆրանսիայի միջև առևտրատնտեսական համագործակցության առանձնահատկությունները (ռուս.).....	1.12
Նազարյան Հայկ – Իրաքի, Լիբիայի, Սիրիայի դեմ տեղեկատվական պատերազմների համեմատական վերլուծություն.....	2.13
Նավասարդյան Արման – Նոր աշխարհակարգի մարտահրավերները փոքր պետությունների դիվանագիտությանը.....	1.3
Շիրինյան Լևոն – Հայոց հարցի բավանյան շրջադարձը (երկրաքաղաքական էություն).....	2.3
Սուքիասյան Հայկ – Պարչ-Նաումանի «Միջին Եվրոպայի» հայեցակարգերը.....	2.21
Վարդազարյան Մարութ – ՌԴ արտաքին քաղաքականության ոչ նյութական ռեսուրսների իրացման հեռանկարները.....	3.3

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ալեքսանյան Արուսյակ – ՀՀ ԱԺ 2007 թ. և 2012 թ. ընտրությունների համեմատական կոռեկցիոն վերլուծություն.....	3.60
Գալստյան Խաչիկ – Քաղաքական երկխոսությանին հաղորդակցման առանձնահատկությունները.....	1.35
Դավթյան Արգինա – Հասարակական կարծիքի ձևավորումը ԶԼՄ-ում ՀՀ ժողովրդավարացման պայմաններում.....	1.59

Գարիպով Բալտաշ – Պահպանողականության տեսական ձևավորման և քաղաքական գաղափարախոսության վերափոխման գործընթացը (ռուս.).....	2.39
Շափաղաթյան Հասմիկ – Կանայք քաղաքականության մեջ (կարծրատիպեր և արդիականություն)	3.67
Մարգարյան Ալեքսանդր – Ընդդիմադիր կուսակցությունների ձևավորման գործընթացը և երկբևեռ քաղաքական համակարգի դրսևորումները Հայաստանում.....	1.68
Մարտյան Կնյազ – Քաղաքացիական մշակույթ հասկացության սահմանման շուրջ.....	2.49
Ստեփանյան Լիլիթ – ՀՀ-ում հասարակական կազմակերպությունների գործունեության առանձնահատկությունների մասին	2.60
Քալանթարյան Էդգար – Զանգվածային լրատվամիջոցները ՀՀ պետական կառավարման համակարգում	2.31
Քեռյան Գարիկ – Դեյվիդ Աթկինսոնի զեկույցը Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում (2005 թ.).....	1.49
Քեռյան Գարիկ – Հավաքական անվտանգության գաղափարի և պրակտիկայի էվոյուցիան միջազգային հարաբերություններում	3.48

Հայոց ցեղասպանություն-100

Հովսեփյան Արմինե – Հայոց ցեղասպանության ժխտողական քաղաքականության արդի դրսևորումները Թուրքիայում.....	1.25
--	-------------

ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Պետրոսյան Գեղամ – Ա. Ջ. Կիրակոսյան, ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և արևմտահայությունը (19-րդ դար - 1914 թ.):	1.77
---	-------------

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ * СОДЕРЖАНИЕ * CONTENTS

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ
INTERNATIONAL RELATIONS

Մարութ Վարդապարյան – ՌԴ արտաքին քաղաքականության ոչ նյութական ռեսուրսների իրացման հեռանկարները..... 3
Марут Вардазарян – Нематериальные ресурсы внешней политики РФ и перспективы их реализации
Marut Vardazaryan – Non-Material Resources of the Russian Federation and the Prospects of Their Realization

Աբրահամ Գասպարյան – Ռազմաքաղաքացիական հարաբերությունների փոխակերպումը հետսառքապատերազմյան Թուրքիայում..... 17
Абраам Гаспарян – Видоизменение в Турции военно-гражданских отношений после холодной войны
Abraham Gasparyan – National Security Discourse and the Constitutional-Political Status of NSC in Post-Cold War Turkey in the Context of Civil-Military Relations

Տիգրան Եփրեմյան – Վեստֆալյան համակարգը իբրև արդի եվրոպական քաղաքականության շրջադարձային հանգրվան..... 31
Тигран Епремян – Вестфальская система как поворотная веха современной европейской политики
Tigran Yepremyan – Westphalian System as a Crucial Milestone of Modern European Politics

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ПОЛИТОЛОГИЯ
POLITICAL SCIENCE

Գարիկ Քերյան – Հավաքական անվտանգության գաղափարի և պրակտիկայի էվոլյուցիան միջազգային հարաբերություններում..... 48
Гарик Керян – Эволюция идеи и практики коллективной безопасности в международных отношениях
Garik Keryan – The Evolution of the Idea and Practice of Collective Security in International Relations

Արուսյակ Ալեքսանյան – ՀՀ ԱԺ 2007 թ. և 2012 թ. ընտրությունների համեմատական կոռելյացիոն վերլուծություն..... 60
Арусяк Александян – Сравнительный корреляционный анализ выборов в Национальное собрание РА 2007 и 2012 гг.
Arusyak Aleksanyan – Comparative Correlation Analysis of Elections to the National Assembly of RA in 2007 and 2012

<i>Հասմիկ Շափաղաթյան</i> – Կանայք քաղաքականության մեջ (կարծրատիպեր և արդիականություն).....	67
<i>Асмик Шапагатын</i> – Женщины в политике (стереотипы и современность)	
<i>Hasmik Shapaghatyan</i> – Women in Politics (stereotypes and modernity)	
Տեղեկություններ հեղինակների մասին.....	79
Сведения об авторах	
Information about the Authors	
«Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն» հանդեսի 2015 թ. բովանդակությունը	80
Содержание журнала "Вестник Ереванского университета: Международные отношения, Политология" за 2015 г.	
The annual contents of the "Bulletin of Yerevan University: International relations, Political science " in 2015	

Հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից:
Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի:
Журнал выходит три раза в год. Издается с 2010 года. Правонаследник издававшегося
в 1967-2009 гг. журнала "Вестник Ереванского университета".
The Bulletin is published thrice a year. It has been published since 2010. It is the successor
of "Bulletin of Yerevani University" published in 1967-2009.

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1, 107
Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1, 107
Address: 1, 107, Alek Manoukian str., Yerevan

Հեռ. 060 710 218, 060 710 219

Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am
Վայր՝ ysu.am

Վերստուգող սրբագրիչ՝
Контрольный корректор
Proofreader

Գ. Գրիգորյան
Г. Григорян
G. Grigoryan

Համակարգչային ձևավորում՝
Компьютерная верстка
Computer designer

Մ. Աբգարյան
М. Абгарян
M. Abgaryan

Ստորագրված է տպագրության 10. 12. 2015:
Տպարանակ՝ 100: Չափսը՝ 70x108 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
Տպագրական 5 մամուլ: